

Բնագրի

ԱՂՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆԱԳԻՆՆԵՆ ԵՎ ԱՐՈՒՆԵՍԻ

Բ. ՏԱՐԻ 1963

Յ Ո Ւ Ն Ի Ս

6

باكين
 مجلة شهرية ، أدبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزاجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԲԵՍՏԻ

ՎԱՐԻՑ ԽՄԲԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԲԱԳԻՐՆԵՐ
 ԵԳ. ՊՅՑԱՋԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԳԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՆԱՐԴ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԻ
 E. D. BOYADJIAN
 B. P. 1153, BEYROUTH - LIBAN
 Հեռաձայնի թիվ 256078

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Պ. ՍՆԱՊԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Վ. ԳԵՆՐԳԵԱՆ
- ԱՐՇԻ
- ՀՐԱԶ ԶԱՐԳԱՐԵԱՆ
- ՄԻՔԱՅԷԼ ԹԱՐԻԶԻԱՆ
- Բ. ԿՈԱՆԵԱՆ
- ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ
- Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
- ԱՐՄԷՆ ՏՕՆՈՑԵԱՆ
- Լ. ՄԿԻՏՉԵԱՆ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- ԵԳ. ՊՅՑԱՋԵԱՆ
- Բ. Փ.
- Լ. ԳԱՐՄԷՆ
- Բ. ԹԱՇԵԱՆ

Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ռ. ՅԱՐՐ, ԹԻՒ 6

ՅՈՒՆԻՍԿՍԻ 1963

Պ.ՅՐՈՒՐ

Au Revoir

Պ. ԱՆԱՊԵԱՆ

Քօթ ա՛նգիւր, Ֆրանսահայ երիտասարդներուն բանակազայրը պիտի երթայի, երիտասարդութեան նուիրուած փառասօնին մասնակցելու: Ուշ քնացայ կրկին ու երբ աչքերս բացի ընդամէնը քսան վայրկեան մնացած էր ինձի Այն Միշէլէն Լիոն կայսրանը հասնելու համար: Ամիսը Օգոստոս էր, արձակուրդի համար ամէնէն աւելի դնահատուած ժամանակաշրջանը: Թերթերուն կտրմած վիճակազրուեցեամբ մէկ ու կէս միլիոն մարդ բացակայած էր Փարիզէն, այսուհանդերձ առաւօտեան խճողումը կանխող ամիսները կը յիշեցնէր դարձեալ: Խուճապ մը՝ բոլոր ուղղութիւններուն վրայ: Խուճապ մը՝ իմ մէջս: Երբ յետին վակոնին մէջ ինքզինքս նետելով շունչ

մը ստի, զգացի որ յոգնութիւն մը կը ճնշէ վրաս ու նոր անցած անհանգստութիւն մը կը վերանորոգուի մարմնիս մէջ: Ընթացող շրջակաքին մէջ պէտք եղաւ տակաւին աստիճանք վակոն տարածութեան մը վրայ քաշել տեղ հասնելու համար: Նուազ տաժանեղի չեղաւ այլ ճամբան: Բայց յոգնութիւն, աղտուկ, ջղայնութիւն, ամէն ինչ մոռցայ, երբ թիւս դասայ: Թի՛ւս:

Ի՛նձացս՝ պատուհանին մօտ, յիսուներ անց մարդ մը կար, կողքին՝ իրեն տարեկից երեք կիներ, ձախիս՝ երկու պառաւներ եւ աջիս՝ չքնաղ աղջիկ մը: Երկար ճամբաներու յատկացուած շրջակաութ մըն էր մերը, մինչեւ Մարսէյլ կանգ պիտի առնէր միայն երեք տեղ:

եթէ նոյնիսկ առաջին կայսրանը իջնէր հարեւանուհին, յոռեզոյն պարագայ, զարձեալ չորս ժամ կողք կողքի պիտի ըլլայինք: Չորս ժամ Ֆրանսացի աղջկայ մը կողքի՞ն...

Միւսներուն պէս, ճամբորդող Յըրանսացիի մը պէս տեղադրուեցայ ու լրջացայ: Ընդհանուր լուսինն մը կար վահոնին մէջ: Կը թուէր թէ ճամբորդները կապ չունէին իրարու հետ: Քննական ակնարկէն հետեւող այս ենթադրութիւնները կը չքացնէին արդէնքները եւ մըտքիս մէջ կը շեշտէին քովինիս հետ արագորէն բարեկամութիւն հաստատելու հաւանականութիւնները:

Փարիզէն ելլելէ առաջ՝ ընթերցարան մը եղաւ մեր վահոնը:

Փարիզէն դուրս՝ հանդիսասրահ մը: Քիչ մը աւելի ուշ, սմանք ննջարանի վերածեցին զայն:

Մարդը, տարօրինակ երեւոյթ - ո՛չ կը կարդար, ո՛չ դուրսը կը նայէր, ո՛չ ալ աչքերը կը դռցէր: Սեւեռարիք մեր կողմը կը նայէր միշտ ու ակնարկին խտուրթիւնը նոյն աստիճանին վրայ կը պահէր: Հո՞գոս, Այստեղ Ֆրանսա է, մտածեցի: Ամէն մարդ ազատ, ազատութիւնը՝ պայման:

Հարեւանուհիիս սիկառէթ մը երկարեցի:

Գլուխը թօթուեց:

Քիչ մը ետք «Յիկարո»ի առաջին էջին վրայ երեւցած ծաղրանկար մը յանձնեցի ուշադրութեան:

Դէմքը միւս կողմ դարձուց:

Շողեկառքը պզտիկ գետի մը վրայէն անցաւ: Գետին անունը հարցուցի: Խոժոռեցաւ:

Իր ցրտութիւնը չվիրաւորեց զիս: Ձիս անհանգստացնողը իմ խօսքերուս հետեւող դիմացի մարդուն անհանգիստ շարժումներն էին: Հո՞գոս, մտածեցի կրկին ու անգամ մը եւս զննեցի իր աղուոր մարմինը: Սրտիս մէջ չես պիտեք ինչ ապրում մը կը զարգանար: Ինձի կը թուէր թէ կրնայի սիրել այդ անծանօթ աղջիկը: Իր դիմաց, կրնայի, մէկ վայր-

կեանէն միւսը դաւածանել ուրիշ աղջկայ մը: Անոր մասին խօսած պահուս բառերս կրնային նոր բովանդակութիւն մը ստանալ: Տաքնալ, Լեցուել: Յորդիլ: Կրնայի իր սեւ մազերուն զովքը հիւսել, երգել դէմքին թուր ճառագայթը եւ զոհարերուիլ իր վայրագ աչքերուն:

Նայեցայ իրեն կրկին ու իր լուսթեան առջեւ մէկէն Գուրեանը յիշեցի: Գուրեանին մէկ զերթուածը, զերթուածին ոճը - Եթէ խօսի, կ'ըսէի, Հայաստանի աղբիւրներուն կարկաչը պիտի լսեմ իր բառերուն ընդմէջէն, Եթէ ժրպարտի՝ Հայաստանի արեւուն ջերմութիւնը պիտի զգամ, Եթէ քիչ մը մօտենայ՝ Հայաստանի ծաղիկներուն բոյրը պիտի լըռայլէ ինձի: Եթէ խօսի, ժպտի, մօտենայ: Ձայնը, ջերմութիւնը, Եթէ մօտենայ, բոյրը, ձայնը, բոյրը, բո՛յրը...

- Կը թուի թէ օրիորդը արձակուրդի կ'երթայ, ըսի ժպտելով:

Մէկէն աչքը միւս կողմ դարձուց, արհամարհանք մը ձգելով:

- Շատ տխուր կ'երեւաք, յարեցի պահ մը ետք:

Շտապով զիրք մը հանեց պայուսակէն ու թաղուեցաւ մէջը:

Ֆրանսացի աղջիկ, ըսի մտքէս, յիշեցի չորս-հինգ ամիսներու ապարդիւն ճիւղերս ու կրկին հայհոյեցի բախտիս: Ս', Ֆրանսացի աղջիկը անդրժոգեան տղոց շրթներուն: Ժպտիս՝ վիզը կը փաթթուի: Առաջարկ մը ընես՝ բան մը կը հրամցնէ: Հարցում մը ընես՝ համ մը կը ձգէ: Ֆրանսացի աղջիկը, անդրժոգեան դիւցազներդուներու այս շուայ մատակարարը: Բայց իմ ուխտագնացութիւնս ուխտագնացութիւնն եղաւ: Իմ պարագայիս՝ Փարիզը մնաց. միշտ իր անցեալի հմայքին մէջ: Հին պատմութիւն մը: Հին ոսկեղար մը: Իբրև պատմութիւն պեղեցիկ, իբրև իրականութիւն անպատմելի: Ինձի հանդիպած մարդոց պէս բան մը: Ըսկատազիրը այնպէս սահմանած է, որ բացակայ կեանքի մը առջեւ զոնեմ ինքզինքս: Ամէն ինչ անցեալ ըլլալէ ետք հանդիպած է կարծես



ինձի: Պատմութիւն մը, հեռուոր անցեալ մը, հին ոսկեդար մը բոլոր մարդոց ժամ, քաղաքներու մէջ: Անբաւարար ներկայ մը, անբաւարար ներկայութիւններ ու հին պատմութիւն մը, հին ոսկեդար մը: Կը կարծէի, թէ գեղեցիկները աւելի շատ պիտի ըլլան հոս, մուրացկանները աւելի քիչ, ազնուութիւնը՝ պայման, խնայողութիւնը անխուսափելի, ազլիկները աւելի մատչելի: Մ'ի դէմ ահ, կ'ըսէի յետոյ իւրովի, թերեւս իմ անտանիս, զտանիս, իմ բախտիս պէս չէ իրականութիւնը, ուրիշներուն ըսածին պէս է իրականութիւնը, Փարիզը՝ Փարիզ է, եւ Փրանսացի աղջիկը՝ Փրանսացի աղջիկ:...

Ճամբուն երկու կողմին վրայ բարձրացող, վազող, տարածուող լեռները, դեռերն ու դաշտապարտները այս արագութեան մէջէն տեսած էի հեղ մը եւ երկրորդ անգամ, նոյն պայմաններուն մէջ, շահեկան չէին այլեւս: Նորէն աչքէ անցողի անուտեան թերթերը եւ ապա նոր կարօտով մը բացի «Սիգիֆի Առասպելը»: Այդ օրիորուն հետս պատող գիրքը այդ էր, երիտասարդ Քամիւի կորուստարէր այդ գեղեցիկութիւնը: Կարողացած, ընդզոյժ, նոթագրութիւններով լեցուցած էի լուսանցքները, բայց հետս կը պտտցնէի զայն դարձեալ, երկար ճամբորդութիւններու ընթացքին անհրաժեշտ կը զգայի անոր ընկերութիւնը: Ճամբորդութեան ատեն ժանաւանդ: Ազմուկներու մէջ: Օ, մեծ գիրքերը, վերլուծող, թարգմանող, արկածախնդիր մտքերուն ձգած համը մեծ ազմուկներու ընթացքին: Կարողացուած գիրք մըն էր այս «առասպելը», որ ծանօթ ճամբու մը չէր նմաներ: Քամիւի գիրքերը: Գաղտնապարտները: Լեռները: Գազաթները ու Սիգիֆը՝ որ ճակատադրական ժայռը կը բարձրացնէ դապաթն ի վեր: Սիգիֆը՝ բեղմնաւոր յամառութիւն: Դիւցազներդութիւն մը: Փիլիսոփայութիւն մը ամբողջ: Աստուածներուն կամքը բեկանելու հզօր սրբույթ: Գիտար բաներու ճա-

շակը տուող մեծահրաշ բանաստեղծութիւն:

– Կարդացած էք այս գիրքը, դո՛ւնցի անդուսպ խանդավառութեամբ:

Աչքը միւս կողմ դարձուց նորէն:

Չարունակեցի: Չեմ գիտեր ինչու յանկարծական խզում մը զգացի մէջս: Արդէն ժամանակ ալ չէր մնացած ինձի: Մէկ երկու ժամէն Մարտէլլ կը հասնէր շոգեկառքը: Գրեւիք քանի մը երկտող ունէի: Մտածեցի անոնց մասին: Փորձեցի անմիջապէս դրել: Գրեցի մէկ երկու, երեք կարճ նամակներ: Գրելու ատեն կը զգայի իր անհարկը թուղթին վրայ, բայց այլեւս շահագրգռութիւնս կորսնցուցած էի: Մնաց որ իր լուս հետաքրքրութեան առարկան եւ չէի, մեր գիրն էր անպայման, իր աչքերուն տոջեւ շարունակ այդ տարօրինակ բեւեռագիրը:...

Հասանք կայարան ու մեր բաժանմունքին բոլոր ճամբորդները սկսան իջնելու պատրաստութիւններ տեսնել: Ինքն ալ: Կինները աճապարհեցին, անոնց ետեւէն մարդը շարժեցաւ ու մարդուն ետեւէն՝ ինք: Անցած ատեն փոխուած բան մը նշմարեցի դէմքին: Ինձի թուեցաւ թէ կը ժպտի: Գրան մօտ հասած ատեն կանգ առաւ մէկէն, եւ դարձաւ, զուարթացաւ ու աչքերուս մէջ շեշտակի նայելով զուարթօրէն յարեց:

– Au revoir...

Օրուս՝ ինձի՝ Փարիզէն մինչեւ Մարտէլլ, ամբողջ ութ ժամ միասին եղանք, ութէն աւելի փորձեք ըրի որ բերանը բանայ, բարեւի պէս բան մը ըսէ, լստ մը շնջայ, բայց անկարելի եղաւ միակտուր իր անտարբերութիւնը խախտել ու հիմա, վերջին պահուն առաջին բառը՝

– Au revoir...

Կը նայէի իրեն ու բառը կը կրկնուէր մտքիս մէջ: Իր պայցիկ հասակը պարային զգաստ ընթացքով մը կը յառաջանար քարափին վրայ, au revoir. սեւ մազերը միայն մնացին տեսողութեանս

մէջ, au revoir, տեսողութենէս ամբողջովին ջնջուեցաւ, au revoir բախտ, au revoir կորսուած արիթ, կրկնեցի ու զլուսս շարժելէն բռնեցի իմ ճամբաս:

•

Հարաւային չքնաղ ափերէն վերադարձիս՝ Փարիզ հասած նամակներու կարդին՝ այնպստ առաջողի մը կողմէ կանաչ պահարանով ու Ֆրանսերէն դըբուած երկու էջոց ծաւարուն նամակ մը պտայ, ատրապարութիւնը՝ Մելինէ: Առանց մականունի: Մելինէ՛: Մելինէ՞, ժտածեցի կարդալէս ատաջ, Մելինէ՞ կրկնեցի մէկ երկու անգամ ու յարձակեցայ նամակին վրայ: Երբորդ տողին վրայ ճանչցայ նամակագիրը ու պուտու պահանջը մը դգացի կրկին: Ինքն էր, շոգեկատրի աղջիկը: Մելինէ՛: Բնազգս չէր խորած գիս, աչքերս ճիշդ դատած էին: Տեղաւորուած էր արդէն երեւակայութեան մէջ ու իր պատկերին դիմաց սիրտս, միտքս, արիւնս, ամէնքը մէկ սկսան աշխատիլ: Կը կարգայի եւ տողերուն մէջէն կարծես կը լսէի յանկերբը:

- Եթէ խօսի, Հայաստանի աղբերաներուն կարկաչը պիտի լսեմ բառերուն ընդմէջէն, եթէ ժպտի՝ Հայաստանի արեւուն ջերմութիւնը պիտի զգամ, եթէ զիչ մը մօտենայ՝ Հայաստանի ծաղիկներուն բոյրը պիտի շոտայէ ինծի: Ձայնը, ջերմութիւնը, բո՛յրը...

Կը կորդայի: Ձէի հաւատար աչքերուն: Կուզէի հաւատալ իր բառերուն: Ուրախութիւն: Յուզում: Եփոթ: Լոյս: Երգեկանութիւն մէջ, բարեկամներու նամակ դրած պահուս, հասցէս միտքը պահած էր ու կը նկարագրէր շոգեկանքին մէջ ապրած իր օտարապալ: Դիմացը նըստող մարդը հա՛յրն էր: Հայրը կողմակերպած էր այդ ճամբորդութիւնը: Կնոջ մահէն ետք աղջկան հանդէպ խոտացած մարդ մը, արջիկը սիրած՝ տղայէն հեռացրնելու համար քաղաքէ քաղաք ճամբորդութիւններու ձեռնարկող մէկը իբրեւ կը ներկայացնէր հայրը: Քիչ մը

բիրտ, զիչ մը նախանձոտ: Անոր ներկայութեան չէր ուզեր խօսիլ ինք: Ձէր խօսած: Կը յուսար որ օր մը կրկին կը հանդիպինք: Au revoir...

Պաղարհուութիւնս չսփոյ մը վերադրտնելէ ետք՝ նորէն վերաւորանք մը պացի մէջս: Ո՞վ էր վերջապէս այս աղջիկը: Այս ի՞նչ խաղ էր վերստին: Հասցէն ծածուկ պահելու խորամանկութիւնը եւ մակնունը խորամանկորէն թաքցրնելու ծածկամտութիւնը չէին բաւեր կարծես հարկ եղած վերաւորանքին համար, եւ ահա սիրած՝ տղուն մտախ խօսելով՝ անծածոթ թշնամիի մը զէժ առտիւթիւն մը գրգռելով, նոր տառապանք մը կը յաւելու սրտիս:

Այտուհանդերձ, իր նամակէն ետք, երկար ատեն ոչ առանց իրեն երազ մը կը յիշեմ եւ ոչ ալ արթնութեան պահերուս առանց իրեն ժամ մը մը գեղեցկութիւնը, իմ կրած վերաւորանքներս, իր ստեղծած խորհուրդը, իմ յուսահատութիւններս արթուն կը պահէին իր պատկերը, ստիպելով որ փնտռեմ զինք փոշոցին մէջ, Մեթրոյին մէջ, սրճարաններուն ու թատերադահլիճներուն մէջ, ուր որ երթամ, ուր որ աչքերս հանդիպին, պատուհաններու ու պատշգամներու մէջ, անձկութեամբ, կարօտով, սպասելով իր յուսահատական վերայտնութեան, փոզոցին մէջ, պատշգամներու վրայ:

•

Անան սկիզբը Փարիզ ուղողեցաւ նոր յայտագիրներով: Սկսաւ գլուխ դարձնող կեանք մը: Ժամանակը կարճացաւ: Կեանքը սկսաւ կտրծ թուիլ: Սկսայ եւ ալ վազել:

Յետմիջօրէի մը նորէն վազքի մէջ էի, Սէն-Միշէլ պողոտային վրայ, Սորպոնի ուղղութեամբ, երբ Latin սրճարանին առջև անունս լսեցի: Ծանոցայ ձայնովը: Թորգոմն էր: Հետաքրքրական երիտասարդ մը, Հանդիսութեան մը ընթացքին ճանչցած էինք զիրար: Ապս, ուրիշ տեղ, գլուխ գլխի ժամեր անցուցած հետը, Հանրային շահադրդու-

Թիւններ ունէր: Կարծիքները բանաձեւելի
դիտէր: Տաք խառնուածք մը:

- Հո՞՞՞՞՞ն էր բանին, հարցուցի
ժողովուն:

Ժողովեցաւ և ինք: Բնականոն շթուե-
ցաւ ինձի: Ստիպեց սուրն մը առնել:
Բացուեցաւ: Իր մտերիմ կեանքը անձա-
նօթ էր ինձի: Թօսեցաւ:

Երեք ամիսներէ ի վեր չէր տեսած
սիրած աղջիկը: Պիտի զար շուտով: Փա-
ժադիր էին հոգ: Տարօրինակ դտայ զինք:
Ըրած հարցումներուն պատասխանին չէր
սպասեր: Կը ծիւտէր: Անկապ խօսք
մը: Դիմացի մայթը կը քննէր: Կր ծիւտէր:

- Ահա՛, պոռայ մէկէն: Փորձեց
ժպտիլ: Տժգունեցաւ աւելի:

Լիւքսէնպուրկի գառիթափն ի վար,

դէպի Սէն-Միշէլ պողոտան հասող բազ-
մութեան մէջէն մէկը զատուեցաւ և Փը-
րանսացի աղջկան յատուկ ոտոտտում-
ներով սկսաւ մեր ուղղութեամբ առաջա-
նալ: Մէ՛կը: Աստուած ի՞մ: Սիրտս տն-
դափոխուեցաւ կարծես: Մեր աչքերը ի-
րարու հանդիպեցան: Ինք զոյնը փոխեց,
ևս խելագարեցայ կարծես: Վաշէլու,
փախելու պէտք մը զգացի մէկէն: Ողջա-
գուրուեցան: Ձեռքը ինձի երկարեց:

- Au revoir, աղաղակեցի յանկարծ
սառնց երկարած ձեռքը սեղմելու, au
revoir կրկնեցի աւելի ուժգին, au
revoir, ու ինքզինքս նետեցի պողոտա-
յին մէջ:

Գ. Ս.

Փարիզ



ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ՍՈՆԱԹ

ՅՐՈՒԱՆ ՄԸ ՀԱՄԱՐ



Արեաշոյ առաւօտ -
 Եթէ գարթումն աչքերուս
 Ողբումէր կեանքն երկնաւոր
 Վանքի մը լուս անծանօթ
 Կամարներուն տակ մթին
 Խունկի բուրմուռն մը քարերէն պիտի գար
 Անձրեւներով քաղցրացած
 Բայց քարերէն աւելի
 Կարծր եղան մարդոց սիրտերը բոլոր
 Եւ արցունքով լեցուցին սիրտըս ահա՛

Աշխատանքն իսկ չարքեցուց
 Հագիս լոյսի գինիով
 Մտտեաններէն ալ շրթունքներս ըմպեցին
 Ասկի դառնութիւն մահաբեր
 Ու բարեկամ ձեռքերու մէջ ես տեսայ
 Զիս հարուածող դաշոյնը չար նախանձի
 Եւ շուրջս մութ ամայութիւնը պատեց
 Երբ հեծեցի վշտահար

Վիշտը միայն չխարեց
 Սուգերը տակ հաւատարիմ մնացին
 Մահակարօտ իմ հագուելու
 Թօշնած վայրդերը միայն
 Աշնանային անձրեւներուն տակ քաղուած
 Զարդարեցին առանձնարանս մտայլ
 Ուր հսկումի նրագիս մէջ կար այնքան իւր
 Որքան արցունք յուսախնդիր աչքերէս

Այս օրն անցաւ սրտէս անդարձ տանելով
 թուս մը ծաղիկ գոր չկրցայ առագել
 Արշալոյսի ցօղերով
 Ազուտը երազ մը ջերմօրէն կազմուած
 Արիւնիս մէջ ուր վաղուց
 Շիջած է հուրը պարմանի տարիքին
 Յայս մը չքնազ աւելի
 Քան պաշտրուած մարմին մը տեմչ խնկավառ
 Աստեղային իսկութեամբ

Ի գուր ի գուր վարձեցի
 հօտք մը յղկել
Հրածեշտի բառ մը վերջին
 Որուն մէջ էին կարօտներու ցամ ըլլար
 Վերքը խորունկ երբ գարուն կար սրտիս մէջ
 Եւ շրթներուս վրայ մեղուն ըզճանգի
 Կը փակէր թեւն իր խունկերով ծանրաբեռն

Այս օրն անցաւ ափսո՛ս առանց խոտտումի
 Բայց երգումներն իսկ բոլոր
 Մրանցուած սիրատուչոր շրթներէ
 Դրժուեցան ծիծաղով

Ահա կ'անցնի մեռելակառքն այս օրումն
 Դուզազը սեւ ճիւղը սեւ
հետեւող
 Ձկայ - ճամբում եզերքը կին մը կու լայ
 Արշալոյսէն ի վեր սուգի հագուտով
 Կին մը որ սերն էր
Տառապանքը սիրոյ

Այս օրն եղաւ անյիշատակ գերեզամն
 Ուր մնջեցեալն է հոգիս :

Ա. Ե.



ՎԱՐՈՒԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ

ԱՅՍ ՈՐՔԱՆ ԳՈՒՑ ԱՆՅԱԶ

Այս ո՛րքան շուտ անցաք, տարիներ,
Ձեր ետին ձգած վիշտ, ձգած սէր,
Ձգած խոր հագար վէրք, հագար յուշ,
Հագար վարդ, կարմիր վարդ, հագար փուշ:

Ո՛րքան շուտ անցաք հուր տարիներ,
Հեզանազ սահեցաք գերթ ստուեր,
Ու ձեզի հետ տարիք ամէն բան,
Ձեր ետին ձգած վիշտ, վէրք միայն:

Ու տայիք, տարիներ, ձեզի հետ
Ե՛ւ գարուն, ե՛ւ երազ արծաւէտ,
Անգարուն, աներազ կեանքն է սին,
Ետ դարձէք, տարիներ, վերստին:

Ե՛տ դարձէք, ե՛տ դարձէք վաղեմի
Տարիներ երազի ու լռյսի,
Ու անդորր օրեցեք սիրտս մորէն,
Պայքարի երգերով ձեր ամէն:

Այս ո՛րքան շուտ անցաք, տարիներ,
Ձեր ետին ձգած վիշտ, ձգած սէր,
Ձգած խոր հագար վէրք, հագար յուշ,
Հագար վարդ, կարմիր վարդ, հագար փուշ...

Գուէնոս Այրէս, 20-10-62

ՄԱՆԱԿՆԵՐ

Երբ կը նայիմ ձեր աչքերուն բացկտուն
Կամ կ'ունկնդրեմ ձեր երգերը պարզ, սիրուն,
Մանուկնե՛ր, միշտ բարի, միշտ ցնծագին,
Կը մանկանամ ձեզի հետ ես ալ կրկին:

Մանուկներ սեւ աչքերով կամ կապտաւուն,
Դուք մեմն էք այգիներու միրգերուն,
Միշտ քաղցր, համեղ, միշտ տարօրէն հոտեւան,
Ինչպէս վարդերն, ինչպէս յասմիկ ու շուշան:

Դուք այգն էք վառ ցայգին առջեւ ճաճանուղ,
Պարակներու դուք թռչուններն էք երգող,
Մահն անգոսնոց յաւերժութեան նոր ճամբան:

Մանուկնե՛ր, երբ կը նայիմ ձեր յաղթանակ
Անէն յառնող գեղումներուն, կը յիշեմ
Ձեզմով անցեալս իմ, մանկութիւնս համօրէն...

Գուէնոս Այրէս, 15-1-63

ԱՐՇԻ

ԹԱԴԵԻ ՎԱՆՔԸ...



Նայում եմ լո՛ւռ մկարմերում սուրբ ու անմահ այն կոթողին,
Որ դարերի լռյոթի հետ լռյա է սփռել՝ կառչած հողին, –
Մտորում եմ, թե որքա՞ն սիրտ, որքա՞ն աչքեր թացացան հե՛ք,
Ցաղթ սիւների ու փռչեպատ կամարներում, ինչպէս երեկ...

Ի՞նչ ձեռներով ջղագալար քրտինք սրբեց յոզմանակատ,
Ու քանդակեց, ոգի տուեց Սրբութեանը արիւմակաթ,
Շունչ ու հոգի դրեց քարին ու մարմարին աստուածափառ,
Ու յաւերժեց «Որդի Աստու» խորաններում ոսկեբարբառ...

Մինչ կաթում էր լռյոթ երկնից, բոցավառում տամարք սուրբ,
Քացում, փակում պատարագի վարագոյրը վեհ, ալեծուփ,
Ջինջ հաւատով խաղաղութեան խայն էր օրհնում, խնկարումում,
Աղօթքներով ցօղակալում կարօտ աչքեր ու թերթերումք...

Դեռ այսօր էլ գմբեթներդ ու դասերդ քանդակազարդ՝
Պահած փառհիդ շունչըն անմահ, մրրկահար ու ալեգարդ,
Ներշնչում են մեզ հոգեբով՝ նո՛ր ձեռներով մտքբառաբուր՝
Գալ յառնելու քեզ դամբանից, նորոգելու գանդ թափար...

Թաւրիզ



ՀՐԱԶ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՃԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ ԻՒՐ

$$E = MC^2$$

Այն pathognomonique յատկանիչը որ խորապէս պիտի զատորոշէ ապագայի, նոյնիսկ մօտաւոր ապագայի արուեստագէտը, անցեալի բոլոր արուեստի գործաւորներէն, անոր յղացումներուն երանգն է ուր, միահեծան, կենսարանակամը պիտի տիրապետէ, ոչնչացնելով բոլոր միւսները, զանոնք դարձնելով անկար: Կենսարանականին, բնախօսականին միջամտութիւնը բոլորովին քաջակայ է նաեւ անցեալի բոլոր իմաստասէրներու գործերուն, պատուէրներուն մէջ: Հարիւրաւոր դարեր, իմաստուններ եկեր են մարդկային բարդանբրին մեքենային բաներ մը կը պարտադրեն, շատ ծանր բաներ, առանց հետաքրքրուելու անոր ալլապան կողմաներովը, պտուտակներուն հանդուցաւորումներովը, մօթօտին բանելու եղանակովը, պայմաններովը:

Ասոնք, բոլորովին սաղմնային զրեթէ աւելի կը յայտնուին Ալիուրանի անաբաններուն մէջ, Սաքիտ-Մունիի սկզբնական կարգ մը պատուէրներուն մէջ քան թէ Մ. Գրոց: Ու լողանքը Գանդէսի ջուրերուն մէջ երբեք նման չէ Յորդանանի ալիքներու օծումին: Օրինակ, սեռային անդեղախոր բնադիւն ղէպի Վեզանլումի ծովերը քչոզ մղումներուն արհամարհանից, բացարձակ անտեսումը, մարդու պայմաններուն յատկացում

այս մայր մատեններուն մէջ, պարզ ծիծաղաշարժ անհեթեթութիւն մըն է: Աչքապուկ խաղալ է: Նազովընցին, որուն ակնարկը անհուն խորութեամբ ու անվերպօրէն կը խուզարկէր մարդկային հոգիի բաւեղնները, վայրկենական ճշգրտութեամբ կը կատարէր արտասանալուստը, չի՛ թուիր նկատի առած ըլլալ այդ սաղմաններուն կարեւորութիւնը որոնք, այսօր, մեր աչքին, կը թուին միակ նկատառելի եւ որոնց գիրկը միայն այժմու մարդը՝ լքուած, միայնակ, մոլորած, անձկահար, կը թուի իր բոլոր յոյսերը զետեղել: Ան նկատի կ'առնէր մարդու հոգին իր անջատ ու միակ միաւորութիւնը (entité), իբր մարդու միակ իրականութիւնը եւ կը պարզէր անոր առջեւ իր յազթահարիչ նպատակը, իրեն շնորհուած Աստուծոյ պատկերը: Փողփողազին լոյսերու տակ կը ձգէր ճանապարհը որ ան պիտի բռնէր, պիտի կտրէր: Բայց յանհունա երկարող այդ ճամբան ի՛նչ միջոցով պիտի կտրուէր: Իր մեքենային շարժիչը այնպէս յօրինուած էր որ մէկ քայլ առաջին կը յաջորդէր մէկ քայլ ետեւ: Այդ շարժիչով զբաղող չկար: Այդ պատճառով ալ, իր գոյութենէն ի վեր, մարդը միայն տեղքայլ ըրած է:

Ա՛ւ, հիմա, կ'երեւակայի՛ք անշամ

մը՝ ինչ որ ֆորթիօնի, ինչ որ պարալի-
 քիւրիքի մէկ զարմիկ որ, ամենազէտ ու
 գերհզօր, ինչպէս աննշմարելի մասնիկ-
 ները իրենց խորհրդաւոր գործառնու-
 թեամբը, օրինակ, pituitaireի ծորում-
 ներուն, սասնձնէ մեր կազմաւորումին
 մէջ (organisme) գերազոյն ղեկավա-
 րութիւնը: Որ դայ հաստատէ մեր մէջ
 հոգեբնախօսական երանային հաւատա-
 բանդոյթ մը որով, անխուսափելիօրէն,
 դունւաւորութիւն մարդուն ըսելիքներն ու
 բնելիքները: Այո՛, օրինակ, պատասխա-
 նատուութեան աներեւակայելի մեծու-
 թիւնը որ իր վրայ առած է սա մանրիկ
 գեղձը՝ փիթիւրէնը, ներքնահոս, հաւ-
 կրթածու, հազիւ 40 սանթիմետր մը բոյն
 կրած: է զանկին ստորոտը եւ որ բարակ
 կոթով մըն ալ միւսցած է ուղեղին: Իր
 առջեւ բլթակի հրամանէն կախուած է
 մեր Փիզիքական ընդհանուր աճումը: Ան
 է՛ որ դարձեալ պիտի հրամայէ, զրկէ իր
 սատրապները, որպէսզի, իր յարմար
 նկատած շրջանին, սեռային ղեղձերը
 հասունութեան զան: Եւ զեռ կը պահէ
 իր ձեռքերուն մէջ, այս աննշմարելի
 փորձութիւնը, սանձերը սրտին ու սրը-
 տանօթիներու պաշտօնին: Իոկ եթէ պա-
 տահի որ ինչն ալ օր մը հիւանդ ինչայ,
 իր բարկութիւնը ենթակայի զլիտուն կը
 պայթեցնէ, կրել տալով անոր սահմակե-
 յուցիչ արատոտցութիւններ:

Արդ, կ'երեւակայէք անգամ մը, հո-
 րիզոնին վրայ, զիւտը այս կարգի վեհա-
 պետի մը, մէկ կ'եղբայրակիցը ինչ որ ռե-
 գլեփիլէի, ինչ որ էլ յարկաւորապիսի որ,
 անառարկելի հեղինակութեամբ, ըսէ՝
 Լաւ, խօսքը ի՞մա է հիմա: Սպասնական
 ակնարկը ձգէ մեր հոգեբնախօսական
 գործիքին, սարգի ոստայնին, թնձուկին,
 գեհնին վրայ ուր կը զալարուի մարդը,
 քարայրներու շրջանին մինչեւ մայր եկե-
 դեցիներունը, Չարի ու Բարիի խելագա-
 կապը կոկորդին կը զալարուի ցաւաղնո-
 րէն, անվերջ ու անվերջանալի ճախճա-
 իտուտի մը, աւազախրտմի մը մէջ:

Այդ նոր ուժովը լարուած, ղեկա-
 վարուած հոգեբնախօսութեան մէջ՝ ալ

ուր կը մնայ, օրինակ, Չարին զգացո-
 ղութիւնը, մղումը: Չարին աշխարհը:
 Չարին համապարփակ, խորտակիչ իրա-
 կանութիւնը: Ան ո՛չ թէ հինցած, ժամա-
 նակավրէպ պիտի դայ տպագայի մար-
 դուն, այլ, պարզապէ՛ս՝ անհասկնալի՛:
 Անյղանալի՛:

Կ'երեւակայէ՛ք անգամ մը՝ Չարը
 չքացած մարդուն մէջէն, մարդուն շուրջ,
 մարդէ մարդ, հանուր կեանքի թաւա-
 լումին մէջ: Կ'երեւակայէ՛ք անգամ մը,
 բնկերութիւնները, ազգերը, մարդկու-
 թիւնը ուր ալ Չարը, իր հազար ու բիւր
 արտայայտութիւններովը, չքացած ըլ-
 լայ: Երկրագունդը հիմնովին տարբեր
 մարդկութեան մը առջև չէ՛ որ պիտի
 դանուի:

Իր գոյութենէն ի վեր, ինչ որ ծո-
 րած է մարդու իմացականութենէն թէ
 սրտէն, երեք քառորդ լափովը, ալ մի-
 ա՛յն վառելու նիւթ պիտի դանայ: Հա-
 ւանաբար, այլատիպի համալսարաննե-
 րու մէջ, մէկ երկու բեմ պիտի յատ-
 կացուի շատ տարօրինակ, անպէտք հը-
 մուտներ պատրաստելու որոնք, իրր
 մասնազէտ, թարթափազին, պիտի ճըզ-
 նին հասկնալ հին դերքերու բնագրերը,
 որոնք թէակնն բացատրութիւններ պի-
 տի առաջարկեն, օրինակ, Յիսուսի Մոկ-
 րատի, Ս. Թոմաս Աքուենացիի, Պերկ-
 սոնի եւ այլոց առեղծուածայի՛ն պար-
 բերութիւններուն: Ի՛նչ պիտի ըլլայ, օ-
 րինակ, ճակատագիրը Ձիթենեայ Լեւան
 Բարդին: Մահը՝ նոր մարդկութեան
 ո՛ր հմուտ մասնազէտը իր սմբողջ կեան-
 քը պիտի յատկացնէ, իմաստ մը ճարե-
 լու համար, օրինակ, անըմբռնելի՛ սա-
 խօսքերուն. «Այլ ես ասիմ ձեզ, Սիրնցէ՛
 գրշնամիս ձեր... Իւ ազօրք արարէ՛
 ի վերայ այնոցիկ որ լիլենն զձեզ եւ հա-
 լածեն»: Ի՛նչ պիտի ըլլայ ճակատագիրը
 Մանիր գեղգին եւ մարդկային իմացա-
 կանութեան այս կարգի «անմահ», ճյա-
 ւերժական» դոճաքներուն:

Ասո՛նք ալ պիտի մեռնին: Իրենց
 այժմո՛ւ ճահովը: Մարդու կայուն
 բարբարոսացումին հետեւանքով, թէ՛

մահերուն ամենէն վաւերականովը, սար-
ափեւիւրովը: Անպէ՛տք պիտի գաունան
ինչպէս արծաթի կտորներ, Հիմնայա-
տակ փոփոխուած դրամական դրութեան
մը մէջ:

Ի՞նչ պիտի ըլլայ ապագան Շայեոյի
պալատի խոյակներու վերնամասին սր-
ձանագրուած Վալչրիի պատգամներուն:
Իմաստ մը պիտի պահէ՞ն դեռ սա ոսկե-
տառները:

Mais l'artiste se sent créer
Son acte engage tout son être
Sa peine bien-aimée le fortifie.

Իմաստ մը կ'ունենան՝ երբ այդ նոր դա-
րաշրջանի սեւէ մարդու տրուած ըլլայ
ուսումնասիրել Վալչրիի մը, ինչպէս այ-
սօր դիտնականը կ'ուսումնասիրէ սոսկե-
րոտիքը մամուլի մը: Թէ՛ պիտի դառ-
նան անոնք մնացորդացը հարստութեան
մը որուն պարտուած ժողովուրդը անհե-
տացիք է պատմութեանն սպառնալու:

Ի՞նչ պիտի ըլլայ ճակատագրերը,
գետնի ընդերքին պահ դրուած, ի նախա-
տեսութիւն Հիւլէական բնաջնջումի մը,
արդի քաղաքակրթութեան, մշակոյթին
եօթը հրաշալիքներուն, ընդ որս Շառլի
Շափլէնի «Բագազին Լոյսերը»: Մա՛հը:
Ա՛, ուր էր թէ մեռնէին անոնք դէթ ի-
րենց այժմու մահովը: Նոր Ուծի սր-
ուականր կը յաճախէ զինք, կը նետէ սեւ
անձկութեանց, անբնականոն սարսափ-
ներու ծոցը: Ան կը հաստատէ մարդուն
այդ թիւ մէկ թշնամին անոր տանը՝ մէջ,
անոր նեարդներուն, հոգիին իսկ մէջ:
Ու խօսքէն անցնելով գործի, նոր արժը
ուսելի մէկ հարուածով կը ջնջէ կը նետէ
զսարգի ոտայնը: Արգահատանքի մեծ
սարսուտով մը, ակնարկը տապկրտուած
ու տապկրտուող մարդկութենէն կը ձգէ
Աւետարանիչներու թուղթերուն: Անոնք
եւս կը քէջ աւրուած սարգի ոտայննե-
րուն քով: Եթէ՛ ա՛յս է գործդ, Տէր զը-
թութեան, ի՛նչ պիտի ըլլար հապա եթէ
ըլլար ան գործը Նեոին:

Նոյն պահուն Ռամպան խաչէն վար
կ'առնէ Բագազին, որուն ղէմքի մեծ չար-
չարանքին յաջորդած անդորրութեանը

վրայ կը մնայ դրոշմուած սարսուտը իր
վերջի խոհերուն: Տառապանքը չքայնել
աշխարհէն՝ հետեւանք մըն է միայն:
Իսկ ո՛ւր է այլ ճանապարհ մը, Մարդուն
տրուած, դէպի Կատարելութիւնը: Հա-
պա ի՛նչ ճամբայ պիտի բռնէ ան երթա-
լու համար դէպի ճանաչողութիւնը Հորս
որ վերն է: Ինչպէ՞ս պիտի ընէ, մերձե-
նալու համար Անոր: Մերձենալու կարի-
քը ի՞նքը կ'ուզէ ընջել իր մէջէն:

Բայց արդէն, նոր ուծը ինչ որ ման-
րագիտային ըջիջներ ճամբայ կը հանէ,
գանկի ստորտի մէկ որոշ կէտէն, դէպի
ուղեղային որոշ կեդրոններ: Ու իր հրա-
մանին տակ, զողը՛ ալ պահանջ չունի
գողնալու. յայրատը՛ շնանալու. ոճրա-
գործը՛ ոպանտնելու:

Իսկ ղէմքը Նագովրեցիին որ յաւեր-
ժապէս պիտի չդադրի ըլլալէ որդի
մարդկան եւ հակելէ աշխարհի միայ,
տեսնելով մարդը, կծկուեցաւ այնպիսի
տրամութեամբ մը որուն նմանը չէր ու-
նեցած իր սարդնական կեանքի ընթաց-
քին: Ո՛չ՛ երբ կ'անցնէր մտածկոտ Գեթ-
սեմանի պարտէզէն: Ո՛չ՛ երբ յայտնեց
անոնց. «Եւ մինչդեռ չըջէին նորա ի Քա-
լիսիա, Մատնեցոց է Որդի Մարդոյ ի
ձեռս մարդկան, Եւ սպանցեն զնա. եւ
տրամեցան յոյժ»: Ո՛չ իսկ, երբ. «Իսար-
ձեալ երկրորդ անգամ զոգաւ, եկաց յա-
ղօթս Յիսուս եւ ասէ, Հայր իմ, եթէ
հնար իցէ անցանել յինէն բաժակս այս-
միկ, սպա թէ ոչ՛ արբից գտա»:

Իսկ ղէմքը Նագովրեցիին տեսնելով
այս Մարդը, «եղծաւ գոյն երեսաց նո-
րա» եւ կծկուեցաւ այնպիսի տրամու-
թեամբ մը որուն նմանը չէր ունեցած,
իր սարդնական կեանքի ընթացքին: Վա-
սրնդի տեսաւ զայն աղէտահար, ապառ-
նիի երկայնքին, որբութեանց ամէնէն
եղկեւիւրովը:

Ճիշդ ինչպէս դիտնականն է միայն
որ ինքզինք կը նկատէ մարդոց ամէնէն
տգէտը, այնպէս ալ սրբական մարդն է
միայն որ պատրաստ է ինքզինք նկատե-
լու մարդոց ամէնէն մեղանշականը, վա-

սրնդի Ինք միայն զիտէ շափել անկուճ- ներու սահանքներն ու զատորոշել՝ բիւք ու անհամար նրբերանդները անոնց: Ան զիտէ միայն խուզարկել նաև զիտաւո- րութեանց մութ ու դէ՛լ աշխարհը ուր, քողածածկ, ապահո՛ւմ, մեղքին սողուն- ները կը խլրտին: Ու դեռ սաղմնային հրէշութեանց կերպարանքները որ կը սպառնան ըյտ աշխարհին գալ, կը յայտ- նուրէն սրբակեանց մարգուն, վասնորի ո՛չ ոք աւելի քան ան կը մնայ դաշնակից հասարակաց մահկանացուներու պայմա- նին: Ան է միայն որուն զիտակցութիւնը կ'աճի մեղքի տառապանքն եւ որուն իրիւճը կը թրծուի այլոց դժոխքի քու- րային մէջ: Ան է որ մղձաւանջէ մը սլըր- Ծած, դողահար, սարսափազին, կը ծըն- րադրէ, կը մըմնջէ. «Փա՛ռք քեզ Տէ՛ր, թոյլ շտուի որ օճեր գործեմ»:

Ան ոչի՛նչ պիտի կրնար սրտցնել զիս եթէ չըլլար հետաքրքրութիւնը՝ քակելու եւ վերակադմելու մարդու մեքենան: Այլ ոչի՛նչ պիտի խոսէ՛ր զիս, դարձնէ՛ր զիս մերթ կրասոյզ, մերթ մոլեռանդ, եթէ չըլլար տեսք կեանքին, մարդու բար- դարբող կացութեան, թշուառութեան, իտէալին:

Ո՞մանց մակերեսին ինկեր է փոշին, ուրիշներու խորքին մէջ է զիդուեր: Ա- ուղիններուն հետ, երբ պէտք ըլլայ, կա- րելի է շփուիլ: Եւ լաւ է շփուիլ կապը, «փոշին» պատճառով, յանուն մարդ- կայնականին: Յանուն հակազդեցու- թեանց օգնագին, անոնց կենսական ներ- գործութեան:

Երկրորդներուն հե-ե՛տ... չե՛մ գիտեր: Փոշին հոն անթափանց կուսրի վերածուեր է: Ամէն ինչ հոն միայն կո- րուտ է: Անյո՛յս է: Անյոյս է՞...

Թրու որ ամէնէ՛ն անպէտք, ամէնէ՛ն վհատեցուցիչ, ամէնէ՛ն վտանգաւոր ալ անձերը անոնք են, որ կորսնցնելիք բան մը չունին կեանքին մէջ: Ձկայ կէտ մը որ ըլլայ խոցելի՝ էրենց մարմինն թէ՛ հո-

ղին վրայ: Միանգամընդժիշտ ոտնա- կոխուած, նետուած բաներ են:

Մարդ ըսածդ ալ, Բարձրեա՛լն Աստ- ուած, այնքա՛ն աւելի հարուստ է ինչ- քան աւելի կը դողայ՝ պաշտպանելու համար իր տարրական շահերէն սկսեալ մինչև նաև վերին ըսուած բաներ մը, մէջն ըլլալով մեծագոյնը՝ իր հպարտու- թիւնը, իր արժանավայելչութիւնը:

Եւ յետոյ՝ Սէքը՞ կը պակսի: Սէ- րե՛ր՝ որոնց պաշտպանութեանը համար հարկ է համաձայնել որեւէ զոհոգու- թեան: Անհամար չե՛ն այն բաները որոնց մարդ կրնայ տիրանալ եւ որոնց կորուս- տէն սարսափի: Իսկ բան մը սիրելուդ պէս, նոյնհետոյն, բանէ մըն ալ չե՛ս երկնչիք:

Ան որ կեանքի մէջ ոչի՛նչ ունի կոր- սնցնելիք, ոչի՛նչ ունի պաշտպանելիք, բարեկա՛մ, էթէ պատահի որ հանդիպիս անոր, անմիջապէ՛ս, բարեկա՛մ, դար- ձուր կանակդ եւ...:

Պիտութեան կատարած զլխապառյա յառաջդիմութիւնները, որոշ անկիւնէ մը զիտուած, ուրիշ բանի շին վերածուիլը եթէ ոչ բազմապատկումին զօրութեանը, մարդու այս կամ այն զգայարանքին, Յարզ, բոլոր զգայարանքներուն մէջէն, տեսողութիւնն է որ եկու առաջին մա- կարդակի վրայ: Աէքը, գրեթէ անշուն իր կատարած դերովը, օրինակ, քարան- ձաւային շրջանին եւ ցարդ, պրեթէ աւե- լարդ, շատ մը կենդանիներու մօտ, խե- շապտոյտ բազմապատկումով, շատո՛նց արհամարհած երկրագունդի տարածու- թիւնները, կը պեղէ տիեզերքի ամայու- թիւնները: Մէկ քանի տասնեակ մէթրո- յէն մինչ այդ, հասած է բազմամիլիոն փարսաններու մեծութեան:

Անհաւանական չէ՛ սակայն որ աչքը շարունակելով հանդերձ դեռ զարգացնել իր կարողութիւնը, տակաւ անցնի երկ- րորդ մակարդակի վրայ: Այս անգամ, զայն պարտութեան մատնողը՝ զգայա- րանք մը չէ: Աւելի բարդ, աւելի նրբա- խճող քան զգայարանք մը. մեծ դադա-

նիքներ կը խլրտին իր ծոցը: Ան՝ մէկ մասն է մարդու յորինուածքին, կենսաբանականօրէն իր ամէնէն նուրբ, բարդ և և... տեղծուածային մասը՝ ուղեղը: Ուղեղն է որ կը դառնայ վրտէք: Նոր, խոստմնալից, ախոյեան վտանգաւոր: Խորհրդաւոր «արեւ» մը որ մեծապէս յեղափոխիչ, «զէչ» դիտաւորութիւններով, կը յառաջանայ մարդկային գիտերու աստղակամարին վրայ: Ուղեղն է, իր յիշակալամ կարողութիւնն ու անվրէպ զօրութիւնն է որ սկսած է, սահմակցուցիչ շտապերով և արագութիւնով բազմապատկելի իր գործառնութիւնները: Իլիէտրոնիկը կանդնած է մարդկային կարելիութեանց բնմին, խտովիչ, ահադու զաղտնիքներու երկունքովը: Ստեղծուած ուղեղէն, կուզայ վերստեղծել ուղեղը: Առաջնորդուած մարդէն, կուզայ առաջնորդել զայն...: Վերածել զայն օրոմա-

թի: Կուզայ հաստատել ռազմ մարդկութեան մը զահակալութիւնը: Մէկ քանի մեթրոնոց կարողութեամբ աչքին տեղ, մէկ քանի մեթրոնոց յիշողութեամբ ուղեղն է որ կը դառնայ միլիոնաւոր փարսաններու կարողութեամբ ուղեղային դրութիւն մը, պատրաստ պատասխանելու բազմաճամբ, էական հարցումներու, կատարելու շտեղծուցիչ բարդութեամբ հաշիւներ, երկվայրկեաններու ընթացքին միայն, ինկած է ան այսպէս, աններողութիւն, ախիզբքի յաղթահարումին ու կեանքի ալ զաղտնիքներուն հետեւին: Ասանք ևն այն իշխանական որսերը որ կատարուէն կը հալածեն, ցմահ, կամ ցյաղթանակ, իր խուզարկումի ջերմէները:

Հ. Զ.

(Թիւ 2, շար.)



ՄԻՒԳԱՅԷԼ ԹԱԻՐԲԱՆ

ՀԱՇՈՒԵՑԱՐԴԱՐ

Ես որպէս մասնիկ, շնչաւոր հիւլէ,
իմ մարդ կոչումիս հրու կարգապահ,
Գոյացած սմանկ ունայնութենէ,
Յզուած եմ աշխարհ... ու հասած անա
Լուսաշորդ սեմին այս դարուն պայծառ:
Ես՝ այս նոր դարուն զաւակը արդար,
Դատազուրթիւնս ընկրկ կշիռ,
Անցեալն ու ներկան՝ մեկական մտար,
Բարոյական նոր սրժէքները վեհ
Ըրած կշռաքար,
Հաշուեյարդարի կ'ենթարկեմ ես քեզ՝
Բոլոր դարերուն վըրայ գերիշխող
Հզօր քազակիր՝

Քըսաներորդ Դար:



Եթէ ընծայուէր Ազամ-Եւային
Այցելել աշխարհն այս պիղծ՝ վերստին,
Դիտելու կենցաղն այսօրուայ մարդոց,
Պիտի կոչէին աշխարհն այս՝ - բողոք
Եւ յիմարանց:
Այլ կը կոչենք մենք զմեզ բայտաւոր,
Ու կը պարծենանք՝
Որպէս բնակիչ այս Օրերուն Նար,
Որ զուր կը կոչենք՝ Քըսաներորդ Դար:
Այլ սայթափեցան բարձրը բոլոր
Անբարոյութեանց սեմին գլխիվայր:

Ոստում էր կեանքը ի սկզբանէ,
Մերկութիւններէ դէպի սփօզում:
Հիմա դարեր ետք կեանքը արձակեց
Վերստին ոստում՝
Դէպի մերկացում.
Ու մերկացուցին թռոններն Եւայի
Անո՛ւթ, ծո՛ց, սրս՛նք՝
Նոր ըմբռնումի որպէս նոր երկունք,
Եւ կոչեցին զայն՝

Յառաջդիմութիւն...

Վեհաբիւճներու, բարեքրու համակ,
Մարդիկ հազարացին նորիմաստ դիմակ:
Կիմն անբարոյացաւ...

Անբարոյացան դեռ
Վեհ ըմբռնումներն ու բարեքրը մեր:
Բայց պռնկութեան այդ վայրավատին,
Չտուին մարդիկ բոզութեան անուն,
Այլ կուշեցին գայն՝

Ազատամտութիւն:

Ի սկզբանէ

Գոյութեան յղացքն երբ տիեզերքի
Կր սաղմնաւորուէր Աստուծոյ մտքին մէջ, -
Կնկան սահմանուած էր կեանք մը ստրուկ,
Ինքնիշխանութեան իրաւունքէ գուրկ:
Պիտ՝ գերեզմարէր գինք ա՛յրը անվերջ...
Ու գերեզմարէ՛ց:

Հի՛ն օրեր էին, օրեր բարբարոս,
Կը գահակալէր կեանքը հեքանոս:

Արժանի փարթամ կանանցի մէջ,
Հիւրընկալութեան գեղուհիներ պերճ:
Այլ անոնք հզան մերթ կին եւ մերթ հարճ,
Յնքակայ միշտ ցոփ կամքին իշխանաց:

Հի՛ն օրեր էին, օրեր բարբարոս,
Օրեր խայտաբղէտ, ցոփ ու հեքանոս:
Կնկան սահմանուած էր կեանք մը ստրուկ...
Ինքնիշխանութեան իրաւունքէ գուրկ:

Նշանաբանն էր այրին՝ քաջութի՛նն,
Որ կեանքն ստանար իմաստ վեհանուն:
Հարեմները պերճ լքած արժանի,
Շքք կը մեկնէին իշխաններ՝ մարտի՛,
Իրենց գեղանի

Հարն-դշխոներուն *կենսակէն* վերայ
Կ՛ամրացրնէին փականք երկաթեայ,
Որպէտզոհ մինչեւ վերադարձն իրենց
Չճանաչին գեղս կենցաղի մէջ,
Դշխոները պերճ,
Ու հարները գէշ:
Այլ մարտիկն անոնց կ'ըլլար երեսասպառ,
Գիշուքիւններու հաճոյքին մէջ յար:

Հի՛ն օրեր էին, օրեր բարբարոս,
Օրեր տափանքի, ցոփ ու հեքանոս:

Հեքանոս բարեքննեմ եղամ գահրնկե՛ց :
 Եւ գերութենէ կինն ազատագրեց
 Ինքզինքը... ապա խորտակեց հաճաւր
 Արգանդը լլկող փակամեմերը կուռ :
 Տապալելէ ետք բարեքննեմ դաժան,
 Կինը հաշակեց ինքզինք ինքնիշխան :
 Եւ նոր դարերուն սեմերուն պայծառ,
 Պարտադրեց ինքզինք այրին՝ հաւասար :
 Փա՛ռք արդիւններուն այս արդարապատ,
 Փա՛ռք խաղափակիրք իմացման ազատ :



Այլ հինա կրկին,
 Այս նո՛ր օրերուն,
 Այս վա՛տ օրերուն,
 Դարերու սեմին այս խաղափակի՛րք,
 Օրերուն այս լի՛րք,
 Լիբր ըմբռնումներն երբ կը սայթափին
 Անկումէ անկում,
 Եւ բողբոջումներն երբ կը քարզմանուին՝
 Ազատամտութեա՛ւր .
 Այս լո՛յս օրերուն,
 Ջե՛թ բարեքննեմ մեր՝ վատ ու ընկեցիկ, -
 Ո՛չ որպէս արդիւնք պատուախնայութեան,
 Այլ ըմբռնումի պիղծ ու գոհիկ,
 Արգանդին վերայ գարկին վերստին
 Ամրակուա փակաճէ,
 Որուն բաճակին նիւթն է ու կաշա՛ռք :

Այլ կը յուսացուէր որ Նոր դարը այս
 Ընծայէր մարդոց հունձք մը բարեքննեմ,
 Եւ յգիւնար լոյսը ինչպէս հարս,
 Անձիւր շողերն իր աշխարհին սփռէր,
 Խափանէր ծնունդն արարեցներուն վատ,
 Խեղճէր պղծութիւնն իր իսկ սազմին մէջ,
 Բուժէր մարդուն սիրտն իսկ քարայտապատ,
 Եամբեցնէր ճահնի պէս բարեքննեմ զէջ :
 Մոխիրէն յառնէր Փիւնիկի նման,
 Նոր մարդը՝ վեհ ու խոհերով վսեմ,
 Միտքը չարսնար ռեփրներ դաժան,
 Այլ մարդը ըլլար մարդուն ապաւեճ .
 Հոգին չկրէր թոյն, նախանձ ու քէն,
 Աշխարհն այս դադրէր ըլլալէ գեհնն :
 Օ՛ դարն այս չըլլար սասկ գիտակամ դար,
 Այլ մարդուն մտքին պէս՝ յառեժ պայծառ .
 Եւ մարդուն հոգին ըլլար մանկեքաց,
 Ճախրէր մտքին պէս հոգին վերապաց .
 Յու չէ՛ր է կուրծայ մարդուն աչքը, բա՛յց

Աչքերը հոգւոյն մնան մշտաբաց :
 Չարձանագրէր լոկ միտքը յաղթանակ
 Գիտական անունն նուաճումներով ,
 Եւ մարդու հոգին՝ չկէր սնանկ ,
 Չմուրար ճօթի եւ անապահով .
 Պատմութիւնը իր բազում էջերով
 Չէ արձանագրած դեռ այսպիսի սով :
 Ձուսաւորէր միտքը մութը լոկ ,
 Երբ հոգին խաւար բաւիղներու մէջ
 Մոլորած է ցոփ աղինի պէս գէջ ,
 Երբ մարդը տմարդ վտառչ կիրճերու
 Զառիվարն ի վար կ'արածի անվերջ :

Տուած է մարդուն միտքը լուսաբեւ
 Լեզու եւ ուղեղ մետաղներու ցարտ ,
 Որ արծիւի պէս խոյանան վերեւ ,
 Որ հորիզոններ նուանեն լազուրթ ,
 Տրամաբանեն , լուծեն , գումարեն .
 Եւ տիեզերքի խորհուրդը պնդեն :
 Այս լուսազայծա՞ն փառքի օրերուն ,
 Երբ սփռւթիքներ ենդեկով երկինք ,
 Խելագար քափով կը գործեն թռիչք ,
 Երբ մարդը ռպլէս քեւտըր թռչուն
 Մոլորակներուն դարձաւ բնակիչ ,
 Այլ այս օրերուն , աշխարհին անծիր
 Տարածքին վերայ մարդիկ կ'ապրին դեռ ,
 Վայրագ ու տգէտ մարդիկ մարդակեր ,
 Որոնց ձեռքը դեռ չբռնեց գրիչ ,
 Որոնց աչքը դեռ ճանչցաւ ո՛չ իսկ գիր ,
 Որոնց մարմինը չկրեց հագուստ ,
 Որոնց չուր լեզուն հեզեց ո՛չ իսկ բառ ,
 Եւ այս քուրքը փառքի օրերունդ ,
 Ո՛վ քաղաքակիրթ Քրտներորդ դար :

Դեռ ցեխ է մարդու հոգին ու սնանկ ,
 Եւ օճերու պէս դեռ կը թփնէ թոյն ,
 Դեռ յագեցնելու համար ծարաւն իր ,
 Մարդը կը խմէ մարդկային արիւն ,
 Դրամի սիրտն կը գործեն ոճիթ ,
 Դրամի սիրտն կը դառնան սողուն ,
 Եւ այս քուրքը փառքի օրերունդ ,
 Ո՛վ քաղաքակիրթ , գոռոզ , սնափա՞ն՝
 Քրտներորդ դար :

Բ. ԿՈԱՆՆԵԱՆ

Հանրապետության
ԿԱՆԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Ամբողջ օրը կ'աշխատի մինակ: Կատարեալ ամառաշուն ու լքուածութիւն: Բոլորը մեկնած են: Սպիտակ ոնապատին մէջ միայն ինքն է մընացեր: Տնտեսն իսկ իր ընտանիքին, տաքուկ օճախին է ապաստաններ:

Հայն է մինակ: «Հայը Եգիպտոսէն», ինչպէս կը կոչեն զինք: Կը ջանայ թեթեւ առնել կացութիւնը: Կը հաշուէ աշխատանքին վարձքերը: Դրամը հետզհետէ կ'աւելնայ: Օր մըն ալ չէքը կու գայ եւ ուրախութիւն կ'ըլլայ: Պարզապէս կը ստորադրէ ու կը ստանայ դրամը: Մեծ մասը կ'երթայ պարտքերուն:

Կը ջանայ գուարթ ըլլալ: Տրամաբանութեամբ ինքզինք կը համոզէ, կը ջանայ համոզել: Սիրտը սակայն, այլ եղանակ կը գարնէ: Ի վերջոյ, տիրութիւնը, զօրաւոր պինի մը նման, կը տարածուի անդամներուն մէջ, կը բարձրանայ ուղեղը եւ՝

Տրտում է անձն իմ մինչ ի մահ:

Այս է հիմնական թեման իր գոյութեան: Երբեմն երբեմն, կը բարձրանայ ու կը տիրապետէ բոլոր ձայներուն:

Կը նայի իր կեանքին, միշտ տխուր է եղած: Մանուկ օրերէն, որքան որ կը յիշէ:

Ինչո՞ւ ինք տարբեր է:

Այս հարցումը առաւել եւս կը բորբոքեցնէ իր խոփքը: Կը ջանայ ատարկապահուն ըլլալ: Գուցէ ինք միակողմանի կը տեսնէ կեանքը, միայն իր տառապանքին պրիմալին մէջէն կը դիտէ եւ իր ցաւը ամենախոշորը կ'երեւայ աչքին:

Եւ սակայն, վարժարանին մէջ հարիւրաւոր տղաք եւ աղջիկներ կան: Ինչո՞ւ միայն ինք ենթակայ է նման պայմաններու: Ինչո՞ւ հիմա, այս սոնական օրերուն, երբ բոլորը մեկնած են տուն, նուէրներ կը ստանան, երանութեամբ կ'ողողուին, ինք մինակ է, զրկուած է: Մօրմէն հեռու է: Ստարական է:

ձիշկ ա՛յլ: Օտարական մը, իր տունէն ու հողէն հեռու: Ե՞րբ է, որ տուն ունեցեր է ինք: Ե՞րբ եւ ս՛ւր: Ի՞նչն է, որ այս լայն աշխարհի վրայ, կրնայ իրը կոչել:

Աճապարտների մը տենդը մտրակած էր դինք: Կարծես մէկը շարունակ մշտեր էր դինք: Անսպասելիութեան, վախի պագում մը Զղապարդի էր պահեր դինք: Գիշերները երբ կը քալէր փողոցներէն, քիչ մը հեռուէն, մէկը հետեւեր էր իրեն, հալածեր էր դինք:

Այժմ, մինչեւ անգամ այս քրիստոնեայ եւ ազատ երկրին մէջ թէեւ վախը փարատեր էր, եւ սակայն, կեանքը կը հալածէր դինք տեւաբար: Հեռի հեռ կ'ապրէր, վաղուան հոգերը կը խանդարէին իր քունը եւ պարտքը կը հետեւէր իրեն քիչ մը հեռուէն, բայց յամառ ու հաստատ: Կը յիշէր Աստուծոյ թուաբանութեան դասազրբէն խնդիր մը, զոր ատենին խաղաղվ լուծեր էր: Ինք կը պարպէր ջուրը աւազանէ մը, որուն մէջ, միւս կողմէ կը լեցուէր աւելի ջուր, քան ինք կրնար պարպել: Գիշերն իրուն կը պարպէր, կը պարպէր, հեւքը կը կտրուէր, թեւերը դժուարաւ կրնար շարժել, միտքը կապարի պէս կը ծանրանային, հասակը կը կքէր, թեւերը կ'երկարէին, կը քաշէին դինք վար:

Ջուրը չէր պարպուեր, կը խեղդէր դինք:

Իր տարիքի տղաք մէյ մէկ աղջիկ ունէին: Girl friend մը: Միտքին եկեղեցի կ'երթային, շարժանկար, պարահանդէս կ'երթային: Գիշերային արկածախնդրութիւններու մասին, յաջորդ օրը, նուազուն նայուածքներով կը պատմէին:

Ինք ո՞ւր էր:

Քսան տուրեկան կ'ըլլար, դեռ աղջիկ մը չէր համբուրած իսկ: Քանի մը անգամ Թադուհիին ձեռքն էր բռներ: Ուրիշ ոչինչ:

Հիմա որ շարաշար կ'աշխատէր, կը յոգնէր սաստիկ, այս ցուրտ երկրին մէջ իր գիշերային հրայրքները քիչ մը հանդարտեր էին: Եղիպտոսի տաք կլիման, պղինձէ իրանները, եղիպտոսիներու ցցուած կուրծքերը՝ խենթութիւններ կը նետէին արեան մէջ:

Հիւսիսի ստոնամանիքն ու կայոյտ աշքերը դինք զմայլանքի կը տանէին, աւելի քան արեան բոնկումներու:

Վարժարանին ղեղկցիկ աղջիկներու նայուածքները, կերպերը հեաը սենևակ կը տանէր եւ իր յոգնածի ու զրկուածի առանձնութեան մէջ, հեքիթներ կը հիւսէր:

Կը հնչին զանգակները հովիտին մէջ:

Քաղաքը լոյսերով կը թրթռայ: Պատուհաններուն՝ Կաղանդի շքեղ ծառեր: Ամէն ոք զուսուոր ծրարներ գրկած՝ տուն կ'աճապարէ:

Օգին մէջ Մնունդի շարականներ եւ թեւերու թարթափներ: Հովիտին վրայ պայծառութիւն մը իջած է:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Կը հնչին զանգերը հովիտին մէջ: Աստղերը երկիր են իջեր եւ ձիւնին ճերմակութիւնը սուրբ տաղ մըն է գրեցեր: Մինեկայներուն ուղղաձիգ բարձրացող ծուխերն իսկ լուսաւոր են այս կրկիտ: Զարիքը չբացած է, ցաւերը, քէնը իջած են յատակը, սրտերը բիւրեղ բիւրեղ կը փայլին: Աէր կայ շրթներու, աչքերու, ձեռքերու մէջ: Սրտերը մօտեցած են իրարու:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Ջահերը վառած են սրահներու եւ հիւղակներու մէջ:

«Ձառկան հիմակ կ'երագնի համակ գիւմրիւք ու քարշիշ...
Կամարներէն, խարանէն կը ծագին լոյս ու ծիծաղ.
Հոգիս քիչ քիչ կը քաղուի ածուրջին մէջ այս չքնաղ,
Բայց լոյսն իմ հագւոյս քիչ քիչ կը մաշի»...

Ամէն տեղ լոյս ու ծիծաղ, միայն Լիւոնն է, որ տխուր է այս գիշեր
ու կը սպասէ զոր ծագի հոգւոյն պայծառ կիրակին»:

Քիչ առաջ, շուրջ դնաց, զնեց քիչ մը պանիր, պահածոյ միս ու
պտուղ: Եռական եռուզեռի, լուսավառութեան ու բերկրանքի մէջ էր: Ե-
կեղեցիներէն սրբազան երգեր կու դային: Գունաւոր ապակիներ թափան-
ցիկ աշխարհներու վրայ կը նայէին: Կազանդի ծառեր ու պտակներ ամե-
նուրեք:

Ուղեց եկեղեցի մտնել եւ աղօթել: Ձեռքին ծրարը, անխնամ գործի
զոհաստաւորումը եւ, մանաւանդ ներքին փոխուստի զգացում մը կառչեցաւ
ստորուն: Արագ անցաւ ձիւնին վրայէն: Տուներէն լուսոյ ծիծաղները ա-
ւելի սաստկացուցին մորմօքը:

Սանդուխին վրայ՝ տանտիկինը կեցուց զինք.

- Լիս, ըսաւ, չե՞ս ուզեր մեզի միանալ, մեզի հետ սնցընել Մեռնողի
երեկոն... Շատ ուրախ պիտի ըլլանք...

- Ենտրակալ եմ, - ըսաւ տղան, - մեր Մեռնողը այսօր չէ:

- Ի՞նչ տարբերութիւն ունի... Բոլորս ալ զրիստոնեայ ենք... Ինչո՞ւ
այսպիսի երեկոյ մը միմակ մնաս...

- Ենտրակալ եմ, - կրկնեց տղան եւ արագ բարձրացաւ ու մտաւ իր
սենեակը:

Ինչո՞ւ, չի գիտեր, մտքին մէջ կը յամենայ Մեծարենցի քերթուածը.
«Ու կը սարսուռն որ ծագի ծագւոյս պայծառ կիրակին»...

Նետուցաւ աթոռին մէջ, աչքերը փակեց: Այդպէս մնաց: Ամէն ան-
գամ երբ տաղանայի մէջ ըլլար, այդպէս կ'ընէր:

«Ինչո՞ւ չեմ կրնար ուրիշներու պէս ըլլալ»:

Ի՞նչն էր, որ զինք այդպէս տարբեր կը դարձնէր: Իր դաստիարա-
կութիւնը արգեօք: Միշտ զրկուած, զսպուած էր սպրեք: Մայրը իրեն
տուած էր խիստ բարոյականի ըմբռնում: Հին Կտակարանի Եհովան, պա-
տուհասի անխուսափելի սպառնալիքը, մեղքի զգացումը: Այս աշխարհին
մէջ զրկուել, տառապիլ, աւելի հեռաւոր եւ սեւական երանութեան մը
ի խնդիր:

Մայրը մանաւանդ զինք զգուշացուցեր էր աղջիկներէն: Օտար, ժլպ-
տացող, անոյշ լեզու աղջիկներէն: Անոնք կը խաթարեն նկարագրիդ, բա-
րոյականդ, ստողջութիւնդ: Մարդ մէկ անգամ կը սիրէ եւ կ'ամուսնանայ
սիրածին հետ: Մայրը ինք տասներեք տարեկանին ամուսնացեր էր: Հայրը
հագիւ տասնըութ էր եզեր: Երբ չէին իսկ տեսեր: Մայրը չէր կրնար ե-
րեւակայել, որ խնդիրը կրնար տարբեր ըլլալ: Ժամանակները փոխուեր
էին:

Իր այս դաստիարակութիւնն էր, որ տղան հեռու կը պահէր աղջիկ-
ներէն: Երկչոտ էր եւ վարանոտ: Աղջիկները կը դիտէր գաղանթներէն: Սեն-
եակին պատուհաններէն կը դիտէր շրջակայ տունները, կը ջանար կիսաթա-
փանց վարադրներու ետին տեսնել հեշտապին կերպարանքներ:

Օտուտած էր ուժեղ երեւակայութեամբ: Հրաբլբոտ էր, ինչպէս
արեւելքէն: Կրակը թաղուած էր մոխիրին տակ: Իր դաստիարակութիւ-

նը, պայմանները զսպուած էին պակեր բռնկումները, բայց օր մը, որևէ ատեն, ուժեղ գրգիռ մը կրնար պայթեցնել կրակը:

Զինք հանդարտարոյ, երկչոտ, պաղարին մէկը կը կարծէին: Աղջիկները կը սիրէին իր երկչոտ ձեւերը, հաճոյք կ'առնէին երբ կը շփուէր իրենց հետ խօսած ատեն եւ ձօխուելը շարժումներ կ'ընէր: Աչքերուն ճերմակները միշտ կարմիր էին: Միշտ յուզուած էր, և կիները կը փնտռեն յուզումն ու զգայնութիւնը: Յետոյ, սեւ աչքերուն մէջ ինչ որ խորունկ, մըթին բան մը կար, որ կ'առինքնէր: Երբեմն, վայրի բոց մը հազիւ պահ մը կը փայլատակէր նայուածքին մէջ: Այս աղուն ներքը կար աւելին: Տարբեր էր: Ասոնք բաւ էին զինք աղջիկներուն դրաւիչ դարձնելու: Եւ կը փնտռէին զինք:

Բայց ինք պոռնիկ ստոծոյ մը պէս կարծր էր եւ անզիջող: Աղջիկները կ'ըսէին. «Անպատճառ Եգիպտոս ցիրլ ֆրենդ մը ունի եւ ատոր համար մեզի հետ դուրս չ'ելլեր»:

Կը գնահատէին ու կը զմայլէին իր հաւատարմութեանը:

– Ի՞նչպէս է, գեղեցի՞կ է բարեկամուհիդ:

Ոմանք աւելի առաջ կ'երթային ու կը փափաքէին, որ Կիրակի իրենց հետ եկեղեցի կամ դպրոցի պարահանդէսներուն երթար:

Լեւոն կը մերժէր, երբ պնդէին՝ կոպիտ կը դառնար: Դատանութիւնը դիմակ մըն էր: Նման պահերու, կը նմանէր քիչ ընտելացած վայրի կենդանիներու: Հպարտ էր եւ ինքնահաւան: Ասոնք առնական հմայքներ են կիներու աչքին, որովհետեւ կը զրդոնեն անոնց ինքնասիրութիւնը:

Գեղեցիկ երեսասարդ կրնար համարուիլ: Ոչ այն համաջափ, սիրուն գեղեցկութիւնը, որ գծերու եւ մտքի թարմութեան մէջ է, ալ զիջ մը անառաչ, ներքին ուժակամութեան եւ տարերային ձգողականութեան: Գծերէն աւելի, արտայայտութեան մէջ էր գեղեցկութիւնը: Նման էր պոռնիկ արձանի, որ լայն ու անհարթ մակերեսներով աշխատուած է:

Սլացիկ հասակ մը, արեւոտ դէմք, սեւ մազեր ու մթին աչքեր: Յետոյ, հակառակ երկչոտութեան ու վարանոտ ձեւերուն, կ'արտայայտէր ինքնավստահութիւն եւ ներքին ուժ: Այն սպաւորութիւնը կը թողուր, թէ զիտէ ինչ կ'ընէ եւ ինչ կ'ուզէ: Ամուր կզակ մը եւ սրկուած բերան: Կապուղ արարած մը չէր:

Յաճախ անհասկնալի կը մնար, գիմացիներ ինքզինք կը գտնէր փակ դրան առջեւ:

Այս աղուն մէջ կար աւելին:

Փոքրիկ սեղանին վրայ շարեց. խոզի միսը, պանիրը, պտուղներն ու դանդաղօրէն կերաւ:

Վարէն ուրախութեան ծիծաղներ ու ճիշկեր կու գային: Յայտնի էր, որ ազաքը կը բանային իրենց ստացած նուէրներուն տուփերը: Խաղալիք, պուպրիկներ, փայլուն զղեսոններ:

Մինչ կը ծածէր պատառը, միտքով զնայ ետ, դէպի իր մանկութիւններ: Ամէն ինչ արտամ ու մշուշոտ: Եւ ցաւագին: Զանազ վանել յուշերը: Մանկութիւն:

Ունեցած էր մանկութիւն: Երբեք, որքան կը յիշէր, երբեք խաղալիք մը ունեցած չէր կեանքին մէջ: Իր մանկական տարիները անոնք էին, որոնցմէ մանաւանդ կ'ուզէր ձերբազատուիլ: Թօթուուիլ, մսոնալ, Յաւուղ, արիւնով, ոճիրով լեցուն: Եւ արցունքով:

Անցեալը կը հալածէր զինք: Անիկա միայն իր անցեալն ալ չէր, այլ հօր, քոյրերուն, եղբայրնորուն, դեռ ուրիշներուն: Միլիոն մը Հայերու եւ դեռ անթիւ, անհամար Հայերու, — ցեղի մը ամբողջ անցեալը կը հալածէր զինք: Ահաւոր, անմարդկային: Ծնուող, անհանդուրժելի:

Ու պատուր մեծցաւ, կարծրացաւ, դարձաւ առաձգական զունդ մը ու միտեցաւ կոկորդին մէջ: Ծնչառութիւնը դարձաւ ընդհատ ու ցաւագին: Լոյսը սկսաւ պակսիլ: Լամբին ճառագայթներուն եւ անկիւններէն յորդող խաւարին միջեւ սկսաւ անհաւասար կռիւ մը:

Կեանքը անտանելի դարձաւ: Սեւ մտքեր կտրտեցին ուղեղը: Կը զգար, որ սլաքթիւններ կը ճեղքէին ուղեղին միջոցը: Շրթներուն մէջ կրակ բրունած էր:

Դուռը զարնուեցաւ: Ճնցուեցաւ եւ ընդոտո՝ մտաւ իրականութեան մէջ: Բացաւ դուռը:

— Ներդուրիւն... քեզի քիչ մը կարկանդակ բերի... ես պատրաստած եմ...

Կնոջ աչքերը ինկան սեղանին վրայ, որ համեստ էր, աղքատ ըլլալու աստիճան: Տղան զգաց ու շիկնեցաւ: Նուստապուստի եւ ամօթի գող մը վարակեց զինք: Քշտմանկան աչքերով նայեցաւ տիկնոջ:

Տիկ. ձօհանսըն կարկանդակի պնակը դրաւ սեղանին վրայ, աչքերը յտակց Լեւոնին, մօտեցաւ, աջ ձեռքը ուզեց երկարել, բայց մնաց տեղը դամոնած:

Տղան, շուարուսին մէջ, դեռ նստած էր: Կինը հազած էր մուտ կանաչ գզեւտ մը, լայն décolleté-ով մը, որ կ'իջնէր մինչեւ ստինքներուն ծալքը: (Ասիկա, Հետադային յիշեց յստակ կերպով): Աղամանդեայ մանուակ մը — սօնական նուէր՝ անշուշտ — կը ճառագայթէր պարանոցին, մազերը վեր սանտրած, գէմքը միշտ բոցավառ: Քունքերուն մօտ մազերը այնքան նուրբ ու խարտեայ էին, որ մորթին մէջ կը հալէին: Մազերուն այս նոր սանտրուածքը՝ միշտ ջողարկուած ականջները երեւան էր հաներ.— փոքր, թափանցիկ վարզագոյն, կտրծեւ զգայնութեամբ կը թրթռային:

Կնոջ նայուածքին մէջ խանդապատանք կար: Մայրական կամ քրոջական, Կար նաև իր գեղեցիկութեան ու թարմութեան գիտակցութիւնը հըպարտ եւ, գուցէ, տղուն հանդէպ տածած խանդաղապանքին քիչ մը ակնյին: Պահը այնքան կարճ էր, որ դժուար էր սրտերը կարդալ:

Յաջորդ վայրկեանին, Տիկ. ձօհանսըն անհետացած էր: Տղան չէր կրնար յիշել, թէ Երբ եւ ի՞նչպէս մեկնեցաւ: Այս կնոջ գալն ու երթալը միշտ այսպէս արագ ու աննկատ կ'ըլլային:

Լեւոն անլարժ նստած՝ կը դիտէր փակ դուռը: Արդեօք եկած էր: Աչքերը ինկան կարկանդակի պնակին: Թունդերուն անոյշ, ծանօթ ծաղիկի մը բոյրը կը յամենար: Ձէր կրնար մտաբերել ծաղիկին անունը: Բոյրը եւ քանութեամբ լեցուց սենեակը: Կնոջ ներկայութիւնը դեռ կը յամենար: Տղուն մեկուտը ու դժբախտ սիրտը փարեցաւ անոր: Կնոջ պակասը իր շուրջ, իր մէջ արգէն ցաւագին չափի հասած էր:

Ի՞նչ դժայլիկ էակ է կինը, մտածեց: Կարճ երեւումն իսկ փոխեց միջուրտը: Ե՞րբ է, որ ինք եւս սէր մը պիտի ունենար: Պիտի սիրէր ու սիրուէր:

Ե՞րբ:
Թագուսին՝ մէկէն եկաւ իր խոհուն դէմքով, թախծոտ աչքերով:

Այս թագուհին ալ իրեն նման լուրջ էր, տխուր էր: Նոյն նիւթէն էին պեղուած:

Լուան, էթըրը – դպրոցի աղջիկներ – միշտ դուարթ էին, թրվառն, Կոզմոսիկ ու ճիւղն մարմիններով, արեւոտ ժպիտ մը միշտ կը փթթէր անոնց փղոսկրէ ատամներէն:

Թագուհին ծանր էր, պոսնոզ կարծրութիւն մը ունէր մարմինը: Աչքերուն՝ խորութիւն մը: Միշտ մթին ու խորհրդաւոր: Թագուհին ալ, իրեն պէս, տարրեր նիւթէ պեղուած էր:

Տիկ. Ճօհանսընն իսկ, Հակոբակ իր կնոջ լիացած մարմինին, թեթեւութիւն մը ունէր: Աչքերուն Հիւսիսային կապտաւր այնքան յստակ ու թափանցիկ էր: Այլ շատ խոր ու պայծառ ջրերու նման, երազային: Յատակը յատկօրէն կը տեսնուէր:

Բուրմուռըր դեռ կը յամենար: Կարծես մարմինին գրաւած ծաւալը դեռ չքացած չէր: Մէկէն յիշեց, որ երբ ծուկաւ կարկանդակին պնակը սեղանին վրայ դնելու, զգեստին բացուած քէն երկու կաթնային ստինքներ արտաւայցին: Գողարկի ու կլտը, մեղմօրէն իրարու սեղմուած, մէջտեղը առօրէն ծալքով մը: Արիւնը խուժեց երակներուն, այտերը սկսան վառիլ: Փակեց աչքերը, պատկերը աւելի յստակ տեսնելու եւ սեւեռելու համար: Մռթ մանիշակ խորքի մը վրայ, կրակէ կուրծքերը, միշտ ծալքով մը միացած, ճառագայթեցին: Յանդգնեցաւ աւելի առաջ երթալու: Զարմացաւ իր խիզախութեան: Կանաչ շրջագետը վար քաշեց Տիկ. Ճօհանսընի ուսերէն: Միծերը կաթ կը բուրէին: Երկու վարդապոյն պտուկներ ամօթխածութեամբ արտաւայցին:

Տղան խենթեցաւ, ծունկերը անոյշ անոյշ քուկուեցան, սիրտը նուազում մը ունեցաւ, մորթին տակ կրակներ թափեցան: Աչքերը բացաւ, մեղաւոր պատկերը վանդելու համար: Պատուհանին ապակին կէս մը վերցուց, սառը հովը խուժեց ներս, մարեց մորթին կրակը, հանդարտեցաւ, զգառտացաւ: Ամօթի եւ նուաստութեան զգացում մը վարակեց զինք:

Ձանգերը կը հնչէին ուրախ: Հովիտին վրայ պայծառութիւն մը իջած էր: Փողոցներն իսկ ճերմակ էին. խաւարը չքացած էր: Վարի յարկէն եւս կը բուռէին զանգերը. ռասխօները կ'աւետէին Յիսուսի Մնունդը: Փակեց պատուհանը: Կը սարսառը ցուրտէն եւ ներքին պաղութնէն: Երբտասարդ, ցանկալի կնոջ տեսիլն ալ չէր կրցեր ամոթել վիշաք: Հիմա աւելի մեծ տրեխութիւն մը պատած էր զինք: Անրուժելի տխրութիւն մը:

Լոյսը մարեց, հանուեցաւ, նետուեցաւ անկողին: Աչքերը յառած էր առաստաղին: Գոց վարադրոյրներէն պայծառութիւն կը թափանցէր ներս եւ խաւարը լոյսի նրբին փոշիի կը վերածուէր:

Ձէր կրնար քնանալ: Մինակ էր, գփրտխտ էր: Սիրոյ պէտք ունէր: Երբտասարդը կ'ընդլայնէր, կը տրոփէր, կը նետուէր դէպի կեանքը ու կ'իջնար պարապին մէջ:

Աչքերը յառած էր առաստաղին: Կը ճգնէր տարտամ ու թրթապոց խաւարին մէջ պատկերներ բռնել, ինչպէս կ'ընէր մանուկ օրերուն, հայրենի տան գերանները գիտելով: Ի՞նչ երազներ հիւսած էր: Կորուած խորհրդանշանները վերադարձան, երկիւղած զգացում մը համակեց զինք...

Կը սուրբար գահավէժ անդունդն ի վար, դէպի երկրին քառասուն ուրտները, ուր կ'իյնային դժբախտները, երբեք լոյս աշխարհ չբարձրանալու համար: Լիճ մը կար այտեղ անթափանց, Կ'ըսէին, որ անյատակ էր

եւ ջուրերը սեւ էին: Հոն կը սուզուէին անոնք, որոնք յոյս չունէին այլեւս: Զակատագրին նզովածները, անիծեալ հոգիները:

Երեսուսարդ էր, դժբախտ էր, անյոյս էր: Պորունի գութի գգացում մը բարձրացաւ զէպի անձը:

«Մե՛ղք եմ, մե՛ղք եմ», մրմնջեց:

Պօքերը կաթեկան անյատակ լիճին մէջ, արագ պահ մը տնտնացին դաւադիր ջրերուն վրայ ու մէկէն, սուզուեցան: Նեղ օղակներ, կրկնապատկուեցան, լախցան, դրկեցին անհունը:

Սիրտը բարձրացաւ մինչև կոկորդը, աւելի վեր, մխուեցաւ կոկորդին. կեանքը անշնչելի դարձաւ: Ինչո՞ւ է ինք այսպէս դժբախտ էր: Ո՞ր մեղքին համար, ո՞ր մեղքին...

Արցունք մը միտին: Պտտցած, հպարտ, անհուն վշտով ու կարեկցութեամբ. գուցէ, նսեւ, իր մէջ թուրուն շոգ մը բռնած, մեծցաւ թարթիչներուն, սարսուց, խոշորցաւ, ողողեց աչքը եւ լճացած մնաց: Ու բառ մը, հաղիւ բռնի կանչ մը, զոր կեանքը կորսնցնող գերագոյն ճիգով մը կ'արձակէ:

- Մա՛յր...

Վարժարանի անտես Պրն. էր՞ըր բռնեց զինք.

- Ինձի նայէ, Լիօ, ի՞նչ սևիս, ինչո՞ւ այդպէս սժգոյն ես:

- Ոչինչ, քիչ մը յոգնած եմ:

- Նայէ, տղաս, ես հօրդ տեղ մարդ եմ, քու տարիքիդ լաւ չէ արդպէս նիհարնայլ... աչքերդ փոսը ինկէր են... զիս չես կրնար խաբել... կամ աղջիկ մըն է կամ... ստամոքս... Զիս չես կրնար խաբել... Զեմ կարծեր որ աղջիկ ըլլայ, դուն այդ տեսակը չես... դուն մեր տղոց նման փրճոցած չես... ամբողջ գիշերը կը լեցուին կառքերու մէջ աղջիկներու հետ, սիւսքի՛ր շիշն ալ հետերնին... Այ ինչեր չեն ըներ... Ի՞նչ օրերու հասանք... Մեր ժամանակը բարոյականի գգացում կար... ամօթ կար... պատիւ կար... Ժամանակները փոխուեցան... Դու այդ աղջիկներէն հետու կեցի՞ր...

Ճիշդ մօրս պէս կը խօսի, մտածեց Լեւոն:

Պրն. էր՞ըր շատախօսելու տրամադիր էր միշտ: Լուրիկի պէս կարմիր, մանիակի գարնող կրակներով, ուռած, խմանի քիթով եւ փոք մը, որ էրմէ առաջ կը քալէր: Բարի մարդուկ մըն էր:

- Հէ՛, ի՞նչ ըսիր, ի՞նչ կրնամ ընել քեզի համար...

- Ոչինչ, շնորհակալ եմ... բանի կարիք չունիմ:

- Նայէ՛ տղաս, հոդ տար ինքզինքիդ... Be a good boy... Քու բարիքիդ...

Ձկրցաւ քարոզը շարունակել, անօրէնը դարձաւ շնքին անկիւնը եւ ուղղուեցաւ զէպի դիփուտը դուռը, որուն առջեւ կը խօսէին:

- Հիմա, պէտք է երթամ, յիշէ՛ ըսածներս, աղջիկներէն հետու... անոնք կը սպառեն մարդը... եւ... լաւ կեր... ուտելէն վնաս չի դար...

- Լիօ, ներս եկուք, ըսաւ անօրէնը:

Մտաւ գրասենեակ:

- Նստէ՛:

Վերարկուն հանեց, կախեց պահարանին մէջ: Զեռնոցները դրաւ վերարկուն գրպանը:

- Հիմա... Հա՛, ի՞նչու քանի օր է ճաշարան չես երթար։
Տղան շուտրեցաւ։ Ուրկէ՞ իմացած էր։ Այս մարդը ամէն բան կը տեսնէր։ Սիրտը կը նուաղէր, գլուխը կը դառնար։ Քանի օր է միայն երեկոները՝ աշխատած ճաշարանը՝ կրցած էր պատառ մը բան ուտել։

- Ես ըսեմ, - շարունակեց տնօրէնը, - որովհետեւ դպրոցի ճաշարանին պարտք ունիս։ Այս երկրին մէջ ամէն մարդ պարտք ունի եւ պարտական ալ կը մեռնի։ Այդքան մի սարսափիր պարտքէ։ Վաղը կ'աշխատիս ու կը վճարես։ Ես իտեցայ Հարկ եղածը Օր. Բրայսին։ Երկրորդ պարտք մը եւս կու տամ քեզի։ Դու դնա, կանոնաւոր կեր, որ դասերուդ եւ գործիդ նայիս։

- Բայց, Պրն. Տնօրէն, պարտքը ուրկէ՞...

O, what's the matter with you.

We misseed you terribly...

- Դու հող մի ընէր, - ընդմիջեց տնօրէնը, - պարտքը սուղը ես եմ, ես պէտք է մտահոգուիմ... Գնա...

- Ենորհակալ եմ, - ըսաւ ու վաղեց ճաշարան։

Միս Բրայսը հաստ շրթները լայնօրէն բացաւ, խոշոր ախտանքուն շարքը մինչեւ լինտերը դուրս ցցած, իր առինջնող ժպիտը տղուն վրայ նետելէ ստալ, իր կարճ ու հաստ մարմինը օրօրեց, խայտայ, փքուեցաւ.

- Ո՛ր էիր, Լիւ, սիրելիս...

Ակնոցին հաստ ապակիներուն մէջէն փոքրացած բիբերը հազիւ կ'երևէին։

Օրերը յաջորդեցին իրարու։ Պարտքը ղիզուեցաւ։ Մտահոգութիւնը ստաւ զինք իր թիչերուն մէջ եւ ամէն օր քիչ մը աւելի սեղմեց օղակները։ Օրերը յաջորդեցին իրարու, ձիւնին խաւը հետզհետէ բարակցաւ եւ ստաւօտ մըն ալ հալած էր։ Վտակներ կը վազէին ամէն կողմէ։ Հոտող ջրերը արևէն թիւեր կը թոնէին յանկարծ եւ արծաթ, արծաթ կը քակուէին ճամբաներու եզերքէն։ Տեղ տեղ կը լմանար ջուրը եւ, ահա, երկինքը կ'իջնար երկրի վրայ։

Երգ էր, բոյր էր։

Գարուն էր։

Լեւոն գինովցած էր։

Արե՛ւ, Արե՛ւ... Անկարելի էր սենեակը փակուիլ։ Բոյր շնչող էակները, բոյսերը, հողն իսկ, պատեանները կը կոտրէին, կը նետուէին դէպի արեւը։

Այդ առաւօտ, Լիւ բլուրը կը բարձրանար, թռչունի գմայլելի երգ մը լսեց, Կեցաւ շնչահեղձ ու լսեց։ Ձեզում մըն էր սրտի։ Գերյուզում, որ չէր դիմանար զգացումի ճնշումին ու կը ժայթքէր։

Գոտա թռչունը ծառին վրայ։ Կուրծքին կարմիր-նարնջագոյն շիկնում մը, ճիշդ սրտին վրայ։ Նման երգ լսած չէր։

Վնչքան քիչ եմ տեսած, ինչքան քիչ ապրած...

Դեռ ինչքան պիտի ապրէր. տեսնէր, զգար, լսէր։ Անցեալը կարճ էր եւ ապագան տնտեսօրէն երկար։ Բռնած էր կեանքի թելը եւ յուշօրէն կը փաթթէր։ Դեռ երկար ժամանակ։

Մաւալը կորսնցուց, ծանրութիւնը կորսնցուց, ծիպաց։

Ձուրերը արծաթ կը քակուէին, հովր կ'անցնէր, թռչունի երգը իր էութենէն է, որ կը ցայտէր։ Կրնար ձեռքը երկարել ու արեւը բռնել։ Տար էր, հանելի, թրծող ու մաքրագործող։

Ու մէկէն մինակութիւն զգաց :

Մարմինը ամբողջացաւ, դարձաւ տուք ու լեցուն, արիւնը արագացուց շրջանը եւ ըղձանք մը, կարօտ մը հին – եւ այնքան նոր ու անմիջական – ուռեցաւ, նետուեցաւ սփռուի մը ցանկութեամբ ու մնաց մէջոցին մէջ անուարտ, իր լրումին չհասած :

Մինակ էր :

Բնութիւնը կը նմոնի կնոջ : Իր պահուած հմայքները աստիճանաբար կը դիջէ : Իրեն ձօտենալու եւ դինք յաղթահարելու կերպերը բարդ են : Երբ վտառահի քեզի, կը քողազերծէ սախարհն իր հրապոյրներուն :

Լևոն կորսուած էր կտխարդակոն կայքերու մէջ : Լոյսեր բռնած կը բարձրանար, կը բարձրանար լեռները : Երկինքի կապտաւ կը խորանար, բերեղ կը դառնար : Մայրիներու եւ եղբիներու բոլոր կը գինովցնէր զինք : Հովը անտես ջրեր կը շարժէր սողարթներուն մէջ :

Հովիտին խորը լճակ մը կար ուռիներուն տակ : Մեկուսացած, մենաւոր : Ոչ ոք կ'տնցնէր անկէ : Իր նահանջի ապստոանն էր այդ : Յաճախ կ'երթար հոն : Կը լսէր հոգի, կը ջանար միջասանբու հծծիւններուն բարբառը ըմբռնել : Կը դիտէր ցուրբերը ջուրին վրայ : Մթին կանաչ, կապտա ստուերներով շրջակայքը կ'անդրադառնար լճին վրայ եւ իրականութիւնն ու անդրադարձը կը մտախնայէին : Հեղուկը սեւ թափելի պէս կը խորանար եւ անդունդին ձգողութիւնը կը թովէր աղան :

Բնութիւնը շունչը բռնած էր : Լուսթեան մէջ նոր լինելութիւններ կը կերպաւորուէին : Անկենդան աշխարհը, անբացատրելի հրաշքով մը, կ'ոտանուր զէպի կենսք : Լուսթեան եւ այս հմայուած անգորրութեան մէջ, կենսաբէ հրաշք տեղի կ'ունենար, սովն վայրկեան, իրբեւ սովորական երեւոյթ մը :

Խշրտուք մը ետին :

Խարտեաչ, շիկնած, սլացիկ հասակ, բուրբիլ ոտքեր : Կուրծքերը ցըցուած : Արագ նայուածք մը ընդզրկեց այս բոլորը :

– Ի՞նչ է տնունդ :

– Լեւոն, ըսաւ աղան չոր կերպով ու շարունակեց պառկել : Աղջկան ներկայութիւնը շփոթեցուց զինք : Տհամեցաւ բացայայտօրէն :

– Ի՞նչ անուն է այդ : Երբեք չեմ լսած : Ամերիկեան չէ :

– Հայ եմ :

– Հա՞յ... Ի՞նչ է այդ :

Տղան տեղէն ցատկեց, նստաւ : Աչքերուն կրակը յառեց աղջկան : Աղջկան տչերը շուարեցան, բայց շրթունքին ծայրը հեղնական պրկում մը կախուեցաւ :

– Գնա աշխարհագրութիւն սորվէ... Գուք Ամերիկացիները ձեր քիթէն անդին չէք տեսնուր արդէն...

– Մի բարկանար : Մարդ սովն բան չի կրնար գիտնալ... բայց կ'ուզեմ սորվել... Խնդրեմ, համբերատար եղիւր հետս եւ բացատրէ...

– Ուրիշ օր մը :

– Շատ մարդամօտ չես : Ինչո՞ւ բարկացած ես :

– Բարկացած չե՛մ, – պոռաց աղան :

Ձինչ աներես ճանճ է», մտածեց :

– Բացայայտ է, որ ներկայութիւնս անհանոյ է քեզի... I am sorry...
կերթամ, good bye ըսաւ, բայց տեղէն չչարժեցաւ: Սպասեց որ տղան
«կեցիր» ըսէ ու ներողութիւն խնդրէ իր կոպտութեան համար:

Տղան սեւ գլուխը կախած կը սուլէր:

«Ի՞նչ սեւ մազեր ունի, ճիշդ դիւերուայ պէս», – ըսաւ աղջիկը մտո-
վի, – «միայն երանի թէ սոփրիչին երթար»...

Մազերը ծոծրակը կը ծածկէին մացառի պէս ու շապիկին օձիքէն ներս
կը սողոսկէին:

«Ի՞նչ տարօրինակ կենդանի է, մերիններուն չի նմանիր», շարունակեց
մատնել աղջիկը:

Ջղայնոտ, ոտքը քոեց խոտին, ուշադրութիւն հայցելով: Տղան շա-
րունակեց սուլել:

«Ի՞նչ գլուխ», ըսաւ աղջիկը իւրովի եւ քալեց ու տղուն դիմաց ցըց-
ուեցաւ, ձեռքերը մէջքին:

– Կոպիտ սղոյ մըն էս դուն:

Տղուն արիւնը գլուխը ցատկեց:

Աղջիկը գեղեցիկ էր, խարտեաշ, լուսաւոր, ախպէս ինչպէս երա-
զած էր:

– Խերն անիծեմ բախտին, – ըսաւ հայերէն, – սատանայի նման գե-
ղեցիկ է:

– Ի՞նչ լեզու է այդ:

– Մեր լեզուն... Հայերէն:

– Ինձի չինարէն թուեցաւ:

Տղան վերաւորուեցաւ:

– Եթէ հայերէնը չես սիրեր, ինչո՞ւ կը տնտնաս, կորսուէ՛, դեմ ե-
կած ճամբէդ:

Աչքերուն մէջ վայրի բոցեր կայծկլտացին:

Աղջիկը վերաւորուեցաւ, նուաւտացաւ ու վախցաւ: Տարօրինակ,
տարբեր ազայ մըն էր: Բոցերը թափանցեցին մարմինէն ներս, տաքցաւ:
Վերաւորուեցաւ, նուաւտացաւ, բայց հմայուած էր: Այդ որքան ուժ զէմ-
քին պրկումներուն մէջ: Բայց, սատանան տանի, կոշտ է, վայրենի է, ան-
հասկնալի է... Այո՛, բաւր ճիշդ է, – վայրի՛...:

– Այո, ըսաւ, վայրենի է, կատարեալ բարբարոս մը, որ պէտք է ըն-
տելացնել:

Աղջիկը հմայուած էր:

Բայց մէկին յիշեց վերաւորանքը:

– Ի՞նչ է, դիս կը վունտե՞ս... Այստեղ ազատ երկիր է... Եւ ես քեզ-
մէ առաջ եկած եմ... այս հողին ծնունդն եմ... Իմ նախահայրերս եկան
առաջին ուխտաւորներուն հետ...

Տղան յուսահատեցաւ:

– Ինչո՞ւ հանդիստ չես թողուր դիս... Իմ նախահայրերս ալ Ադամէն
եւ Սեայէն սերեցան... Կը յիշե՞ս, դրախտը Հայաստանի մէջ էր... Գնա,
Աստուայ սիրուն...:

Աղջիկը անդուսպ մղում մը ունեցաւ տղուն պիտուն բան մը իջեցնե-
լու: Տղան դպաց ստիկա եւ սպառնական նայեցան իրարու: Աղջկան նայ-
ուածքին մէջ մոլեգին, բայց յուսահատ կատաղութիւն մը կար, որուն պա-
շտանք մ'ալ պլլուած էր: Տղուն պրկուած շրթներուն ծայրը արհամար-

Հական ժպտա մը կը տնտնար, ինչ որ աւելի կը կատարէր ազլիկը :
Լեւոն, այդ կարճ ու լարուած պահին մէջ, տեսաւ աղջիկը :

Երթները պինդ սեղմած, այտերէն կարմիր ալիքներ կ'անցնէին : Նայ-
ուածքը մանաւանդ, թափանցիկ ու երազուն : Աղջիկը բնադրօրէն գլաց իր
յաղթանակը եւ, թէ եւ խօսքի մէջ պարտուած, կը զգար որ կ'անցնէր հե-
տըզհետէ սողուն մորթին տակ եւ սողուն կոշտութիւնն ու հեգնանքը, ի վեր-
ջոյ, ակարտութիւն մը կը պարտկէին : Տարտածօրէն, բայց կնոջ անտխալա-
կան բնավույժ, զգաց այս ամէնը – սպառնական այդ կարճ պահին մէջ :

– Մի պոռար, – ըսաւ, խորհրդաւոր ժպտով մը, – մի պոռար, իսու
չեմ... Պէտք չունիս բարկանալու... Եարունակէ ճպնուդ, պիտի չխան-
գարեմ, խօսք կու տամ... պիտի հանդիստ թողում քեզ, արեւելքի խորա-
մանկ բարեկամս... Եարունակէ, եթէ կրնաս...

Ձեռքերով, հտուէն գրկած էր ծառ մը, կոնակը տուած բունին, դէմ-
քը նետած ետ, հեշտոտ ժպտա մը շրթներուն : Ըսել կ'ուզէր. «Ձերազատ-
ուէ, եթէ կրնաս, կախարդանքէս» :

Տղան կը դիտէր աղջիկը, որ ոչինչէն ծնած էր : Աչքերը նուազած
էին եւ հեշտանքը քիչ մը պղտորած էր զանոնք : Երթները կիսաբաց, ան-
դիմադրելի ձողականութեան մը թովչանքը զգեցած : Արեան մէջ արթըն-
ցած էր վաղուց զսպուած կանչ մը, որ չէր հանդարտեր այլեւս :

Թուերն ու ուրը պրկուած ետ, կուրծքը նետած առաջ, որուն վրայ
կը ցցուէին ծիծերը՝ ուռած եւ մեղաւոր :

Տղան կը վառէր : Միտոր ոստում մը ըրաւ եւ սկսաւ խելայեղ զար-
նել : Ձգաց, որ աղջիկը կը մանկը միտերուն մէջ : Մարմնին շուրջ արագօ-
րէն կը հիատուէին կախարդանքին թելերը եւ, կը դարձանար, որ բնդդիմու-
թեան որեւէ փորձ չէր ըներ, մատնուած էր կրաւորական անձատուու-
թեան մը :

Դէմքին վայրազ բոցը մարած էր, մեղմացեր էին պրկումները, միայն
աչքերուն խուժած էր արիւնը ցանկութեան : Դէմքը կ'արտայայտէր անօգ-
նական, շուարած մանկութիւն, որ զուրկ չէր ծիծաղելիութենէ :

Աղջիկը, յաղթական, ծիծաղեցաւ :

«Ինչ է, վրաս կը խնդայ», – ըսաւ տղան իւրովի, ականջները մա-
նիշակի դարնող շիկնում մը ունեցան : Ըսկատր պաղ քրտինք պատեց :

«Վրաս կը խնդայ, վրաս կը խնդայ», կրկնեց :

Քրտինքը ողողեց դէմքը, սկսաւ քթին ծայրէն կաթկթիլ : Ջրայնա-
ցաւ, մեղքով սրբեց քրտինքին կայլակները, – աւելի քրտնեցաւ : Ուզեց
մեկնել, փախչիլ այս աղջիկէն : Հպարտութիւնը թոյլ չտուաւ : Եուարեցաւ
ընելիքը : Անիծեց, բիրտ բառեր ըսաւ : Ոչինչով չթեթեւցաւ կացութիւնը :
Իր տկարութիւնը այս օտար աղջկան դիմաց, դինք կատղեցուց :

– Կորսուէ՛, գնա՛, – ըսաւ Հայերէն :

– Կը վախնա՞ս անպիւրէն խօսելու, – գրգռեց դինք աղջիկը :

Կուրծքերը աւելի ցցուած էին :

«Ձի ամչնոր, չի ամչնար», ըսաւ ինքնիրեն :

Ու խնթութեան փայլակ մը : Աջ մատները շղաճօրէն դալարուե-
ցան : Անպուսպ ցանկութիւն մը աղջկան վրայ ոստնելու եւ զայն թեւերուն
մէջ ճմլելու : Դեռ տւելին. անխոստովանելի ցանկութիւն մը՝ իր շրթներուն
մէջ աւնելու անոր կարմիր շրթները եւ ցաւցնելու, ցաւցնելու :

Ամչցաւ իր այս անվայել իղձերուն համար, նուաճապաւ, մեղքի

զգացում մը ճակատի սիրտը: Չորմացաւ իր անբարտառանդութեանը:

- Դուն ո՞վ ես, որ քեզմէ վախնամ... Թո՛ղ արարած:

Աղջիկը շահողուեցաւ: Մէկէն կատուի նման ցատկեց մօտը, ծունդի եկաւ խոտին վրայ, թևերը միշտ սրկած ետին, - բան մը՝ որ կուրծքերուն կու տար խոյանք մը եւ որ ազուն հաւանութեան չէր արժանանար, - նայեցաւ տղուն աչքերուն, համարձակ, առանց խզնելու, հրաւիրող իզուրբեամբ:

Աղջիկը կը յարձակէր: Իր բոլոր ուժերը նետած էր պայքարին մէջ:

Առաջին անգամն էր, որ աղջիկ մը այնքան մօտէն կը նայէր իր աչքերուն: Յիշեց Թագուհին, արաչ բաղդատութիւն մը երկուքին միջեւ:

- Անամօթ, անամօթ... չի ալ ամչնար, - կը խօսէր հայերէն:

Ձերմութիւնը գինք պատած էր: Հետզհետէ կը թափանցէր, կը զրկէր գինք, կը բարձրանար: Վրէժը՝ որ երբ հասնի ուղեղին պիտի նուազում մը ունենար, կորսնցնէր կամքը...

- Ետիս անցիր սասանայ... Ետիս անցիր, շո՛ւտ, շո՛ւտ...

Դէմքին մօտ, շատ մօտ էր... շնչեց բոյրը շունչի մը, որ կաթի պէս էր... մազերը դպան ախերուն, շոյեցին... անո՛յն, անո՛յն սարսուռ մարմինը... սիրտը հայեցաւ, նուազում մը... աչքերը մթնցան եւ ինքնակորոյս... (բան մը, որ բերեց չկրցաւ բացատրել) հզօր ճանկերով բռնեց աղջկան մազերը եւ շրթները առաւ շրթներուն մէջ...

Աստղերը դարձան իրենց ծիրին մէջ, ամէն ինչ լոյսի վերածուեցաւ: Թրթուացում եւ կշռոյթ մը:

Առաջին համբոյրն էր:

Մայրը կը գրէր.

«Աղջիկներէն հետու կեցիք, տղաս, մի խարուիր անոնց ժողովներէն եւ քաղցր խօսքերէն»:

Ահա թէ ինչ:

«Աստուած քեզ երեւելի եւ աներեւոյթ շար փորձանքներէ պահէ:

«Միշտ կը սպասեմ քեզի: Դուն ես, որ գիտ կանգուն կը պահես: Ծամբաղ կը սպասեմ, Յակոբին պէս, այն յոյսով, որ օր մը պիտի դիմաւորեմ քեզ ու սեղմեմ կուրծքիս:

«Իմ յոյսս, վերջին օրերուս արեւը, օրհնեալ բլլաս»:

Ահա թէ ինչ:

- Ի՞նչ կը գրէ մայրդ:
- Ոչինչ՝ որ քեզ հետաքրքրէ:
- Ինչո՞ւ ծո այլքան անդա՞յ եմ:
- Այդ չէ հարցը:
- Հապա ի՞նչն է:
- Հանդիստ թող գիտ, Լս կը խառնուի՞մ քու ընտանեկան խնդիրներուդ:

- Երանի խառնուէիր: Կ'ուզեմ, որ հարցնես մեր մասին, հետաքրքրութիս մեղմով:

Աղջիկը լիովին չէր հասկնար այս տղան: Տեղ մը կու գար, երբ ճակատը դոյ դրան կը վարնէր:

- Ինչո՞ւ ես չեմ կրնար մօրդ մասին իմանալ... կ'ուզե՞մ, կը հասկը-

նա՞ս, կ'ուզեմ որ պատմես... Աւրիչներ կը պատմեն...

- Ես ուրիշը չեմ:
- Ձե՞ս սիրեր զիս:
- Ահա թէ ինչ... Օրը քանի՞ անգամ կը հարցնես այդ հարցումը...

Աւրիչ կարեւոր բան չկա՞յ քեզի համար:

- Ա՛յ:
- Շքեքերը մատոյց, աչքերը փակեց, սպասեց...
- Տղան չհամբուրեց այս անգամ:

Կինը բնազդով ըմբռնեց, որ այդ նամակին մէջ բան մը, անուղղա- կիօրէն գուցէ, կապ մը ունէր իրեն հետ:

«Այս արեւելեցիները, ըսաւ մտովի, իրենց մայրերը աւելի կը սիրեն»:

- Ինչո՞ւ զիս շեւ համբուրեր, հարցուց:
- Գու ամօթ ըսուածը չունի՞ս... Գո՞ւն է, որ ինձի պիտի ըսես՝ թէ երբ...

- Գուք արեւելեցիներդ կեղծաւոր էք... կինը ձեռքի համար ապրանք մըն է, տեսակ մը սեփականութիւն... պէտք է շարժի, երբ հրամայէք... պարէ, կրք մեր հաճոյքը ուզէ... Ե՛ւ... Ե՛ւ...

- Ի՞նչ կայ ատոր մէջ տարօրինակ... Մենք տէրերն ենք... Այրը բը- նականէն...

- Ահա թէ ինչ... բնականէ՛ն, բնականէ՛ն... Ձեր, հաստագլուխ այ- րերու ստեղծած փիլիսոփայութիւնն է այդ... Տէրե՛րը... Մարդ եւ կինը հաւասար կը ծնին, կը հասկնան, պինդ գլուխ արեւելեցի, հաւա- սա՛ր... Ընկերային պայմաններն են, որոնց մէջ կինը - ին՞չ՞է կին - դըր- ւած է ձե՛ր կարգադրութեամբ, զայն կը դարձնեն տարբեր, տկար...

Հասած էին առուակին եզերքը, ուր կու գային յաճախ: Ոտքերը մեր- կացուցին ու տունն ջուրի հեշտանքին: Ուղղապարհին մը տերեւներուն մէջ հազիւ կը ծփար: Հոլմը երբեմն, հաղիւ կը փոխէր մակերեսը այս անդառ- րին: Պահուած ծաղիկ մը կ'արտաշնչէր իր վննուլթեան զոլմանը:

- Կ'ուզե՞ս շարունակել վէճը:
- Տղան լուռ էր:
- Այր եւ կնոջ յաւիտենական վէճը:
- Ի՞նչ վէճ, - ըսաւ տղան, - բեւեռներն ալ իրար կը քաշեն ու կը վանեն: Տիեզերական խորհուրդ, որ գուրկ չէ իմաստէ: Կը քաշեն ու կը վանեն զիրար ու անբաժան են: Ալ երկրորդական է, թէ ով աւելի կարե- ւոր է, ով աւելի մեծ կամ հզօր:

- Ահա թէ ինչ, մէկէն շտա բարձրերը թռար... բայց աղուոր է ինչ որ ըսիր... Անբաժան են տիեզերական հորովոյթին մէջ... Հիանալի է... Գու գրելու շնորհք ունիս...

- Լրջօրէն... նայէ կեանքին... նախադրձակ ուժեր կան եւ կրաւո- րական...

- Պըլոսի... Գիտեմ ի՞նչ պիտի ըսես... պարապ խօսք...
- Ահա կինը: Թուրու անկարող, երկրային էակ: Ես ալ գիտեմ, թէ դո՛ւ ինչ կ'ուզես:

Եւ առաւ աղջկան զլուխը եւ շքեքերը միացան: Թռչուն մը, ճիշդ իրենց վերեւ, սիրտը դուրս կը թափէր: Ակիւռ մը պոչին թաւիչը քսեց ու կորսուեցաւ թաւաններուն տակ:

Պահը քաղցր, քաղցր կը քակուէր: Ականջները հծծիւններու իսկ հանդէպ գրայուն էին: Ռունգերուն կաթիլ ու մուշկի բոյրեր կը քուռէին: Ձեռքերը ջղախին ու յանդուպն: Միայն աչքերը փակ էին դէպի տեսանելի աշխարհը եւ բացուած էին ներքին արեւներու:

Արեւելքցին դեռ կրօնական դաստիարակութեան կաշկանդումին տակ էր եւ իր բնածին յանդուսթիւնը զսպուած էր: Ամերիկուհին, ձերբազատուած սեռային սլայմանադրականութենէ, կը նետուէր դէպի այրը անձնատուր գալարումով:

Լեւոն համբոյրներէն անդին շէր խիզախեր: Սահմանն այդ էր իր նուաճումին: Աշխարհը հոն կը վերջանար, անկէ անդին արդիւնաւոր կայքերն էին: Աղջիկը հրայրքին մէջ, խարխալեցող կը զսնէր տղուն ձեռքը եւ դայն կը սեղմէր կուրծքին, բայց արեւելքցին յամառօրէն կը տնտնար սահմանին վրայ:

- Եկող շարաթ օր մեր հայախնայի պարահանդէսն է: Անշուշտ պիտի ընկերանաս ինձի:

- Ո՛չ:

- Կ'ուզեմ ընկերուհիներուս ցոյց տալ քեզ... արդէն խօսած եմ քու մասեր... Ամէն մարդ կ'ուզէ տեսնել եզիպտացի շէյթը...

- Ի՞նչ:

- Մենք Ամերիկացիներս կը խենթենանք Արեւելքի համար, մանաւանդ Եզիպտոսի... Պիտի գաս, չէ՞...

- Ո՛չ:

- Բայց ինչո՞ւ:

- Ես պարահանդէս-մարահանդէս չեմ երթար: Ես ցուցադրութեան ապրանք չեմ:

- Սո՛ւտ ես... Ըսել կ'ուզեմ՝ պարել չես դիտեր, ատոր համար չես ուզեր երթալ... Ես կը սորվեցնեմ քեզի...

- Ո՛չ:

- Կը խնդրեմ... կ'ուզեմ քեզի հետ երթալ... բնական է, չէ՞, ... կ'ուզեմ քեզի հետ պարել...

- Ո՛չ:

- Կ'ուզե՞ս, որ ուրիշ տղու մը հետ երթամ:

- Համարձակէ, եթէ կրնաս:

- Եթէ չգաս, ուրիշի հետ կ'երթամ... ստիպուած...

- Գլուխը կը ջարդեմ:

- Ի՞նչ լաւ է... Բայց պիտի երթամ անոր հետ, եթէ չընկերանաս ինձի...

- Ըսել կ'ուզես, արդէն մէկը նկատի ունի՞ս...

- Ճանին կայ, որուն հետ կ'ելլէի քեզ շնանչած:

- Երբ ինձի հետ ես, ուրիշի հետ չես երթար... Մենք հաւատարիմ ենք եւ հաւատարմութիւն կը պահանջենք... Մենք յեղեղուկ չենք ձեռք պէս... Մեր Աստուածը վրէժխնդիր է...

- Մենք ալ հաւատարիմ ենք, եթէ միւսը յարգէ կանոնները...

- Այսի՞նքն:

- Ամէն ինչ փոխադարձ է... Եթէ դուն չես սուգեր զիս պարահանդէս

տանի, կ'երթամ ձտնիին հետ: Բնական է, որ իմ տարիքի աղջիկներ պարահանդէս երթան, զուարճանան... Հիմա չընենք, ե՞րբ պիտի ընենք... կհանքի օրէնքն է...

- Պարահանդէ՛ս, պարահանդէ՛ս... Կեանքը քեզի համար խաղ է, համբոյր, շոյանք... Ինչ պիտեմ դեռ ի՛նչ... Բաժնակի մէջ մեծցած շաքարէ պուպրիկ... Դու բնաւ զրկանք տեսա՞ծ ես... անօթի մնացած, բուպիկ, կիտամերկ պարա՞ծ ես... Յօշոտուած մարմիններու հետ պառկա՞ծ ես... Սատանան տանի քեզ ե՛ւ պարահանդէսը... Պարահանդէս չի՞ս երթար, վերջացաւ սնաց... Եթէ երթաս, վերջացած է... կը հասկնա՞ս...

- Ահա թէ ինչ, երեւի պէտք է ըսեմ. «Այո՛, Տէրս, ինչպէս որ կը ցանկաս... Ինչո՞ւ քիս օղակ մըն ալ չես անցըներ... Գերիդ եմ, չէ՞... Զիս գերիներու շուկայէն սնեցիր, աճուրդով... Ետքիդ պէս պիտի հետեւեմ քեզի, Տէր իմ, պոժողէ աստուածս դաժան... Քեզի հիմա խորհուրդ մը տամ — Վար իջի՛ր պատուանդանէդ, հոս Արեւելք չէ... աշխրէթներ չկան... Քաղաքակրթուած երկիր է հոս...

Տղան պողպատէ ճանկերով բռնած էր աղջկան ուտերը եւ վայրագ նայուածքը յառած էր անոր աչքերուն:

- Ես չեմ սիրեր շատախօս աղջիկները, - գոռաց, - ըրէ այնպէս՝ ինչպէս կ'ըսես... կը հասկնա՞ս...

Այնպէս մը ցնցեց խեղճ աղջիկը, որ երբ ճանկերը վերցուց, աղջիկը կուսակին վրայ ինկաւ:

- Վայրենի՛, վայրենի՛, - դռնեց ցաւած աղջիկը, - կ'ատե՛մ քեզ... Արցունքները ժայթքեցան:

- Եանցանքը իմս է, որ քեզի կարեւորութիւն ընծայեցի: Պոռնոզ աստուածը բարձրէն նայեցաւ իր բոցէ աչքերով.

- Դունն ո՞վ ես, ճճի, որ ինծի կարեւորութիւն ընծայելու մասին կը խօսիս... Ե՛ս է, որ զիջեցայ իջնելու քեզի...

- Վայրենի՛, վայրենի՛... Ինչո՞ւ չես երթար հօն, ուրկէ եկար... Վայրի Ափրիկէ... կ'ատեմ քեզ...

Արցունքները հասեցնելէն մեկնեցաւ արագ:

Նետն, նախ անտարբեր, ապա խիստ յուզուած, հետեւեցաւ աղջկան, որ արագ կ'իջնէր բլուրի արահետէն, մինչեւ որ ծառերու ետին կորսուէր:

Ահուելի մինակութիւն մը դաաց:

(Շար.) Բ. Կ.



ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՏԽՈՒՐ ԵՐԳ

Նոյեմբերի քախծանոյշ, արտասուացող երկնի տակ,
Երբ կ'ազօթեմ սիրահեծ շիրմիդ առջև գլխահակ,
Կ'անցնին յուշեր սգաւոր վտակն ի վար հոգիիս
Նման խցող մահերգի, ո՞վ վազամեռ վարժուկիս:

Իմ մանկախոհ, հե՛ք մտքին առաջին հեղ դաւն բացիր
Դռները տուրք տամարին Մեսրոպաշունչ Հայ լեզուին,
Ու բառերովն իր եխթեղ զիս մօր մը պէս սնուցիր
Նորանին մէջ խնկարոյր իմ պապերուս հաւատքին:

Դո՛ւն ուսուցիր ինձ լսանդով սիրել ողջ փառքը մեր հին,
Եիգախ խոշամքը Հայկի, թուրը՝ Մասնոյ Դաւիթին,
Եւ ճիւղերովը դալար վարդանի յազք Ոգիին,
Պատուաստեցիր խնամքով կեանքիս վնիտ ծիրանին...:

Եկեղեցւոյ վեհ յարկին գաւիթին մէջ ծուարած՝
Տագարեցիր իմ հոգիս հայրենաբազմ երգերով,
Ու մերթ՝ ձայնիդ ընդմէջէն, ցարտ օրերուն տխրամած,
Մայր Արաբիս ջուրերուն լսեցի ողբն այնխոռով...:

Թիթեռի պէս թռչուցի երբ մեր օճախը Լոյսի,
Ես՝ մորածաղկ պտտանի, ուսման տենչով բարախուն,
Նայն բոյնիդ մէջ մնացիր դուն տարիներ անդադրում,
Ուր տէնեցար, մաշեցար նոյն ցաւերով տանջալի...:

Մայրագործով շունչիդ տակ քանի՞ սերունդ հասցուցիր,
Քանի՞ մատաղ աղջիկներ՝ շոյող ու ջերմ ափիդ մէջ,
Ռոնձ դարձած են հիմա մէյ մէկ մայրեր սիրալի,
Իրենց կարգին կրթելով երեխաներ լուսատենչ...:

Բայց, մինչդեռ դուն չտեսար ոչ մէկ նարոտ պսակի,
Եւ չուռնացաւ սերմերով անբիծ արգանդդ կոյսի.
Չըմբռշխեցիր կարօտով կրծքիդ վրբայ մայրական
Լացն ու ծիծաղն աչքերուն զէր գաւկի մը սիրակամ:

Յուրս մահիճիդ մէջ մահուան երբ ալ ինկար ոգեպառ,
Չմերձեցաւ քեզ ոչ ոք, ոչ մէկ հայեացք մտերիմ.
Տառապանքիդ այլ միայն եղերամայրը թշուառ
Տիւ ու գիշեր, սրտիդ մօտ, քեզ սխտեց լայագին:

Կուլա՛ն հովերը հիմա շիրմիդ վըրայ տրտմանայն,
Մենութեան մէջ հծծելով կեանքի խորհուրդը ունայն,
Ու կը սփռեն սրտիս մէջ յիշատակիդ բոյրն անոյշ.
Իմ մանկութեան չքնաղ մայր, ով տարաբա՛խս վարժուկիս:

Մարտ, 1963

Գէորգ



« ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑ »

«Բագին»-ի խմբագրութիւնը գրականութիւն ընող եւ կամ գրական հարցերով մտնէմ հետաքրքրուող քաղաքիս հայ երիտասարդութեան համար ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑ անուան տակ հանդիպումներ սկսած է կազմակերպել իր խմբագրատան սրահին մէջ: Գրական նիւթի մը շուրջ (որուն մասին նախապէս տեղեկ կը պահուին համադիպումներուն մասնակցող երիտասարդները) զեկուցարարի մը համատուտ եւ ընդհանրապէս *թեքնիք* հարցեր շօշափող մէկ զեկուցումէն ետք, մերկաներուն մէջ կարծիքներու լայն փոխանակութիւն մը կը կատարուի, որուն ընթացքին կարգ մը հարցեր որոշ չափով կը պարզաբանուին, կը ծագին, յամայն, նորանոր այլ հարցեր, եւ այսպէս, գրականութեան շուրջ ոգեւորութիւնը կ'անի, հետաքրքրութիւնները եւս առաւել կը սրուին: Կը ստեղծուի մէկ խօսքով գրական մտերմիկ եւ տաք մթնոլորտ մը, որուն այնքան պէտք ունի ամէն գրող, մամուլանդ երբ սկսնակ է տակաւին:

Ուրախ եմք, խորապէս ուրախ, որ մեր երիտասարդները գրականութեան հանդէպ վայել լրջութեամբ ու ջերմ հետաքրքրութիւնով իրենց մասնակցութիւնը կը բերեն «Բագին»-ի այս ձեռնարկին:

Պէտքութեան հետեւ եղող գրագէտ ու գրասէր երիտասարդ սկզբնակները ևս հազարդ պահելու համար երբեմն մեր *Գրական Զրոյցի* այս ձեռնարկին, պիտի աշխատինք այսուհետեւ կարգ մը զեկուցումներ հրատարակել «Բագին»-ի մէջ:

Ցարդ, *Գրական Զրոյցի* երեք հանդիպումներ եղած են, ճննույնեան նիւթ ունենալով գրական սեռերէն, – ՊԱՏՄՈՒԱԾՔԸ:

Յաջորդ էջէն սկսեալ կու տանք գրագէտ Նուպար Զարիսուհանի զեկուցումը պատմութեան մասին:

ՆՈՐԱՎԷՊ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԱԾՔ

(ԶԵԿՈՒՑՈՒՄ)

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Վերազրուեցեան երեք զլիաւոր ձեւերն են.

Վէպ,

Մանրավէպ կամ Հեքիաթ,

Նորավէպ կամ պատմուածք:

Վէպը միւս երկու սեռերէն կը տարբերի մասնաւորապէս իր ծաւալով, դործող անձերու թիւով, եւ ընդգրկած լայն հորիզոնով:

Մանրավէպը կամ Հեքիաթը, կրնայ Նորավէպէն աւելի կարճ կամ երկար ըլլալ. սակայն անկէ կը տարբերի իր հրաշագան կամ Փանթասթիք բնոյթով, աւելի ուժ կու տայ քմայքի կամ երեւակայութեան: Անձերը կը պործածէ իբր խորհրդանիշ, արտայայտելու համար ժողովուրդի մը կամ դարաշրջանի մը հոգիներն եւ փիլիսոփայութիւնը:

Այս սեռին կը պատկանին Հագար աւելի գիշերները, Շարլ ֆեռոսի եւ Անտիբոյնի Հեքիաթները:

Նորավէպը կամ պատմուածքը, խտացած վէպ մը չէ միայն, ինչպէս շատեր կը կարծեն: Նորավէպը ընդհանրապէս կը զարգացնէ մէկ զէպը եւ կ'ուսումնա-

սիրէ անոր հոգեկան անդրազարձները սեղմ շրջանակի մը մէջ. կու տայ կեանքին մէկ երեսը, բարքերու մէկ նկարը: Գործող անձերը թիւով քիչ են, հագու մէկ կամ երկու, եւ ունին իրենց ուրոյն հոգեբանութիւնը, որուն միայն մէկ երեսոյթը կ'ուսումնասիրուի: Մէկ խօսքով, ինչպէս կ'ըսէ Փօլ Պուրժէ.՝ Նորավէպը կը պահանջէ գոյնի միութիւն մը, նկարագրութեան քանի մը հպումներ: Եթէ վէպը խմբերգ մը կամ սէնթոնի մը նկատենք, նորավէպը մեներգ մըն է, սուր մը:

Վէպին դործողութեան նիւթ կազմող զէպերը կրնան աննշան ըլլալ.՝ մանաւանդ իրապաշտ վէպերուն մէջ,՝ նորավէպին մէջ զարգացող զէպը պէտք է ըլլայ նշանակալից, շահադրոտը եւ ուժեղ:

Իսկ մեծագոյն տարբերութիւնը վիպասանին եւ նորավիպագրին մէջ տեսակէտի հարցն է. ինչպէս կ'ըսէ Ալպէս Թիւպօտէ.՝ Վիպասանը կը նետուի հոսանքին մէջ ու կը նաւարկէ իր նիւթին եւ տիպարներուն հետ, մինչ նորավիպագրը կը կենայ գետափին վրայ, իր պատանով եւ վրձիններով եւ կը մնայ անտարբեր իր ստեղծած տիպարներուն վիշ-

տերուն եւ ուրախութիւններուն :

Մէկ խօսքով, նորավէպին բուն արժէքը պէտք է փնտռել իր գեղարուեստական կոտորելութեան մէջ :

ՆՈՐԱՎԷՊԻՆ ԽՈՐՔԸ

1.- Նիւթ.- Ինչպէս վիպասանը՝ նորավիպագիրը կրնայ իր նիւթերը վերցընել հետեւեալ աղբիւրներէն, զորս կրնանք ամփոփել երկու բառերու մէջ. ՄԱՐԳԻՆ ու իր ԱՇՆԱՐՆԷ :

Ֆիզիքական միջավայր. աշխարհագրական գիրքաւորում :

Սովորութիւններ, ասանդոթիւններ, մշակոյթ, կրօնք :

Կեանքը իր բազմազան էրեւներով. քաղաքական, ընկերային, տնտեսական, հանրային և անձնական :

Մարդկային սիրտը իր զգացումներով եւ կիրքերով, որոնց զօրաւորագոյնը՝ սէրը :

Մէկ խօսքով, իրականը եւ կարելին, այլափոխուած հեղինակին խառնուածքին թորանոցին մէջ, որ կ'այլափոխէ դոյութեան սովորական եւ տափակ պայմանները, կը խառնէ իրականութիւնը եւ րազին եւ կը ստեղծէ գերիվեր եւ առինքնուղ աշխարհ մը, ուր մարդկային հոգին կ'ապաստանի կեանքի տգեղութիւններէն եւ դժուարութիւններէն խուսափելու համար :

2.- Գործող անձերը.- Նորավէպին ծաւալը չի ներք որ հեղինակը զբաղի բազմաթիւ անձերով : Անգամ մը աչքի առնել բերնէն Հիւկոյի Թշուառներուն, Պալպաքի վէպերուն, Տիբբոսի Օլիվըր Թուխքի, Տոթոնուքիի Քարամազով Եզրայիմները, Թուրթոյի Պատերազմ եւ Խաղաղութիւն վէպերուն մէջ գործող հարիւրուոր անձերը, եւ Մերիմէի Մաքէօ Ֆալֆոնի, Մօփասանի Մամեակը, Օհնրիի Վերջին տերեւը, կամ Չեխովի Եպիսկոպոսը նորավէպերուն մէջ մասի վրայ համրուելիք անձերը :

Հոն կը գտնենք մէկ կամ երկու կարեւոր գերախատարներ եւ անոնց շուրջը

կրթեւեկող երկրորդական եւ անցողակի դէմքեր :

Պէտք է շեշտուի կարեւոր դերակատարներուն նկարագրին իրականութիւնը, անոնց՝ կեանքէն վերցուած ըլլալը, որպէսզի ընթերցողը կարենայ նոյնանայ անոնցմէ մէկուն, կամ անոնք ծանօթ թուին իրեն :

Անբաժեշտ չէ որ ըլլան տիեզերական տիպարներ, նորավիպագրէն չի պահանջուիր ստեղծել նոր Հարրադին մը, Օթէլլօ մը կամ Տոն Քիլօթ մը, այլ կենդանի եւ ճշմարտանուն կանկեր, հեղինակին ժամանակակից կամ ոչ :

Եւ որովհետեւ հեղինակը պէտք է անսարքեր թուի իր ստեղծած անձերուն հանդէպ, լաւագոյնն է դանոնք յանձնել ղէպերու քնակնոն քնթացքին, քան թէ դանոնք ուղղել ղէպի նախատեսուած վերջաբան մը. որովհետեւ ղէպերն են որ կը մղեն անձերը ղէպի իրենց ճակատագրերը, ինչպէս կը պատահի ընդհանրապէս մարդկային տրամային մէջ :

Ինչպէ՞ս ստեղծել անձերը եւ դէպքերը.-

Գրականութեան ներշնչումի աղբիւրները երեք են.

Մեզ շրջապատող աշխարհը,

Մեզմէ առաջ արտագրուած գլխաւոր փորձոցները,

եւ մեր ներաշխարհը :

Կատարեալ դործ մը կարելի է արտագրել այս երեք աղբիւրներուն շափաւոր դործածութեամբը. եթէ ասոնցմէ մէկը կամ միւսը պակաս հեղինակին մօտ, կ'ունենանք թերի եւ անկատար դործ մը :

Իրաւ դրող մը կ'ուսումնասիրէ դորտի աշխարհը, դիտելով, ճամբորդելով եւ կարգալով. կը ջանայ մտնել շուրջը արող էակներուն մտերմութեան մէջ, կը քակէ անոնց արարքներուն հիւսքը, կը սերտէ անոնց զրոպատաւանները՝ ընթացքը եւ արդիւնքը, եւ կ'ունենայ հում նիւթի անհատնում պաշար մը, որմէ օգտուելով կը ստեղծէ նոր անձնաւորութիւն, նոր հոգեբանութիւն եւ նոր կեանք :

Սակայն կարեւորագոյն աղբիւրը Հարկաւ Հեղինակին ներաշխարհն է: Հոն զիզուած են իր սեփական Հարստութիւնները, ապրումները, տառապանքները եւ ուրախութիւնները, պարտութիւնները եւ յաղթանակները: Այդ ներաշխարհը ազրիւր ըլլալով հանդերձ, պէտք է նսեւ ծառայէ իր փորձաքար՝ գործէն ներս մտնուած զազափարճներուն եւ պատկերներուն արժէքը չափելու համար:

Ձեռք կրնար ամբողջովին ժխտել ճշմարտութիւնը Եթօպլիանի Հետեւեալ խօսքին, հակառակ որ ան տարրինակ թուի մեր դարու տարրկայահան մտայնութեան — Մարդ միայն իր սիրտը կրնայ լաւ նկարագրել, զայն ուրիշի մը յատկացնելով, եւ հանճարին մեծագոյն սովորը կը բաղկանայ յիշատակներէ:

ՆՈՐԱՎԷՊԻՆ ԱՐՈՒՇՍԱԸ

1.— Նորավիպագրիմ յատկութիւնները —

Վերի ըտուածներէն կարելի է սահմանել վիպասանին եւ մանաւանդ նորավիպագրին յատկութիւնները:

Հոգեբանական իմաստութիւն. այսինքն ուրիշներու ներաշխարհէն ներս թափանցելու յատկութիւնը, դուշակելու մտածումները:

Ստեղծագործ երեւակայութիւն. կացութիւններ, զէպքեր եւ անձեր հնարելու համար:

Կառուցող երեւակայութիւն. այդ նիւթերը համադրելու եւ արուեստի վերածելու համար:

Վերարտադրող երեւակայութիւն. այդ նիւթերուն տալով գոյն, կեանք եւ ճշմարտութիւն:

Զգայնութիւն. հասկնալու համար շուրջինները եւ նոյնանալու համար աւտոնց եւ զգալու համար անոնց պէս:

Այսինքն ստեղծել անձեր եւ զէպքեր զանոնք վերջներով կեանքէն կամ երեւակայութեանէն, եւ ապրեցնել վիպային մթնոլորտի մը մէջ. աշխարհի մը մէջ որ նմանելով հանդերձ իրական աշխարհին,

ըլլայ տարբեր անկէ իր օրէնքներով, իր սահմաններով եւ ժամանակի ինքնայատուկ թաւալումով:

ՆԱԽԱԳԻՄ ԵՒ ԿԱՌՈՅՑ

Գրական որեւէ գործի պէս, նորավիպը ունի երեք մաս — սկիզբ, մարմին եւ վերջ: Դէպքերը պէտք է ծնին, զարգանան եւ յանգին իրենց վախճանին: Կառուցը կրնայ հիմնուիլ հետեւեալ նախադիտերուն վրայ.

Ժամանակագրական. զէպքերը կ'ընթանան իրարու յաջորդելով, ժամանակի հոսանքին հետ, ինչպէս կը պատահի իրական կեանքի մէջ:

Յետադարձ. կարեւոր կէտ մը, կամ նոյնիսկ վերջարանը պատմելէ յետոյ, կը վերադառնանք զէպի անցեալ կիրառելով ժամանակագրական նախադիտը:

Գեղարուեստական. զէպքերը եւ դադափարները կը զարգանան եւ կը յառաջորդեն զէպի վերջարան մը, զէպի նպատակակէտ մը:

Այս նախադիտերուն վրայ, հեղինակին կը մնայ հիւսել իր կերպասը, ճաշակին եւ արուեստին ոսկի եւ արծաթ թելերովը զարդարուած:

Հեղինակը իր արամագրութեան տակ ունի այդ կերպասը եւ նորավիպը լաւագոյն ձեւով տալու երեք գործիքներ. նրկարագրութիւն, պատմում եւ խօսակցութիւն — սիւալով:

Այս միջոցներուն առանձին գործածութիւնը փափաքելի չէ, մանաւանդ առաջին երկուքինը, որոնք գործին կենսունակութիւնը պիտի պակսեցնէին անկասկած: Իսկ միայն տիւրովի գործածութիւնը, նորավիպը պիտի վերածէր անձեւ թատերգութեան մը:

Նախընտրելի է այս երեք միջոցները համագրել պատշաճ ձեւով, ինչպէս ըրած են մեծ վարպետները:

Նախ ի՛նչպէս մերկայացնել անձերը: Հեղինակին խառնուածքին եւ ճաշակին կը մնայ որդեգրել ներկայացման հետեւեալ ձեւերը.

Երբեմն անձերէն մէկը կը խօսի, յա-

ճախ այդ անձը հերոսն է որ կը գործէ ու կը պատմէ, կը մենտիսուէ: Կ'ապրինք իր հետ, կը տրամոխեք ու կ'ուրախանանք իր հետ, կ'ըլլանք իր խօսակիցը, իր խոստովանահայրը: Կը ներենք իրեն կամ կը դատապարտենք զինք:

Ուրիշ անգամ հերոսը կամ հերոսները, մեղի կը ներկայացուին հեղինակին կողմէ, որ ուղղակի կամ անուղղակիօրէն լոյս կը սփռէ անոնց ինքնութեան որոշ երեսներուն վրայ: Երբ միջամտութիւնը շեշտակի է եւ հեղինակին բերնով կ'ըլլայ - ինչպէս կ'ընէին տասնութիններորդ դարու գրողները - կը սթափինք կախարդանքէն, գուրս կը մղուինք վիպական աշխարհէն:

Ինչ որ ալ ըլլայ ընտրուած ձեւը, պէտք է որ հեղինակը անհետանայ բեմէն ինչպէս կ'ընէ թատերագիրը, եւ ձգէ որ անձերը ապրին իրենց ուրոյն կեանքը, որպէսզի իրականութեան պատրանքը մնայ կատարել: Արդէն այս է արուեստին առաջին պայմանը:

Ուրեմն եթէ նորաձեւը գրուի առաջին, երկրորդ կամ երրորդ դէմքով, կամ նամակով, պիտի պարունակէ նկարագրութիւն, պատմութիւն եւ տիպոկ:

Նկարագրութիւնը: Մարտիլ Փրէլօ կ'ըսէ - Պէտք է որ վայրերը եւ անձերը իրենց արտաքինով եւ ներքինով սահմանունին քանի մը բառերով:

Ինչպէս ըսինք արդէն, նորաձեւը չունի վէպին ծաւալը եւ կարելիութիւնները, ուստի նկարագրութիւնը պէտք է ըլլայ հսկիւրճ ու պատկերաւոր, այդ ալ անհրաժեշտ եղած միջոցին միայն: Հարկ չէ մանկ մանրամասնութիւններու մէջ: Իւրաքանչիւր նկարագրուած առարկայ, կամ զիմագիծ՝ պէտք է նպատակ մը բերէ զէպի զարգացման եւ անձի հոգիին ճանաչման: Ինչպէս նկատել կու տայ ձորճ Սիմընոն, քանակորդ դարու ընթերցողը արդէն ընտելացած է շատ մը վայրերու, երկիրներու եւ ցեղերու, շնորհիւ ճամբորդական միջոցներու զիւրութեան, լուսանկարներու, զիւրքերու, սինեմայի եւ հեռատեսիլի: այնպէս որ արդէն քա-

ղաքի մը, գետի մը, ցեղի մը եւ ազգի մը անունը կը բաւէ կատարելով պատկեր մը ստեղծելու, իր երեւակայութեան մէջ:

Պատմութիւնը, այսինքն դէպքին շարահետութիւնը պէտք է ըլլայ կենդանի եւ շահադրողող, լաւագոյն միջոցն է խօսակցութիւնը, ուր դերակատարներու բերնով կը լսենք ամէն բան:

Տիպոկը պէտք է ըլլայ բնական: Հեղինակը պէտք է գործածէ պարզ խօսակցական լեզուն, առանց ջանալու ոճի խողեր ընել: Իւրաքանչիւր անձ պէտք է խօսի իր լեզուով, սովորական եւ աօրուեստ: Սակայն խօսափելու է գունակութենէն. արուեստագէտը պարզ ձայնագիր մը չէ եւ արուեստը կոյր իրակապութիւնը ընդօրինակել չէ. այլ ընտրութիւն մը ընել է իրականութեան քառնէն, նպատակ ունենալով գործին ընդհանուր մթնոլորտը եւ նպատակը: Օրինակի համար, իրական կեանքի մէջ, երկու անձեր կրնան ժամեր, օրեր խօսակցիլ առանց կարեւոր եւ հետաքրքրական բան մը ըսելու. գրողին իրականքն է այդ անձերը խօսեցնել եւ հետաքրքրական բաներ ըսել տալ:

Տիպոկը ունի նաեւ դեր մըն ալ. ընթերցողին համար լուսարանել մութին մէջ մնացած կէտեր, զորս հեղինակը չ'ուզեր իր բերնով յայտնել գործին բընականութիւնը չբանդելու համար: Զանոնք վարպետօրէն կը շեղեցնէ զէպի բացատրութիւններ, բնական խօսակցութեան ձեւը որդեգրելով հանդերձ, զայն կ'ամբողջացնէ, առանց ցոյց տալու ճիշդ, երեւան հանելու համար ներքին եւ անտեսանելի իրականութիւնը:

Ո՞ն. նորաձեւին համար կարելի չէ որոշ ոճ մը յանձնարարել: Իւրաքանչիւր հեղինակ ունի իր ոճը: Միայն կը պահանջուի ոճը յարմարեցնել նիւթին: Ընդհանրապէս մեծ հեղինակները կը գործածեն վերլուծական ոճ մը, զայն երբեմն երբեմն զարգարելով բանաստեղծական երանդներով: Մովսեսան հետեւեալ խրատը կու տայ նորաձեւագիրներուն -

զործածեցէք ուեւի քիչ անորոշ եւ տն-
հասկնալի գոյականներ, բայեր եւ սծա-
կաններ. բայց աւելի շատ տարբեր նա-
խագատութիւններ, այլազան ձևով կա-
ռուցուած, ճարտարօրէն ընդհատուած,
զեղուեն նուագով եւ վարպետ կշռոյթով:
Եզրակացութիւն: Ինչ որ անտարտ-
կոյս է, այս գիւրին կարծուած սեռը շըր-
ջապատող զժուարութիւններուն թիւն է,
որոնց կարեւորագոյնը հեղինակին ան-
տարբերութիւնն է իր ստեղծած տիպար-
ներուն առջեւ, ինչ որ պէտք է հասուց-
ուի կառոյցի, ոճի, մէկ խօսքով՝ թեր-
նիքի կատարելութեամբ մը: Ձի բաւեր
միայն ճշմարիտ ըլլալ նորավէպին մէջ,
պէտք է զոյն դարձնել կատարեալ եւ
զեղեցիկ:

Եւ այս պատճառաւ իտկար Այան Փո-
կը յայտարարէ. — Ձեռք կրնար ընդունիլ
այն տեսակէտը թէ աւելի քիչ տաղանդ
պէտք է կարճ պատմուածք մը գրելու
քան միջակ վէպ մը. ճիշդ է որ վէպը կը
պահանջէ աւելի ուշիմութիւն եւ համբե-
րութիւն... Նորավէպը չի կրնար տկար
ժասեր ունենալ... պէտք է ըլլայ անթե-

րի... ան արձակին համար է ինչ որ եւ
զեղծը եւ հնչեակը բանաստեղծութեան
համար:

Վերջացնենք նաեւ այս սեռի մեծա-
դոյն վարպետներէն՝ կի տը Մօփասանի
հետեւեալ խօսքով. — Իրապաշտը, եթէ
արուեստագէտ մըն է, պիտի ջանայ մե-
զի ցուցնել ոչ թէ կեանքին հասարակ
պատկերը, լուսանկարը, այլ մեզի տալ
տեսիլք մը աւելի յափշտակող, աւելի
կատարեալ եւ աւելի համոզիչ քան իրա-
կանութիւնը: Կեանքը ամէն բան կը պա-
հէ նոյն մակարդակի վրայ, զէպքերը կը
քշէ իր առջեւ. իստոն ի իտուոն: Արուես-
տը, ընդհակառակն, կը պատրտտաէ զէպ-
քերը, զանոնք կը զործածէ զգուշու-
թեամբ, կը կիրարկէ ճարտար եւ ջողար-
կուած անցումներ, կը լուսաւորէ, կա-
ռուցումի վարպետութեամբ, կարեւորա-
զոյն զէպքերը, իսկ երկրորդականնե-
րուն կու տայ յարմար ցցունութիւն մը,
վեր հանելու համար իւրրունկ ազդեցու-
թիւնը որոշ իրականութեան մը:

Ն. Ջ.



ԳՐԵՆ ԱԼ ԳՈՐԾ Է

Բանաստեղծ ու տրակագիր Աբր Օսպրթ Սիթուել՝ տեղագրիմ կ'աշխատէր իր
մէկ ճոր գրքիմ վրայ, գրանմեակիմ մէջ, երբ զրան ետեւ իրարու ետս գրուցող երկու
սպասաւորներու ճայնը առաւ.
- Կ'աշխատի՞. - կը հարցնէր մէկը:
- Ոչ. միմիայն կը գրէ, - պատասխանեց երկրորդը:

ՄՐԱՄԻՏ ՔՆՆԱԳԱՏԸ

Գրող մը կը հարցնէ երասարակիչ կաթոն կայմարի թէ կարգացած էր իր վեր-
ջիմ գիրքը:
- Անշուշտ, պատասխանեց կայմար: Ինձի յիշեցուց Շարլըմալի տուրը:
Շահագրգռուած՝ գրողը հոս ու հոն սկսաւ փնտռել ու պրպտել թէ ինչպէ՞ս էր
այդ տուրը, եւ գտաւ վերջապէս համայնագիտարանի մը մէջ մկարագրուած սա ձեւով.
- Երկայն, տափակ եւ մահացու:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն Խ Ո Ղ Ե Ր

Այսօր, ընկերային, քաղաքական եւ զիտական անհամեմատ յառաջընթացներու հետ, նորանոր սրբապատկան զարթոնքներ բաղձաթիւ նոր ստեղծագործութիւններով կը հարստացնեն զբնական ստեղծանունը: Գիտութեան հետ կ'ընդհանրանայ եւ արուեստը, մասնաւորաբար գրականութիւնը իր արտայայտութեամբ ժողովրդական, մատչելի հասարակաց բոլորին, այս իսկ պատճառով ազգային նկարագրի շնորհ ակնի բացայայտ ցեղային գլխաւոր յատկանիշ՝ տառերով ու լեզուով: Այլեւս նորութիւն մը չէ երբ կ'ըսենք ճշմարիտ արուեստը մէկ հայրենիք չունի կամ մեծերը համայն մարդկութեան ծնունդ են: Մարդկայնորէն՝ ազգային ինչ նկարագրով ալ երկնուած ըլլայ գործը, արուեստի միջազգային կալուածին մաս կը կազմէ: Արդարեւ այս կալուածէն ներս ո՞ր է մեր տեղը: Մեզի բախտակից Հրեան, այսօր, իմացապաշտ գրականութեան եւ մտքի նախակարգապետները ծընած ըլլալու պատիւը ունի, մեծ ցնցումներով խոչտանդուած Հայը ստեղծագործեց թափառական Հրեային հետ, միակ տարբերութեամբ, որ Հայը գրեց իր ազգային լեզուով, իր ազգին մասին, տեղական ճորձերով: Ի՞նչ է պատճառը այս տեղաբային... արդեօք հայ լեզուն, այնքան հարուստ՝ չի՞ կրնար անդ լեզնով, Քրտներէնով կամ գերմաներէնով գրուած երկերուն հաւասար արժէքով ստեղծել: Ընչէ՞ արդեօք թէ մանաւանդ այսօր լեզուն կ'օգնէ երկի մը

յաջողութեան: Հայը նուա՞ղ ստղանդաւոր է...: Այս բոլոր հարցականները շատ յաճախ զգացական վերլուծումներով, հետադարձութեամբ ստացած են իրենց պատասխանները, բայց արուեստի մեծագոյն մարզին՝ երաժշտութեան, գիտութեան մեծագոյն մարզին՝ աստղագիտութեան մէջ զազաթներ սուտղ տաղանդաւոր Հայը իր գրականութեամբ տակաւին չտուաւ: Պուշկին, Քամիւ, Քալքա, Ճ. Ընթա, Իլիւթ կամ Փրուսթ: Գուցէ կարենար իր գրական-իմացական ստեղծագործութիւնը հասցնել միջազգային բարձունքին, եթէ չունենար իր եղեռները, քանի որ պիտի ըսենք գրական եղեռները: Հայը, համեմատած Հրեայի Չարգին, իր թիւին մէկ վեցերորդով միայն կոտորուած, բայց Չարգուցաւ իր մտային լոյսով: Գր. Զօհրապ նահատակուեցաւ դէպի Ֆլորպէր, Մոփաստան կամ Չեխով ձգտումին մէջ: Վարուժան, Միամանթօ իրենց թախչով ամէն կարելիութիւն ունէին կանգնելու անմիջական ձօտիկը Պոտըլչրի կամ Ռէմպոյի: Իսկ Հայաստանի եղեռնի զոհ Չարենց՝ գրեթէ Մայակովսկին էր իր խիզախութեամբ, Արակոն մը իմացական հարուստ հորիզոնով, Ալ. Պլոք մը իր «Տանդէական Առասպելներով»: Այսքանը անուններ տալու համար, բայց ասոնցմէ վեր կը մնայ իրականութիւնը, թանձր, զոր Աւ. Ահարոնեան կը մերժէր ճակատագրի կոչել: Հայ գրականութիւնը Չարգուցաւ թրրքա՛հայ ճակատին՝ 1915-ին, Սովետական ճակատին՝ 1937-ին, այսօրուան մեր ի-

գրականութիւնը իր յիշատակին կապելով, կաշկանդելով, փոխանակ բլրալու անոր նոր թոփշքին, վերակերտումին ամուր պատուանդանը:

Ի՞նչ է գրականութիւնը.— կեանք է արդեօք: Հարցում մը, որուն վերջնական պատասխանը ցարդ չէ տուած մարդկութիւնը. հարցում մը, որուն անասին պատասխանը տուաւ Պրատն եւ որուն եկաւ հակառակիլ Մարքս: Այսօր սովետական արուեստի ճակատին հասար պատասխանը պարզ է: Սովետական գրականութիւնը կը վերափոխէ կեանքը, գրականութեան մէջ նոր կեանք մը կը ստեղծէ, ժողովուրդը անոր առաջնորդելու մէջ խօսքով՝ գրականութիւնը մտղավորդին համար: Չարեհցի խօսքով՝ — Մեր գրականութեան մէջ պիտի արտայայտ մեր երկրի, մեր ժողովրդի գէմքը, ժամանակակից մարդու հոգեբանութիւնը: Արեւմտեան միտքը անորոշութեան շրջանի մը հետեւեցաւ այս դազափայտրանութեան, բայց այժմ բոլորին համար բացայտ է որ գրականութիւնը երևոյթներէն անգին, մարդոց եւ ընկերութիւններու, քաղաքական ընկերային եւ հոգեկան պայքարի ցուցումն է: Հերոսներ, պատմութիւններ՝ զարդեր ու միջոցներ են պատգամը ազուցելու, այլապէս բոլոր պիտի կրկնէինք Եգիպտոսի Չարեհցի հետ.— «Վերջին հաշուով կեղծ բան է բանաստեղծութիւնը — փոխանակ անմիջականօրէն զգացումը արտայայտելու, ինչպէս մարդ անում է կեանքում, նստում են տունը, պատրաստում են խոհեր, յոյզեր, հնարում են պատկերներ, յանգեր են մշակում... — թէ՛ համեցէ՛ք ձեզ զգայուններ»: (*)

Այսօր հայ գրականութիւնը երկու ճիւղով կը ներկայանայ.— Սովետական թիւր եւ Արտասահմանը, իր զարգացման ճիւղերէն հիւղաւորումներով եւ զաղափարական տարակարծութիւններով: Հայաստանեան գրականութիւնը դատած է իր ու-

ղին. իր բոլոր տկար, անընդունելի եւ անհեթեթ առաջադրութիւններով լըծուած է ստեղծագործ աշխատանքի, ճիւղերու կեդրոնացումով մը. քննադատուած բայց եւ քաջալերուած՝ վայելելով ժողովուրդի սէրն ու գնահատանքը եւ տուած դուրս գործոցներ, երբ կարելի եղած է կամ աններելի մեղքը գործուած հողիներուն թոփշքը կանոնող ու կաշկանդող փշաթելերէն դուրս գալ: Սփիւռքը սակայն, վերջին տասնամեակին, իր գրական ներկայացուցիչները յոյնեցուցած է: Յետ եղեռնի սերունդը գրական սուրբը տուաւ, այսօր կը շարունակէ սէր կանգնել այս միջնաբերդին, ինքզինքը կրկնելով, առանց նոր պրպտումի: Բանաստեղծութիւնը եւս տեղ քայլի մէջ է. կան նոր գէմքեր, որոնք սակայն քիչ անպամ նորութիւն կը բերեն. արձակը ճիշդ է գտնեցաւ, կատարելագործուեցաւ, բայց չյաջողեցաւ տալ արուեստի մեծ գործեր: Մասի վրայ համըրուող երիտասարդ տղաք, այսօր, զարմանալի յամառութեամբ կը շարունակեն գրել, բայց միշտ դժգոհ: Մտաւորական դժգոհութիւն չէ այս մէկը, այլ իրապաշտ, չքաջալերելու, չգնահատուելու բողոքը, ուշադրութեան ու նոյնիսկ վարձատրութեան պահանջը, որովհետեւ ղոհողութիւնը գէթ խառաքար շատ քիչ անգամ բառարաններէն դուրս, կեանքին կու գայ: Սերունդ մը ետք այս խնթութիւնն ալ վերջ կը գտնէ, եթէ հին սերունդը մէկդի չձգէ մաշած թեմաներով գրականութիւն մշակելու բուն մարմանն ու զօրավիզ չկանգնի հայ գրականութեան ապագան ապահովելու: Այս պայմաններուն մէջ անշուշտ աւելորդ է խօսիլ հայ մէկ պի մասին. մէկը քաղաքական, ընկերային կեանքի եւ պայքարի ծնունդն է կամ պատկերը: Մենք ո՛չ միայն քաղաքական եւ ընկերային կեանք եւս չունինք, այլ ամէն բանէ առաջ պէտք ունինք հայ ընկերութեան մը, մեր ունեցածը երկպառակուած Սփիւռք մըն է բարելոնեան խառնակութեամբ: Արդէ մէկը կեանքն իսկ է, ընկերային առօրեան: Իմացապաշտ գրականութեան,

(*) «Յիշագործութիւններ Եգիպտոսի մասին», էջ 104: .

մասնաւորաբար պատմական վէպերու մէջ, ճշմարտութիւններ կը յայտնուին, յիշողութեանց մէջ ընդունուած, ուղեղին մէջ աշխատողուած, սահմանուած մեր փորձառական տրամաբանութիւնը թարգմանելու աւելի կամ նուազ վերացական եղբերով: Այսպէս է Փրուսթ, որուն ծօտ վէպը յիշատակային վերակերտում մըն է, պրպտում մը կորսուած ժամանակին: Փրուսթով պատմական վէպը կու գայ Կոստան Չարեանի վէպի հասկացողութիւնը հաստատելու, պատմութիւնը վերակերտելու փոխարէն, վերապարիլ գայն եւ վերապրեցնել ինքնածին երարով: Փրուսթէն ետք աւելի ծանր, բայց նաևաղ խոր Ուիլեմ Ծոքնըր երազկոտ ճամբորդին նման տարիներու իր յիշատակներու ծաղկումով, պոռթկումով և խառնաշփոթութեամբ տուաւ: Անոր վէպերը խառնարան մըն են մարդկային ողբերգութեան, անցեալի եւ ներկայի յիշատակներու եւ բարձրու լսարիւրներու մը: Վերջապէս Եւրոպայի մէջ ժիւ, Քրոտէլ, Վալէրի, Բոմբի, Մարթը, Մայրոյ նոյնիսկ Մօրիաք կամ Թ. Ս. Իլիքթ դրականութիւնը օժտեցին իմաստասիրական ձգտումներով: Անոնք իրականութեան մէջ դրական նոր շրջան մը շտակողներն, նոյնիսկ գերբարպաշտութիւնն ու գոյութեանապաշտութիւնը, եւ նոր վէպը հակակրօնական սկզբունքներով իմացականութեան մէջ կը շարունակեն իմաստասիրական ուղին Ռուտոյի, Վալթէրի, Փասթրի, Պէրկսոնի, Գանթի կամ Տէքարթի: Այսպէս Գոմբի իր վերջին գործերուն մէջ այն չէր ինչ որ էր 10 տարի առաջ, Խարխափող, յաւիտեան փնտռող այս միտքը՝ յոգնած իր մարդասիրական սրբատուներէն եւ մոլորած, վերտօնի կը մտնէր կրօնի շտեմի տակ, կ'ապաւինէր անոր սկզբունքներուն: Իսկ մեծն Իլիքթ ազգային տարադով, համամարդկային ձգտում մը արձանագրելով, կեանքի չոր ու վառն ճշմարտութիւնները կու տայ, սին ու կոշտ ընկերային ըմբռնումներ, բայց սոմանք մարդոց սնանկութիւնը ներկայացուած մեծ բանաստեղծի կողմէ իր իսկ

զիրքը կը նկատեն, մինչ կրօնը օնանկութիւն չէ անոր համար, այլ սնանկացող ընկերութեան վերջին ապաւինը:

Արեւմտեան այս տաք պայքարին մէջ անշուշտ կան նոր գէմքեր եւս, բայց 1948-էն ետք շատ քիչ տիրական հեղինակութիւններու կը հանդիպինք ամէն տարի հարիւրներով յայտնուող նոր գէմքերու մէջ: Բոյորովին տարրեր աշխարհէ կործ շունչով նոր մայն մը կու գայ: 1956-ի նոյնիսկ Թուան Ռամոն Թիմէնկ է: անհատական իր ապրումներու մէջ իրատաշտութեան հասնելով, բնութեան երկու կարեւոր երեսոյթներու կեանքի եւ մահուան զաղափարներու հանդէպ մարդկային սարսափը կը ցուցնէ, իր ստեղծագործութիւնը կարճ քերթուածներով ուժգին կրքեր են բարոյական, սիրային, նոյնիսկ Ֆիդիլիան ձգտումներով: Նոյնը չէ՞ր միթէ զար մը առաջ Եարլ Գոտլէրի պարագան: Այս սոցամ գեղեցիկութեան կը ծնէր «Վալի ծաղիկները» կամ Պոլտի «Արուեստական Դրախտները», ուր մարդը միւրեւում կերքի, մոլութիւններու տիղմին մէջ, հաշիւին, աֆրոնին, ալթոլին եւ տնարտյականութեան աշխարհը իր հոգին կ'անած էր: Այս ուղիէն ընթացան Հանրի Միլոյ, Նէրվալ, Պէլթը, որոնք՝ «յարաչարժ յաւիտեանականութիւն» մը կրղեցին: «Nous l'homme qui pense, et bien plus profond, l'homme qui manie, qui se manie»:

Մինչեւ մեր օրերը բանաստեղծութիւնը երկար ճամբայ կորելով, նաև շրջա ծէ իր դաւանանքը եւ այսօր շտեմը կը փորձեն Արդի բանաստեղծութեան հետեւի կամ անոր գոյութեան իրաւունք կու տան: Բանաստեղծութիւն մը, որ բիրեղացած ըմբռնում մը կը ներկայացնէ. այսպէս՝ Սէն Ճոն Փէրս այս նոր զաղափարաբանութեան վրայ կը հիմնէ իր ստեղծագործութիւնը: Մարդուն տիեզերական հեռանկարը հիմնուած է ժամանակակից գիտակցութեան եւ ծանօթութեանց վրայ: Մարդը այսօր, Օրթան Միտասարի համար, չի կրնար միայն

Համանուազ մտիկ ընել թանկօնեբու, վայսերու եւ սէրէնատներու ալ պէտք ունի եւ առիկա քաղաքակրթութեան ինչ աստիճանի ալ հասած ըլլայ: Իսկ Իլիքթ այլ ըմբռնումը հետեւեալ ձեւով կը կազմուի: «Արուեստագէտը կ'ապրի նախ իր անձնական՝ ապա մարդկային փորձառութիւնը, յետոյ իր ցանկութիւնները նոր կեանքի»: Եթէ ասոնց վրայ աւելցնենք մարդկային ընկերա-հասարական կեանքը, գիտա-իմաստասիրական եւ հոգեբանական ապրումները, կարելի կ'ըլլայ պոչէ տալ արդի բանաստեղծութեան, նոյնիսկ գրականութեան խիտ պոստիկը: այս սկզբունքներուն մէկ մասը միայն որպէս հիմք ունենալով եւ իրենց կարգին նոր առաջադրութիւններով, այդքան մեծ խանգարումներէ մեր սկսած գոյութենապաշտութիւնը (Քիրքը կարատի, Հէյտը կըրի, Քարլ Ժասփարիի եւ Սարթրով) այսօր թոյլ ու տարտընուած հետեւորդներ միայն ունի:

Թատերական կեանքը եւս միջազգային գրականութեան մէջ մեծ ուսումննորով կը ներկայանայ: Շէյքսպիր կեանքի եւ մահուան թիւրբիմացութիւնները, ճակատագիրը եւ գերակշիռ ոյժը մարդուն կ'երգէ. անհաւատալիք, անսպասելիք, խորհրդաւորն ու ուրուականը զարմանալի զօրութեամբ սիրոյ գրգիռով պէպի մահ ձգտումը կազմեցին գրական իր հանգանակը. ուրիշ մեծ երգիծարան մը այս անգամ, Ժիտի, Ափոլլինէրի ուսուցիչը, դժբախտարար ոչ այդքան ծանօթ Ալֆրէտ Ժարրի, ծիծաղը մագնիսականութեան հասցուց ու թատրոնին տուաւ այժմու զօրութիւնը, որուն վրայ Ժան Քոքթօ, Իփսէնի Ղրվէժային պոսթիկումով ըստու. «Թատրոնը բեմէն ժողովուրդը պիտի մագնիսացնէ». իսկ Օկիւսթ Սթրէնտպլերի համար «Թատերագիրը փոքրիկ Աստուած մըն է, որ սրտերն ու երիկամունքները կը պրպտէ, կը դատէ, կը պատժէ կամ կը վարձատրէ...» Բոլորովին տարբեր հասկացութեամբ կը ստեղծագործէ այժմ անգլիական թատրոնը:

Այս հակիրճ ակնարկէն ետք միջազ-

գային գրականութեան վրայ, Հարկ է յիշել Սինեման: Թատերական արուեստը այսօր հրաժարած է փառաւոր ու մեծ բեմայարգարումով պատրաստուած ներկայացումներէն, գոյներն ու լոյսերը եւ ամենայաջող իրականացումի մը կարիւրութիւնները ի նպատակ օրինակին են, բայց դրական թատերական երկ-սենարիոն շատ քիչ անգամ իր հարազատ արժէքով կը ցուայ: Երկուսը, արուեստի թէքնիք խաղերն ու դերասաններու անունները, անոնց արտաքին հմայքը փոխանակ որպէս միջոց ծառայելու «իդէալիկ աստուծոյ» ստեղծած կեանքը պարզելու, իրենք կը ցցուին, կ'անջատուին դերէն ու երկէն, իրենց մարմնաւորած տիպարէն իրենց վրայ կեդրոնացնելով հանդիսատեսի ուշադրութիւնը: Այս դժբախտ իրողութիւնը մարդկային հետադիւր հետէ շեշտուող մտային անհեթեթութեան, ընկերային յառաջդիմութիւնն իսկ ինզորոյ առարկայ կը դարձնէ: Այս պայմաններուն մէջ թատրոնը կը փորձէ իր յաջողութեան համար պարզապէս տէքորներով եւ խորագոյն ու իմաստաւոր թեմաներով ներկայանալ: Մեր իրականութեան մէջ բարեբախտարար թէ դժբախտարար այս մտահոգութիւնը գոյութիւն չունի: Բացի մի քանի թատերական հետեւողական ստեղծագործութիւններէն, Հայ գրականութեան մէջ կը բացակայի թատերգութիւնը: Այո, այսօր միայն մե'ր քաղաքին մէջ տասի կը հասնի թիւը թատերախումբերու... բայց անոնք ի՞նչ կը խաղան... կամ կը կրկնեն իրենք գիրենք, կը թատերականացնեն Հայ գրականութեան մէջ իրենց որոշ գիրքով մնացած գանազան վէպեր եւ կամ եւրոպական բեմերու վրայէն յիսուն տարիէ ի վեր քաշուած կտորներ կը ներկայացնեն Հայ հասարակութեան, նոյն թէքնիքով ինչպէս կը խաղային քառօրը դար առաջ: Ահա այս պակասները ամբողջացնելու փոխարէն, գրական մեր պատասխանատուները հարցումներ կ'արձակեն, տնրացատրելի՝ իրենց գոյութեան եկած գրդապատճառներով: Արդարեւ այսօր ծեծուող Հարցը գրականու-

թեան եւ քաղաքականութեան կապն է: Այս հարցումը 1962 թուականին մենք արդար չենք զստեր, որովհետեւ տակաւին երէկ Փարիզի մէջ զումարուած զբարական քննադատներու համագումարին ողին կը բացայայտէր դրականութեան առաքելութիւնը մարդկային կեանքին մէջ: Հայ դրազտը, Յղիչէն, Փարսկեցիէն եւ Սորենացիէն մինչեւ Դաւրիժեցի, Արովանէն մինչեւ Բաֆֆի եւ մեր օրերը, զրեցին հայ ժողովուրդի յաղթանակներու եւ պարտութիւններու մասին, իսկ հայ ժողովուրդի ազգային թէ տընտեսական զոյգիմակը անկասկած ուղղակի մեր քաղաքական պայմաններուն արդիւնքն է: Ամբողջ աշխարհը ցնցուցաւ Փրանսական յեղափոխութիւնն, զոր պարտաւորեցաւ Փրանսացի դրոշմներու կողմէ: Վօլթէր, Ռուսոյ... Սովետական ամբողջ մշակոյթը քաղաքական շարժումներն է. արուեստի որոշ պայմաններ լրացնելէ ետք, ժողովուրդը քաղաքական մարշալարդին կը պատրաստէ եւ կը բարձրացնէ նոր հասկացողութեամբ: քաղաքականութեան եւ ժողովրդային բարեփոխութեան միջև զոյգութիւն ունեցող միջոցը կը կրճատէ: Արեւմտեան դրականութիւնն ալ այսօր կը ներշնչուի քաղաքական անցուղարձէն: Լաւալույն դրոշմերը Ֆրանսայի յայտնի հրապարակագիրներն են: Տանիէլ Ռուսո, Մօրուա, Բամիւ եւ ուրիշներ, որոնք միտմամբ կը դրականութեան առաջնորդներն են: Ռեմոն Ազէլլոյ իր «Բարեւոյնեան Փոքր» վէպով, դարուս քաղաքական եւ ընկերային շարժումները կու տայ խտացուած, պատմական տուեալներով:

Գրադէտը, իբրեւ առաջնորդ ազգին ու մարդկութեան, ամէն անհատէ աւելի իրաւունք ունի անոր ճակատագրին մասին ոչ միայն կարծիք յայտնելու այլ եւ վարելու դայն: Կայսրերէն աւելի իմաստասէրները կը կառավարէին Բիւզանդիոնն ու Հռոմէական կայսրութիւնը: Գրադէտը այսօր անմիջական ներկան պիտի տայ, ուղղութիւններով, խորհուրդներով, պատգամներով:

Մինչ միջազգային դրականութիւնը նորանոր նուաճումներ կ'արձանագրէ, ո՞ր է հայ դրոշմ Սփիւռքի մէջ: Ըսինք որ չկայ հայ ընկերութիւն. հայ դրոշմ ընդհանրապէս ներշնչուած, փոքր աշխտանքով, մեզի համար զգացական աշխարհով, քիչ մը ջարդ, փշուր մը կարօտ, հայրենիքի սէր, մամիկ-պապուկ, զոքանջ, կետուր եւ այլ թեմաներով կը շարունակէ ստեղծագործել. եւ ընդհանրապէս դրոշմ՝ ուսուցիչն է, կեանքն զժողով, ասպարէզի նիւթական մտահոգութեան կշիռն տակ ընկնուած, Կեանքի պայքարի մտահոգութեան առնթեր որքան տրամադրութիւն ու ժամանակ պիտի ունենայ հայ ուսուցիչը այս պայմաններուն մէջ իր դրական հաշիւը նորացնելու, խորացնելու, ինքզինք մշակելու: Տակաւին միջավայրը, - եռեւեւ-փոք կեանքն կղզիացած կ'ապրի, շրջապատի վերացական ու կրթական կեանքին մէջ բանտարկուած՝ չի կրնար մարդը, ընկերութիւնը ճանշնալ, անոր հոգիի վեհութեան կամ ստորութեան թափանցել. կրնաք այստեղ ըսել որ մեր վիպասանները եղած են, ճշմարիտ կեանքը պատկերող, ապրած ու ծանօթ, ոչ ուսուցիչ դրոշմներ, կամ ուսուցիչ ոչ հայկական իմաստով: Անուններ տալու համար կրնանք յիշել Գր. Զօհրապ, Սիւրիլ, Կ. Զարեան, Երեմիանգաղէ, Բաֆֆի եւ այսօր գրեթէ բոլոր վիպագիրները Հայաստանի: Գոնէ եթէ հայ դրոշմ վարձատրուի, քաջալերուի իր հացը շահելու դրոշմն մէջ, առիթը տրուի իրեն ճամբորդելու, մարդոց, ազգերու, բնութիւններու, բարբերու, երկիրներու եւ ԿեԱնՔեՆՈՒ ծանօթանալու: Հայ ուսուցիչը մեր պայմաններու բերմամբ հայ մշակոյթի պահպանն է, հայ դրականութիւնը շարունակողը: Ռեքիմն պէտք է տընջան աշխատի հայ ուսուցիչ-դրոշմ, կարգայ, ծանօթանայ միջազգային դրականութեան նորապէս նուաճումներուն եւ միւրճուի իր նիւթին մէջ, հերոսանալով ստեղծագործէ:

Հայ դրականութեան պատմութիւնը ցոյց կու տայ թէ ծնունդէ՛ք, զէ՛պ-

քերէ, ժամանակներէն— ջարդ, անկախութիւն, ազատագրական պայքար, բողոքական յեղափոխութիւն... Իսկ հիմա... ջատուած Հայութիւն մը, ստեղծագործութեան աննպաստ պայմաններ, որոնք թէև միշտ ալ գոյութիւն ունեցած են, բայց առաւելաբար այժմ եւ ասիէ ետք գրողին կորովն ու պատարաստակամութիւնը պիտի ջլատեն: Սակայն այս բոլորը մեզ չեն դադարեցրներ գոյութիւն ունենալէ ի դէն ամէն գոհողութեան... Մենք կանք, մեր մըշակոյթը, գիրն ու արուեստը, մեր գոյութիւնը Բանալ է պայմանաւորուած եւ քանի որ կանք ու պիտի շարունակենք ըլլալ, պէտք է քաջալիւրենք հայ գրողը, պէտք է երկններ, երգենք պայքարը մեր պատմութեան, որ ստեղծագործման նիւթի անսպառ շտեմարան մըն է: Մէկը միայն մեր սիրագործութիւններէն՝ գերմանացի գրողին մօտ ստեղծեց— ճՄուսա Տաղի Գառասուն Օրերը: Երգենք սպիտակ ջարդի դէմ մեր պայքարը, հայրենիքը ոգեղէն եւ նիւթական, երգենք տարազիւր Արարատը, Ս. Թալէի ուխտապնդանութիւնը, Նոր Զուգան իր անցեալով, ներկայի իր հայկական դիւղերով, որոնք տակաւին վառ կը պահեն հայ զեղծուկի կենցաղն ու սովորութիւնները, կորսուած նոյնիսկ Հայաստանի մէջ: Գրենք Կիլիկիոյ անգուգական իրութեան մասին, ազգերու պատմութեան մէջ եզակի այս երեւոյթը, բայց այս բոլորը այժմ ու խոր իմացապաշտութեամբ, արուեստի ներկայի տարազներով, դարու մարդկային բարձր քաղաքակրթութեան հիման ու խորհրտին վրայ, տանք յաւերժացումը մեր ցեղին մարդկութեան մէջ:

Կ'ուզենք անգամ մը եւս շնչով թէ անքնական պայմաններու մէջ ծաղկած է մեր գրականութիւնը, միշտ մեծութիւնները մեծ ցնցումներէն ծնած են, Նարեկացիէն մինչեւ Սիամանթօ: Ինչպէս ըստ ջանքերէն մեր գրական ասելի մեծ նուաճումներու հակառակը ցոյց տուած է մեր պատմութիւնը... բայց եթէ կտորած-

ները ծնան վարութեաներ, Լթէ յեղափոխութիւնները ծնան վարութեաներ եւ Զարեանցներ, մենք կը հաւատանք, կրնանք իրենց ազգային յուզումներով Խալը իր հոգիով ու իմացականութեամբ դնել մարդուն կողքին աշխարհին վրայ, խաղաղութեան մէջ:



Իրու գրականութիւնը յոգնութիւն ու կի՛րք է, աշխատանք ու քրտինք. ներշնչումը հիմնական, բայց շարժառիթ է միայն, վերլուծումով ու ներիմացումով զարգացած, խորացումն ու թափանցումը կարելի է պայմաններ են, նիւթական պատուանդան ու մեկնակէտ ունենալով, բարձրացում մը, ձգտում մը դէպի դեղեցիկը: Իսկ գեղեցիկը իր կատարելութեան մէջ, — եթէ անշուշտ ներքի է այսպէս ըսել — գերնահան է, ներշնչանակութիւն է, զաղանիք է յաճախ, ընտրեց կոշտած ոմանց կողմէ: Գեղեցիկը երբեմն վիշտ է, ուրախութիւն, երբեմն սուտ՝ բայց ընդհանրապէս ճշմարտութիւն. որքան դեղեցիկ է լոյսը, նուազ տեղ չէ խաւարը, ... եւ այս բոլորը կը կազմուին, գոյութեան իրաւունքը կը ստանան արուեստագէտի հոգեկան պրիսմակէն:

Գրապէսը կը յաջողի, եթէ կարենայ իր իւրաքանչիւր հերոսին արտումները արկել: ան՝ այն տիեզերաքաղաքային է որ ամէն տեղ է, մոլորեցանց ու առաջինութեանց ծանօթ: Պէտք է անցեալին երկարէ իր ակնարկը, ներկայի կեանքը, ընթացատր դիտէ, բայց միշտ հետո՛ւն, գալիքին, պիտի ըլլայ երեւակայութեան թիրախը բարձր: Խօսքը պիտի դիմանայ հողմերուն դէմ: Վերջապէս գրականութիւնը տարբարութեան մըն է, ուր միտքն ու հոգին, կեանքի երեւոյթներու հետ կը լուծուին, միշտ նոր Փորձիւններով, նոր քաղաղութիւն մըն է, կրնայ և փոխադարձը պատահիլ — կեանքի երեւոյթներէն, հոգեկան ու մտային յուզումներէն մերքազատ ճշմարտութիւններ առաջ գալ:

Որքան զրոգը, նոյնքան եւ ընթերցողը մեծ դեր ունի դրական երկի մը յաջողութեան մէջ: Դժբախտաբար կարգ մը ընթերցողներ կը հիանան երկի մը վրայ եթէ անոր հեղինակը հանրածանօթ է. եթէ հեղինակը բացարձակ հեղինակութիւն մը չէ տակաւին, անոր զործը առանց բացատրութեան կրնայ տկար նկատուիլ: Հեղինակը կը յաջողի այն տանն միայն, երբ ընթերցողը իրաւունք կու տայ, լիակատար վստահութիւնը կը յայտնէ, անոր կողքին կը կանգնի. անոր մէջ ընթերցողը պէտք է գտնէ իր սուրեան, իր կեանքը, իր երազներն ու իր ձգտումներէն մաս մը: Ընթերցողներու առաջին մտքը կը կարգայ, կը հիանայ, առանց կարենալու այդ պատգամին խո-

րը թափանցել. իսկ գիտակից ընթերցողը կը սիրէ, կը մտերմանայ երկին, կարգ մը հարցումներուն լուծումը կը գտնէ այնտեղ:

Ընթերցողին շափ եւ գրական քննադատը պէտք է օգնէ դրողին. երբեմն, զրքի մը հրատարակութենէն 48 ժամ ետք քննադատը արդէն իր կարծիքը յայտնած է. մինչդեռ քննադատը զարմանքէն ու արհամարհանքէն աւելի թելադրութեան ու բարեկամական խորհուրդի պէտք է դիմէ: Քննադատը պէտք է ըլլայ միաժամանակ ընթերցող եւ հեղինակ: Այս բաւոր ազդակները կը նպաստեն գրականութեան օրակին բարձրացման:

Ա. Տ.

ԱՆԴՐԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

● Կը քուի քէ գերեզմանները, մաթեմատիկական ժողովարդներու հաւատագլ. բաժնոր էին եւ ոչ քէ ապաստանարաններ:

Լիւի-Ֆէ

● Հին Հռոմայեցիները գերեզմանները կը գետնիցէն ճամբաներու երկայնքին օրպէս զննարկները շունչեցային առանձնացած եւ մտքուած ըլլալու զգացումը, եւ շիրիմներուն վրայ յաճախ կը գտնուին ծանօթ խօսքը. «Հողը թիթեւ գայ վրայ»:

Ֆ. Կրէյնիւս

● Աստուածայինի եւ մարդկայինի այս խառնուրդը իրարմէ բաժնելու օրը երբ գայ՝ պիտի ձգեմ մարմինս հան ուր գայմ գոտայ եւ պիտի վերագտնամ տոտուածներուն:

Սենեֆ

● Փերեւս անթատտ պիտի չըլլաք ինչպէս որ՝ կեանքի ընթացքին կը տոնածուի անդրաշխարհի կեանքը, եւ մարդ ամմահ է իսկ այն յափով, որ, այս աշխարհիս երեսին ազրած ատեն, ամկեզծօրէն հաւատացած է անմահութեան:

Ֆ. Կրէյնիւս

● Մտեր մութ արգելարանի մը վախճանն է ազնուական հագիններուն համար. անձկութիւն մը՝ այլ հագիններու, որոնց համար ստարմութիւնն է միակ մտանօգուտիւնը:

ԲԵՆԴԱՐՔ

● Մեռելիքն են որ կը կռապարեն օղբերը:

Օգիտիւմ ԳՈՐՔ

Լ. ՄԿՐՏԶԵԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ԳԼՈՒԻ ԵՕՔՆԵՐՈՐԿ

ԲԱԿՈՒՆՑԸ ՈՐՊԷՍ ԳՐԱԳԷՏ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ

1923 թուի ամռանը եւ աշնանը Նրեւանի «Ռորհրդային Հայաստան» պաշտօնաթիւերը իրար յետեւից տպում էր գանազան կոչեր ու յայտարարութիւններ՝ Դաշնակցութիւնից եւ նրա զաղափարներից «հրաժարուելու մասին»: Այնուհետեւ, գաւառական ժողովներից յետոյ, Նոյեմբերի 20-ից մինչեւ 23-ը, Նրեւանում կայացաւ «նախկին շարքային դաշնակցականների համահայաստանեան համագումարը», որը, նախապէս սահմանուած եղանակով, «վերազնահատման ենթարկեց Դաշնակցութեան անցեալ գործունէութիւնը» եւ նոյնպէս որոշեց «ինքնալուծարքման ենթարկուել»: Համագումարի 247 պատգամաւորները ներկայացնում էին 4032 նախկին շարքային դաշնակցականների: Թէ որքանով էր այդ համագումարը իսկապէս հանդիսանում «նախկին դաշնակցականների համագումար», բաւական է յիշել, որ համագումարի առաջնահերթ «անելիքներից» մէկը եղաւ «ոչ ոչինչ հեռագրեր ուղարկել Լենինին, Տրոյկուն, Չիւնովիւսին, ինչպէս եւ յատուկ դիմում յղել Ռուսական կոմկուսի զեկափարներին,

իսկ Հայկոմկուսի ակնասուր զեկափարներից Ասքանազ Մուսեանը հիմնական զեկուցողներից մէկն էր, Լուկաշինը՝ հանդիսաւոր փակման կենտրոնական դէմքը:

Այդ համագումարը սուկ մի զէպջ չէ տուեալ կուսակցութեան պատմութեան մէջ, այլ կոմունիստական բռնատիրութեան վերաբերմունքի ցայտուն արտայայտութիւններից մէկը՝ ժողովուրդների ինքնութիւնը ուրանալու, նըրանց կենսունակ տարրերը վարկաբեկելու, նուաստացնելու եւ խեղդելու համար: Թիշեալ համագումարի արդիւնքների ու նշանակութեան մասին խորհրդահայ մի պատմաբանի յոգուածներից մէկում կարդում ենք հետեւեալը, որը պարզում է կոմունիստների հետապնդած նպատակը. —

«Համագումարը որոշեց հաստատել գաւառական կոմֆերանսների որոշումները դաշնակ կուսակցութեան ինքնալուծարման մասին, չեղեալ համարել կուսակցական բոլոր մանդատները եւ կուսակցութեան նախկին անդամների տրուած ամէն մի յանձնարարութիւն, ու

համագումարի որոշումները հաղորդել Երկրորդ ինտերնացիոնալի բիւրոյին, որի անդամն էր դաշնակ կուսակցութիւնը: Միաժամանակ համագումարը յայտարարեց, որ Հայաստանից փախած դաշնակ պարագլուխները ոչ մի իրաւումք չունեն խօսելու Հայաստանի անունից:

Դաշնակ կուսակցութեան քաղաքական ոչնչացումը հարկորդային Հայաստանում՝ ունեցաւ մեծ նշանակութիւն, - եւ ներքին, եւ միջազգային, - մասնաւորապէս դաշնակների դէմ պայքարող արտասահմանեան աշխատարւ հայերի համար, եւ մի հարւած էր ինչպէս արտասահմանեան հայ սմեմուլիսիականութեանը, այնպէս էլ 1923 թւին վիճմայում գումարուած դաշնակցական ժողովին, որն ունէր հակախորհրդային ազդուքիւն:

Անշուշտ, մեր նպատակը չէ հանգամանորէն ներկայացնել ու լուսարանել վերոյիշեալ Համագումարի պատմութիւնը: Դա թեթեւակիորէն շօշափեցինք, որովհետեւ այդ Համագումարի «նախաձեռնող բիւրոյին» նախագահը, Համագումարի լրացում կատարողը, նախաձեռնող բիւրոյի ինֆորմացիոն գեկուցում տուողը եւ, ընդհանրապէս, Համագումարի աչքի ընկնող դէմքը Ալեքսանդր Բակունցն էր: Համագումարում Բակունցի ունեցած էլոյթները վկայում են, որ այդ 24-ամեայ երիտասարդը ունէր քաղաքական լուրջ պատրաստութիւն, հանրային գործիչի համար անհրաժեշտ վարուելաձեւ եւ իր գաղափարներին հաստատրիմ մնալու նախանձախնդրութիւն: Բակունցը 1915 թուից ի վեր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամ էր: Երկրի խորհրդայնացումից յետոյ ըստեղծուել էր նոր իրաւութիւն: Կոմսունիստական բռնատիրութիւնը Հաստատկերպով որոշել էր ամէն դիմով արմատախիլ անել ժողովրդի շահերին նուիրուած բոլոր տարրերին անխտիր՝ եւ բացայայտ բռնութեան, եւ շինծու հրաժարումների ճանապարհով: Բակունցը սեռնում էր այդ: Նա դիտէր, որ ժողովրդի ստեղծագործ տարրերը ի վիճակի չեն Ֆիզի-

քայէս դիմադրելու այդ անհասարուծի դէմ: Նա յստակօրէն գիտակցում էր, որ իր պաղափարների մարմնացում կազմակերպութիւնը, այսպէս թէ այնպէս, օրէնքով պիտի վերացուի եւ օրէնքից դուրս հռչակուի: Բայց կազմակերպութեան վերացումը չի նշանակում ժողովրդի վերացում, կամ նրանից օրդահայէս հեռանալ: Եւ Բակունցին վիճակուեց իր կուսակցութեան «ինքնալուծարումը» ճնախաձեռնելու՝ ու անցկացնելու ծանր պարտականութիւնը: Այդ ապերախ գործի պատճառած հողեկան ապրումները յաճախ դրսեւորում են Բակունցի էլոյթներում: Մենք ուզում ենք զանազան մէջբերումներ կատարել Բակունցի արտայայտութիւններից, որոնք պատկերացում կարող են աւել եւ նրա կատարած աշխատանքների, եւ Հենց իր վերաբերմունքի մասին:

Այսպէս, իր բացման խօսքում Բակունցը ասում էր.-

«Մարքային դաշնակցականների այս համագումարը պատմական մեծ արժէք ունի: Աշխատաւորական տարրը Դաշնակցութեան մէջ երբեք հնարաւորութիւն չի ունեցու ունեցու իր համագումարը, պարզիլ իր ցանկութիւնները: Հենց այդ աշխատաւորական տարրն է, որ այժմ ազատագրոււմ է կապանքներից եւ խզում իր կապերը Դաշնակցութիւնից: Այս համագումարից յետոյ 4000 շարքային մախկին դաշնակցականներ լծուելու են հարկորդային Հայաստանի վերաշինման գործին, ոչ թէ որպէս անկուսակցական սպեցմեր, այլ հանդէս են բերելու իրենց յեղափոխական ոգի էներգիան յանուն խորհրդային երկրի բարգաւաճման: Այս երեւոյթն անշուշտ կարծիքների որոշ մթնոլորտ է ստեղծելու թէ արտասահմանում եւ թէ այստեղ: Ապագայ պատմագիրը կը գնահատի մեր համագումարի պատմական արժէքները, օսկայն մեզ համար, որ չորս ամիս շարունակ նախաձեռնող ենք հանդիսացել այս համագումարին եւ ակամատես եղել բազմաթիւ փաստերի, պարզ է մի բան, որ մեմք այլեւս անկարող ենք մնալ Դաշ-

նակցութեան մէջ: Հրաժարուելով Դաշնակցութիւնից, մենք մեր կենսունակ ուժերը ի սպաս ենք դնում խորհրդային Հայաստանի վերաշինման ու պայքարին՝ ուղղուած այն բոլոր շարժումներին դէմ, որոնք մարտակ կ'ունենան յայտնելու մեր ազատ կեանքը: Դաշնակցական մասան գալիք պայքարի ժամանակ կ'ապացուցուի, որ նա իր, խորհրդային հայրենիքի ամենայն պաշտպանն է:

Քակունց իր ինֆորմացիոն ղեկուցման մէջ ասում էր.-

«Դաշնակցական հետևողութեան յետոյ դաշնակցական մասան սկզբում պատահել էր: Նա առհասարակ շարժումներէն էր ասում ամէն տեսակ հասարակական շարժում: Ան աշխարհի մասնատում աննպատակ էր ձեռնարկել այս տեսակ շարժում: Այդ ուղղութեամբ տրուած մի քանի փորձերը վիժեցին, կարելի չլինելով որոշ ձեռք բերուած ստալ: Այս տարի միայն մի քանի ընկերներին մէջ միտք յղացու աշխարհի մի համագումար կազմակերպել, իմանալու համար դաշնակցական մասայի տեսակետները, վերազննահատելու համար Դաշնակցութեան անցեալը եւ որոշելու նոր ուղիներ: Երբ վերջացաւ, պատերազմի, փայտատի, քաղաքացիական կռիւների ուղարկ, այն ժամանակ արտասահմանում Դաշնակցութիւնը իր ուժերի մոբիլիզացիա յայտարարեց եւ բնական է, որ նա պիտի վերազննահատութեան ենթարկէր իր գործունէութիւնը: Վիեննայի համագումարում Դաշնակցութիւնը այնպիսի ընթացք բռնեց, որից յետոյ բնական էր մեր եւ նրանց կապի յոգումը: ...Երբ մենք փորձեցինք նախաձեռնող հանդիսանալ Դաշնակցութեան քայքայման գործին, այդ մասին դիմում արինք որոշ խմբակների: Սակայն նրանց պատասխանն անելի քան ծիծաղելի էր: Նրանք կարծում էին, թէ կարելի է Դաշնակցութիւնը յեղափոխել ենթարկել: Սկզբում ծրագրուած էին Համակովկասեան համագումար կրակել, ինչպէս եւ դիմել արտասահմանին, համագումարին տարել մի տեսակ համադաշնակցական

բնոյթ: Սակայն որոշ նկատումներով առաջով յարմար համարուեց կազմակերպել միայն համահայաստանեան համագումար, որ միջազգային մասշտաբով տնտեսի արժէք ունի, քանի որ Հայաստանը մի քաղաքական միաւոր է եւ անելի ազդեցիկ է դառնում այդ միաւորի ստեղծմանը: ...Մեր այս շարժման ամէնից առաջ արձագանգ տուեց Զանգեզուրը: ...Զանգեզուրի կոմիտէի կողմն արձագանգ տուեց ամբողջ գաւառը: ...Ամէնից դանդաղ եւ ուշ աշխատանք սկսուեց է կենտրոնում - երեսունում եւ Ալեքսապոլում, որովհետեւ այդ կենտրոններում են գլխաւորապէս հաւաքուած նախկին դաշնակցական մտաւորականները: Նրանք առաջադրում էին որոշ պահանջներ եւ ձգում էին իմանալ այս շարժման իրական դրագապատեանները, որոնք էին երկար շարժման միանալու միտքը: Այս համագումարը անշուշտ դրական պիտի համարել, որ նախկին դաշնակցականների ինքնաձայնումը, ինքնակազմակերպութեան եւ դիմադրութեան մէջ չափազանց անկարգ արտայայտութիւններ: Մենք գտնում ենք, որ Դաշնակցութիւնը իր սկզբնական շրջանում կատարել է դրական աշխատանք, մինչդեռ մի շարք նախկին դաշնակցականներ իրենց դիմադրութեան մէջ յաճախ անտես էին անում եւ այդ համագումարը: ...Պիտի ասել, որ դաշնակցական ընկերները վերջին տարիներս չափազանց անախ էին հասարակական գործերից: Նրանց հետ խօսելը մեռելի տան մէջ հարսանիքի մասին խօսելու էր նմանում: Միւս կողմից շատ ծանր էր դաշնակցական երբեմնի դեկալարաների համար դուրս գալ մասայի առաջ եւ յայտարարել, որ երբեմնի իր քաղաքում ուղիս եղել է սխալ: ...Ինչպէս ասի, կենտրոնում դժուար էր տարուած աշխատանքը, շատերը չէին ձգում դիմադրութեան տալ, անելով իրենց ուրոյն պահանջները, որոնց դժուար էր բարարարել: Մենք այդպիսիներին թողնում էինք, որ մնան ստակական քաղաքացիներ: . Իսկ գիւղերում

ընդհանրապես բոլոր հակայեղափոխականներին համարում են դաշնակցական: Այսպիսով դաշնակցական բառը դարձել է սինոնիմ հակայեղափոխականների: Երբեմն կուլակները իրենց ձայնագրությունները վերագրում են իրենց դաշնակցական լինելուն: Դա սխալ է: Նրանք ձայնագրել են, իրեն ոչ աշխատաւորական տարր: ...Այսպիսով տեսնում ենք, որ Դաշնակցութեան հիմքը կամ այն մասը, որ իր ուսերի վրայ է կրել կուսակցական ամբողջ բեռը՝ այս համագումարում ներկայացուած է: Մի համագումար էս նկատի պիտի ունենանք, - դա մասնակցողների տարիքն է: Աւելի բարձր տարիքը 30-40 տարիք ունեցողներն են: Այս սուղաբը համապատասխանում է մեծ բուստած ունեցողների սուկասին: Տարիքը արժեքաւոր է այն տեսակետով, որ ցոյց է տալիս, թէ հեռացողները հետագայում էլ պիտի աշխատեն ակտիւ կերպով ոչ միայն երկրի քաղաքական ապահովութեան, այլև մեր սոցիալական հրեակայ պայքարի եւ երկրի վերաշինութեան համար: Դաշնակցութիւնից հեռացող շարքայիները խոշոր մասը կազմում է գիւղացիութիւնը: Միւս մասը ուսուցիչներ, գիւղական ինտելիգենտներ եւ բանուորներ են: Սրանց թողած թղթերը եւ դեկլարացիաները Դաշնակցութեան պատմութեան լուսագոյն վաւերագրերը կը դառնան: ...Հայաստանում անշուշտ մընում են անհատ դաշնակցականներ, որոնք տարիներ շարունակ աշխատելով, չէին կարող խաչ դնել իրենց գործունէութեան վրայ: Դա եւս դրական գիծ պէտք է համարել: Այդպիսիների համար դեկլարացիան քաղաքական մահ էր նշանակում: Նրանց համար մտնմ քայլ չտանելը քաղաքացիական քաղութեան սպառնաց պիտի համարել: Գիւղացիներից ստացուած են բազմաթիւ գրութիւններ, որոնք գեղեցիկ միւթ են, ծանօթանալու համար գիւղական աշխարհի հագեթանութեան հետ: Նկատուել են որոշ անհասներ ,գիւղական որոշ պատասխանատու անձեր, որ թայֆայական պատճառներով հայաժամքի են ենթարկել մալիկին դաշ-

նակցական աշխատաւոր գիւղացիներին, համարելով նրանց հակայեղափոխական: ...Մի քանի վայրերում շարժումը ցանկալի կերպով չի տարուել, որովհետեւ աշխատանքին մասնակցել են եւ ոչ դաշնակցական ընկերներ: Բիւրոն այդպիսի շարժում համարել է անվաւեր: ...Վերջացնելով իմ գեղուցումը, պարտք եմ համարում ասելու, որ այս շարժումը մի քաղաքական թեւերանա անելու համար չէ երբեք: Սա թիւում է մեր յեղափոխական խոր համոզումից: Մեր մալիկին կուսակցութիւնը անելիք չունի: Մենք համոզուած ենք, որ դաշնակցական մասսան կ'ասի իր որոշ խօսքը եւ կը գծի իր ուղին: Բիւրոն համոզուած է եղել, որ շարքային դաշնակցականը կարեւորութիւն չի տայ այն ասելուներին, թէ այս շարժումը կատարուել է որոշ ճնշման տակ եւ կամ կազմակերպուած է որոշ դիտումով: Վստահ ենք, որ Դաշնակցութեան այս համագումարը չի սայթաքի, նա իր վերագնահատութիւնը կը տայ ըստ արժանւոյն եւ հաստատ ուղի կը գծի իր համար, մի ուղի՝ որ վայել կը լինի քաղաքական անցեալ ունեցող յեղափոխական ընկերներին»:

Նոյն համագումարում Դաշնակցութեան վերադնահատման առթիւ Սիմոն Փոլեանի տուած ընդարձակ զեկուցման շուրջ վիճարանութիւնների ժամանակ Բակուեցը ասում էր.-

«Ընկերներ, երբ գաւառական կոնֆերանսում մտն գեղուցում էր դրուած, եւ մի առաջարկ մտքի, որ վերագնահատումից առաջ, իւրաքանչիւր վերագնահատուող մի էիլ էլ իր անցեալի գործունէութիւնը գնահատէր եւ որովհետեւ այդ չէր նկատուում, ինձ թւում է պէտք էր վերլիշել այն բոլոր պատմական պայմանները, որոնց մէջ այդ կուսակցութիւնը կատարել է քաղաքական անթիւ ակտեր: Զէ՛ որ ճշմարտութիւն է, որ այն դասակարգը, որի անունից խօսում եւ գործում էր Դաշնակցութիւնը՝ հայկական մամր բարձրագիւղան ժամանակին խոշոր յեղափոխական դեր է կատարել, եղել է արտայայտիչը հայ քաղաքական

մտքի տարիները շարունակ: ...Մեզ համար պարզ է այսօր, որ Դաշնակցության հետ միասին հայ քաղաքական մտայնությունն ենք դատապարտում, քանի որ այդ դատի (- Հայկական Դատի) պաշտպանությունը Դաշնակցությունը ստանձնել է իրենից առաջ եղած քաղաքական խմբակները: Իսկ այդ խմբերի ծագման պատճառները թաղում են հայ պատմության խորքերում: Ես բողոքում եմ մի արտայայտության դեմ: Գնահատության ժամանակ, մանապես այստեղ, չի կարելի ասել մենք, դուք եւ այլն: Բոլորն ենք միմյանից հեռավոր ենք, եւ այս հանգամանքը թոյլ չի տալիս գեկուցողին դուքով դիմելու լսարանին, որովհետեւ ինքն էլ դաշնակցական է եղել: Բոլորի հետ միասին ժամանակին ես արդարացրել եմ ինձ վրայ դրած յայտերը, կատարել եմ այն, ինչ քելադրում էր մեր շրջապատը: Բնկերներ - Դաշնակցության պատմության մեջ Պարսկական յեզափոխությունը յեզափոխական լաւագոյն էջերից մէկն է, սակայն վերագնահատման ժամանակ այդ շարժումը անտես առնուց: Բաց եւ որոշ յայտարարում եմ, որ Պարսկական շարժումը յեզափոխական շարժում էր եւ Դաշնակցությանն ուղջ անցնալի պարժաններից լաւագոյնն է: Եթէ 30 տարուայ գործունէութեան ընթացքում սայթառումներ ենք ունեցել եւ յանցապարս ենք, ապա թոյլ տուէք ասելու, որ Արեւելի մեր հայրենան մի շարք յետամնաց ազգերի մէջ յեզափոխական շարժումներ ենք առաջացրել: Զեկուցման մէջ շեշտեց եւ կամաւորական շարժման մասին: Այդ շարժումը դեռ շատ թարմ է մեր յիշադութեան մէջ՝ կամաւորական շարժման ժամանակ Դաշնակցությունը մեր ազատագրումը կապել էր օտար պետությունների շահերին եւ դրա համար էլ մենք չարաչար տուժեցինք, կամաւորական շարժումը միայն կրակի վրայ իւր յեցրեց եւ խորացրեց ազգամիջեան տեղաբիւնը: Ի հարկէ, կոտորածի պատասխանատւութեան խոշոր մասը ընկնում է մեծ ու փոքր ինպերիալտական պետու-

թիւնների վրայ: Կը գայ ժամանակ, եյր համաշխարհային յեզափոխությունը կը յաղթի եւ բոլոր գիշատիչ աշխարհակալների հետ միասին նաեւ 1915 թուի կոտորածի ղեկավարները իրենց պարսուցը կը թեքեն յաղթական պրոլետարիատի սուսերի առաջ: Վերջացնենք: Դաշնակցությունը թարգմանն է եզել մեր ցանկութիւնների: Մեր սրտերում այժմ ուժեղ ողբերգութիւն է կատարում, որովհետեւ մենք գգում ենք, որ մեր գործունէութեան արդիւնքը խոշոր չափով եզել է յօգուտ հայ աշխատաւորութեան թշնամիների՝ ոուս եւ տաճիկ բռնակալութեան: Այս համագումարը մի ժեստ չէ եւ ոչ էլ քաղաքական մի սերաշահութիւն: Պարզ եւ կտրուկ յայտարարում ենք, որ անցեալում սայթառումներ շատ ենք ունեցել: Մեր վերագնահատումը մարտի ժանը հարուած է մեր նախկին ղեկավարների համար: Մի հարց եմ ուզում տալ գեկուցողին: Դաշնակցությունը հայկական մանր բուրժուազիայի մտայնութեան արտայայտիչն էր եւ ինչպէ՞ս եզաւ, որ մտայնությունը ոչնչացաւ, այդ մասին գեկուցողը ոչինչ չասաց: Մակայն պարզ ու որոշ սլիտի ասել, որ Դաշնակցութեան տեղեղած պայմանների մէջ քայլաշարք հայ քաղաքականութիւնը, մանր բուրժուազիան, սպառուեցին նրա պառաքական ուժերը եւ այդ պատճառով էլ մեռաւ այն արմատը, որի վրայ անուրացել էր Դաշնակցությունը: Մենք գնալու ենք այժմ մի այլ ուղիով, որդեգրել ենք այլ համագում եւ եթէ արեւէ վտանգ սպառնայ խորհրդային երկրին, պատարատ ենք պաշտպանելու մեր ճոր ուղին եւ այնպէս, ինչպէս դաշնակցական յորութերը չնաշխարհիկ հերոսութեամբ կրունել են անցեալում, մենք էլ կ'ապացուցենք, որ մոյն ոգով կը կրուենք, այս անգամ պրոլետարիատի համար, յեզափոխութեան համար»:

Վիճարանութիւնների ընթացքում արտայայտուեցին զանազան կարծիքներ, հրը խօսողները այս կամ այն կերպ շօշափում էին Բակունցի տեսակէտները,

մեծ ճանա՞ր դրական ու համոզողական վերաբերմունքով: Օրինակ, բանուոր Տրդատեանը ասում էր:—

«Բնկերներ, այստեղ այնպես արտա-
յայտուեցին, որ կարծես թէ Դաշնակցու-
թիւնը աւելի վնասակար է եղել, քան թէ
Սուլթան չամիլը: Եթէ խօսում էք մրս
մասին, ապա պէտէ է պատճառաբանէք:
Ես բանուոր եմ եւ այդպէս չեմ մտա-
ծում: Իմ կարծիքներով ես միանում եմ
ընկեր Բակուցին: Տանկառայ դատի վե-
րաբերեալ ընկերները նոր եմ հասկանում,
որ ուրիշ կերպ լինել չէր կարող: ... Կա-
մաւորական շարժման ես էլ էի մասնակ-
ցում: Կյա դէմ էր միայն Աւետիք Շահ-
խաթանեանը: Ես հասկացել եմ, որ Դաշ-
նակցութիւնը մինչեւ 14 թուականը եղել
է սոցիալիստ: Բայց ես պարտ եմ համա-
րել առաջին հերթին կոտորուող տանկա-
հայրութեան օգնութեան գնալու, ինչպէս
այսօր ասում ենք վերմանակամ բանու-
որութեան օգնութեան գնալ: Դաշնակցու-
թեան դրօշի տակ աւելի շատ բանուորա-
կան միութիւններ կային, քան միւս կու-
սակցութիւնների մտ: Ես չեմ գրջում,
որ պատկանել եմ այդ կուսակցութեան,
բայց այսօր մենք պիտի ասենք մեր ար-
տասանմանն ընդր նախկին ղեկավար-
ներին, — դուք այլեւս չէք կարող մեզ
ղեկավար լինել: Մենք այսուհետեւ պի-
տի շարունակենք մեր պայքարը պրալե-
տարական սկզբունքներով, մինչեւ լի-
նենք մի ազգ եւ մի դասակարգ»:

*Բակուցին վիճակուեց նաեւ համա-
դուժարի անունից համապատասխան
վերտառութեամբ կարմիր դրօշակը Հա-
յաստանի կոմունիստական ղեկավարնե-
րից Լուկաշինին յանձնելու պարտակա-
նութիւնը: Իսկ փակման խօսքում Բա-
կուցը ասում էր:—*

«Մեր համագումարը ցանկութիւն
չունէր քաղաքական քննարան անել: Մեր
մնուդատութիւնը, որ վնասկան ճեւ ու-
նէր, հասկանալի է, որովհետեւ մենք
ապրում էինք տրագիկ վիճակի մէջ եւ
նզնուօ կտրելու մեր կապերը: Դա արե-
ցինք: ... Սակայն համագումար, որ հա-
մագումարի վերաբերմունքը օրակարգի

կարգերին շատ լուրջ էր եւ վերագնահա-
տումը խոր, — սրանք գրաւական են, որ
դրանից յետոյ մենք չենք դանդաղելու,
որովհետեւ քաղաքական մեծած տարր
չենք եւ շարունակելու ենք մեր յեղափո-
խական գործը: Մեր համագումարի հիմ-
նական արժէքը այս է: Թոյլ տուէք ա-
սել, որ նախկին քաշնակցականների այս
հատուածը խզում է իր կապերը Դաշ-
նակցութեան հետ, չվերադառնալու գե-
պի հինը, որովհետեւ գիտնեմք, թէ ինչ-
քան ծանր էր նա: Փակելուց առաջ ես
բոլորի ցանկութիւնը արտայայտած կը
լինեմ, եթէ ասեմ, որ մենք մեր կապերը
խզելուց եւ անջատուելուց յետոյ դառ-
նում ենք այս երկրի հաւասար քաղաքա-
ցիներ: Երբ կը գայ կռուելու կարիքը,
մենք ոչ թէ կը զլանանք, այլ առաջին
դիրքերում կը մարտնչենք, ինչպէս վա-
յել է ուժեղ թափով շարժուող շարժա-
յին մասսային»:

1923 թուի համագումարը եղաւ ձե-
ւական շրջադարձ Բակուցի հանրային
գործունէութեան մէջ, բայց ոչին մնաց
նոյնը, այսինքն՝ պայքարել «Հայրենիքի
եւ նրա լաւագոյն պատկերի յաղթանա-
կի» համար: Բակուցը եւ նրա գաղա-
փարակիցները եռանդով յուսեցին երկրի
տնտեսական վերաշինութեան, Հայրե-
նաշինութեան եւ ժողովրդի կենսական
ստեղծ ուժերը ճիշդ ուղու վրայ դնելու
ուղղութեամբ: Նրանք թերեւս ունենա-
լին որոշ պատրանքներ խորհրդային իշ-
խանութեան աստիճանական բարեփոխ-
ման մասին, ժողովրդի բնական իրա-
ւունքները վերահաստատման վերաբեր-
եալ, — բայց երբեք չչեղուեցին իրենց
հիմնական սկզբունքից, այն է՝ ամէն ինչ
անել Հայրենի երկրի եւ հարազատ ժողո-
վրդի բարիքի համար: Բակուցը այլեւս
հնարաւորութիւն չունենալով անմիջա-
պէս մասնակցելու հասարակական գոր-
ծերի, իր կոչումը գտաւ դործնական ըզ-
բաղումների եւ դրականութեան մէջ, —
հանրային աշխատանքի համար սահման-
ուած իր ներքին եռանդը արժեքներով
մշակոյթի մէջ: Իր քաղաքական աշխար-
հայեացքը՝ Հայրենասիրութիւնն ու ժո-

զողորդապաշտութիւնը մարմնաւորեց բովանդակութեամբ ժողովրդային իր գեղեցիկ արուեստի մէջ: Հանրային գործիչը շարունակեց գործել գրականութեան ճանտպարտով:

Մինչև 1930-ական թուականները Բակունցը, ինչպէս նշել ենք արդէն, գլխաւոր կազմակերպութիւնների մէջ վարչական գիրք շունչի եւ չէր երեւում պաշտօնական գովազդի փաստաթղթերում: Դրանից յետոյ նրան ցոյց տրւած ուշագրութիւնը եւ յաճախ յիշատակուող «ընկեր Բակունց» արտայայտութիւնը վկայում է, որ նա (չգիտենք երբուստեան) գտնուում էր Հայկումկուսի շարքերում: Խորհրդային պայմաններին ծանօթ մարդիկ շատ լաւ գիտեն, թէ ինչ է նշանակում կուսակցական լինելն այնտեղ: Կովկասակցութեան անգամ լինե-

լը երբեք կարելի չէ շփոթել այս կամ այն աշխարհայեացքն ունենալու հետ: Դա վիճելի չէ: Քանի որ գործ ունենք միակ կազմակերպութեան օրինական եւ ոստիկանական մենաշնորհի հետ: Սակայն կովկասակցութեան մէջ անգամ Բակունցը շարունակեց հայրենասիրութեան եւ ժողովրդայնութեան իր հիմնական գիծը: Կարճ ժամանակուայ մէջ նա մեծ հեղինակութիւն ձեռք բերեց երկրում եւ գրական կազմակերպութեան շրջանակում՝ որպէս գործօն ազգակ, որովհետեւ Բակունցը, - ինչպէս ասում էր ինքը գեղեւ 1923 թուին, - «մեռած տարր» չէր եւ շարունակում էր իր գլխավորական գործը:

Լ. Մ.

(Շար.)

ԷՕԺԵՆ ԵՈՒԵՄԿՕ

Մեծ ազնուկ համաձ ու միմյուս օրս քատերական աշխարհը ազնուկով լեցնող այս քատերագիրը ծնած է 1913 Նոյեմբեր 28-ին, հասած է քատրոնին՝ ուշ, 1950-ին, իր «ճաշատ երգչուհի» գործով, քննադրուած՝ Նիժնյա Պաթայի կողմէ: Գրեց «Գրեց ասպետ Գրեց», «Միտերը», «Թիւթոս սան կած», «Մեղեղլիւրք» եւն.:

Ծովաւայի գործերը քարգամուած են 40 լեզուներու եւ կը խաղացուին աշխարհ չորս կողմը: Հեղինակը ճշդած է իր տեղը ժամանակակից քատրոնին մէջ, իրեն համար գրող մը ամեն բանէ առաջ պէտք է ազատ մարդ մը ըլլայ.- «Արուեստագետ մը ուրիշ բան չի կրնար ըլլայ քան ազատ մարդ մը»:

Ծովաւայ կը մկատէ իմէզիմէ յաւաքայտի մը այն չափով որ իր ճիգերը կը ձգտին անցնիլ պուլձուտային ձեւերը եւ մտաւորական ճար ձեւապաշտութիւնը:

Վ. ՕՇԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՆ

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պրանսայի գրական կենտրոնը աշխարհի ամենէն եռանդունն ու հետաքրքրականն է, ինչ որ ենթադրելի կու տայ որ Պրանսացիք ընթերցասէր ժողովուրդ են, կամ թէ կը զնահատեն գրական երկը: Ճիշդ է այս միայն որոշ դասակարգի մը համար – մտաւորական վերնախաւը եւ ուսանողութիւնը: Մնացեալ մասին, զանդուածին համար, այնքան ալ շիտակ չէ: Անշուշտ Պրանսացիներուն համար, իրենք աշխարհի ամենէն մշակուած ժողովուրդն են, Պրանսան ամէն մարդու հրկրորդ, որդեգիր հայրենիքն է: Հաւանաբար ճիշդ է այս յատկանութիւնը: Սակայն ինչ որ շահեկան է մեզի համար այն իրողութիւնն է որ Պրանսայի մէջ գրականութիւնը մասնազրկութիւն է, որ շատ ալ կապ չունի ընթերցող հասարակութեան մը զոյսութեան կամ զնահատանքին հետ – այս տեսակէտէն, կը նմանի Խորհրդային Միութեան՝ ուր գրականութիւնը կանոնադրուած տապալակ է ու երկի մը առաջին ու վերջնական արժեւորումը կ'ըլլայ քաղաքական տեսարաններու կողմէ: Անգամ ու մոլեռանդ է իր հասարակութիւնը: Դասակարգ մըն է ինքնին բայց որուն դասակարգային դիտակցութիւնը այնքան արթուն է, որուն կիրքը այնքան տաք ու մշակուած գրգռումի վիճակի մը մէջ կը պահուի՝

որ իր ջղային քանսխոնը ա'լ մաս կը կազմէ Քրանսական ազգային նկարագրին, իր եռագիտոտ ներկայութիւնը զգալի է երկրի իմացական ամբողջ կենսոյին մէջ: (1)

Այս դասակարգն է որ, անկախ հանրութեան ճաշակէն, կ'որոշէ թէ ինչ ըսել է գրականութիւն ու վէպ, այս 8-400 գրական քննադատներու, վիպասաններու, զրոյներու եւայլն ցեղախումբն է որ, ինքզինքով սնանելով հանդերձ՝ դեռ իմացական սնունդ կը հայթայթէ Պրանսայէն դուրս ուրիշ հրկիրներու ալ – ՄԱԿ-ի մէջ 30 պետութիւններու պատճենական լեզուն Քրանսերէնն է:

Հանրութեան ճաշակը՝ այս պայմաններուն տակ, միջակէն ալ վար բան մըն է: Պրանսացիք անշուշտ կը կարդան, ու շատ կը կարդան – բայց ի՞նչ: Մենք Հայերն ալ կը կարդանք – նուիրատուաւ:

1) Աւեճէն յատկանշական երկուքը գրական մրցամակներու ու գրական երկեր իրագործելու յատկացուած յոշակներու առատութիւնն է: Անգլիոյ մէջ 13 է թիւը, Արեւմտեան Գերմանիա՝ 40, Միացեալ Նահանգներ՝ 211: Պրանսայի մէջ թիւը կը հասնի 700-ի, որոնցմէ 233-ը ընդ-լամտի գրական երկերու համար, 85-ը միայն վեպի համար, 63-ը պատմական երկերու համար եւայլն: (Ավտրիէ, Օլիւ: Լիթրերէ Էնո Լապլեթէ Բուրշէ, Նիւ Եորք, 1959):

թիւներ, մահացուներ, եւ այլն: Ծրանասայի տպագրական արտադրութիւնը տրպուրիչ է - մօտ 15,000 պարբերաթերթեր, 300-է աւելի հրատարակչական տուններ որոնց տարեկան արտադրութեանց ապաքանակը - 1954-ին - հարիւր միլիոնը կ'անցնէր: Սակայն ժողովուրդին միայն 42%-ն է որ լուրջ դիրք ձեռք կ'անէ (2) ու այս թուին միայն մէկ քառորդն է որ դրական երկեր կը սիրէ: Ենդէ է այս թիւը երկիր մը համար որ համարու ուն վէպին եթէ ոչ ծննդաժայրը ըլլալու՝ գէթ հայրենիքը ըլլալու:

Ժողովուրդին աւելցուցը, հանրային պարտէզի մուտքին շահանակ ծախող կրնէն մինչեւ թաց շրթունքներով մուրեւանդ հաւատացեալ քարտուղարը նախարարին, հաստ ակնոցով, հաստ կօշիկով ու նուրբ վերացական քիթով անցորդէն մինչեւ շատախօս, բարակուկ միտինկը-ը Պրիմիթ Պատտոյի սիրային ու սեւային կեանքի մանրամասնութիւններով (որոնց մասին ամսական 10 միլիոն բառ կը դրուի...) Թէն-Թէն-ի արկածախնդրութիւններով, Տը Վրիգ-ի, Վան Տէր Մէրշ-ի տափակութիւններով կը լեցնեն շիդերը, Նու Տեօ, Գօնֆիւտանս, Միքի Միքիչիի հրատարակութիւններու հայթայթած զգացական տաք հապճեկ սանտուիչներով կը սնունին: Լուրջ վէպ շատ քիչեր կը կարդան: (3)

2) Ծրանասցիք օրօքերքի, մանր լուրի (Ֆէտիլեր) սիրահար են: Ամբողջ երկրին մէջ 116 մեծ օրօքեր կը հրատարակուի ու վերջին քրտահամարի համաձայն, Ծրանասցիքներուն շուրթն մէկը անգայման օրօքերք մը կը կարդայ: Փամի մը այլ քիւր անիկ կը յստակացնին պատկերը: Անգիայ մէջ, ընթերցողներու համաձայնութիւնը ամէնէն բարձրն է - 55օ/օ: Ռեուայ կու գայ նարվիկիան 43օ/օ-ով. Ֆրանսան, յետոյ Փանտանձ՝ 40օ/օ, Աւստրալիան՝ 35օ/օ, Եուէսը 33օ/օ ու Միացեա Նահանգները՝ 21օ/օ:

3) Պատանակամ օրինակ մը կը բաւ: Անցեալ տարի, ամբողջ ամբան քուտահամարները ցոյց կու տան քէ ամէնէն շատ կարդացուած երկերը Տանիօսի Ժաքսէնը ու Ժան Դարլի Լու Տուար օ Բանքըը գուարնալի գիրքերը եղած են. առաջինը՝ երեք շաբաուայ մէջ 100,000 օրինակ ծախած է, մինչ երկրորդը 2 ամսուայ մէջ

Ասով հանդերձ, Ծրանասցիք կը շարունակեն վէպ դրել, դրեթէ ազգովին: Անցեալ տարի, օրական միլիոն հաշուով 7-էն 8 հատ վէպ կը հրատարակուէր, ինչպէս ցոյց տուինք նախորդ քարակրտօքով: Սակայն ազգովին բառը լուրջ իմաստ մը ունի այս պարագային: Օրինակով մը բացատրենք: Փարիզի կարեւորագոյն հրատարակչական տուններէն մին Ժիւլիար, շաբաթական 700-ի շափ ձեռագիր վէպ կը ստանայ: Առաջին ընթերցում մը ասոնց 90% կը մաքրագործէ: Երկրորդական մաղուճներէ վերջ, հրատարակչական տունը միայն 1 հատ վէպ վար կը դնէ ու կը սուլէ... (4): Ու հիմա եթէ նկատի առնուի թէ Ծրանասայի մօտ 300 հրատարակչական տուններէն անուազն 10 հատը Ժիւլիարի կացութեան մէջ են, կը հասկցուի թէ ինչու Ծրանասցիք ազգովին վէպ կը դրեն: Եւ դեռ դժգոհ են, կը գանգատին թէ վէպ չի դրուէր այլեւս, սով կայ, վէպը մահածերձ է... Մենք Հայերը շատ բան կրնանք սորվիլ անոնց գծուարահանութեան, խտապահանջութեան օրինակէն: Բայց ինչպէր հոն է որ մարդ սորվուլու կարողութիւնը նախ պիտի ունենայ որ կարենայ սորվիլ:

Իժուար չէ ուրեմն հասկնալ ինչու՞ Ծրանասայէն էր որ ծագում առաւ վիպական արուեստի վերանորոգման առաջին, լուրջ ու հաւաքական ճիգը: Անշուշտ Նար Վէպը պարզ ազգային խանդավառութեան մը արդիւնքը չէ: Ոչ ալ հանճարող մէկ անձի մը գծած ճամբան (5): Այդ

200,000 օրինակի հասած է: (Նուվէլ Լիթէրէր, 12-7-62)

Ուրիշ գրացուցակ մը երեւան կը բերէ քէ վէպի արտադրութիւնը նուազած է Ծրանասայի մէջ: 1962-ին լոյս տեսած 13,282 տնոն գիրքերու մէջ վէպերու քիւր միայն 2,794 էր, մինչ 1961-ին 3,362 եղած էր: (Ֆեկարօ Լիթէրէր, 9-3-63)

4) Ֆեկարօ Լիթէրէր, 30-6-62:

5) Կը ներկայացնենք ցանկը այն հեղինակներուն որոնք մինչ 1968 Նար Վէպ շաբաուայը գլխաւորեցին:-

տեսակէտէն, ոչ ոք վիպական պատմութի սեռը այնքան չէ զարգացուցած իր լեզուարանական, ոճային ու կառուցային փնտառումներով որքան ձէյժձ ձոյս-սակայն ձոյս՝ վէպ չէ որ կ'ուզէր գրել: Ինչ որ նորութիւն է Յրամտացիներու պարզային, խմբական ճիգն է. նորութիւն՝ որ ինքնատիպ տաղանդներու ժամանցի, ջմալքի թեթեւութիւնը չէ այլ կը պաշտպանուի շատ լուրջ էսքէրիճով մը, փիլիսոփայութեամբ մը ու մասնաւոր թէքիթով մը: Այսինքն՝ մտաւորականի, աւնուպն լուրջ մարդու ձեռնարկ է: Նոր վէպի վարպետները ոչ միայն Համալսարանական են այլ ոմանք գիտական կրթութիւն ալ ունին (6): Յետոյ, Հակոբակ իր նորութեան, որոշ թէմաներ այնքան ալ նորութիւն չեն - թէ Սարթր եւ թէ ալ Ռոպ-Կրիշէն ատարկաներու Հմայքին ենթակայ են, Քամիւ եւ Պէքէթ Երկուքն ալ ապսիլարով կը զբաղին:

Սեղծ յողուածի մը սահմաններէն դուրս չելլելու Համար, գոհանանք միայն մատնանշելով թէ էւրոպական ամբողջ վերջին յիսնամեակն է որ իր ներքին տրամաբանութեան օրէնքով կը բանաձևուի նոր վէպի կամ, ինչպէս Սարթր կը կոչէ Հակա-Վէպի մէջ: Երուսթ, ձոյս, Քամֆա ու Ֆոքերը - այս չորս գրողներն են Հոգեկան նախահայրերը նորերուն: Իսկ անմիջական Հայրերը Սարթր, Սիմոն Եր Պօլուար, Քամիւ սերունդ է, որուն մշակած պայքարի ու իմաստասիրական գրականութիւնը, վէպը ծանրաբեռնած էր վէպի էութեան խորթ, օտարամուտ տարրերով: Պատերազմի սերունդին վերջին մեծ գիրքը Սիմոն Եր

Պօլուարի Լէ Մանուրէնն է, 1954-ին: Այդ նոյն թուականէն կը սկսի նոր Վէպի արշաւը: Պատմականօրէն, նոր գրականութիւնը ծայր կու տայ 1951-ին, Պէքէթի առաջին մեծ վէպով, Մօլլոյ ուր տուջին անգամ ըլլալով, վէպը ուրիշ նիւթ չունի բացի ինքզինքը, ուր գրականութիւնը վերածուած է շրջապատի գիւցադներգութեան մը, բաւերու արկածախրնդրութեան մը (7): Յաջորդ տարին, Ան Աքքալուան Կոստն է, որ սկիզբը դրաւ Պէքէթի փառքին: Այսպէսով, Պէքէթի, իր գրքին ու հրատարակչին, փերօմ Լինտօնի շուրջ (Լինտօն այն յանդուպն հրատարակչին է որ 1948-ին ձեռք առաւ Խոթսօն տը Միմուի հրատարակչական տունը ու վեց հրատարակչի մերժումը Մօլլոյի ձեռագիրը ապեց, ինչպէս եւ Կոստն ու հրատարակ Նեսեց նոր Վէպի ամբողջ շարժումը) կապուեցաւ արականարտի խմբակը ու շարժումը՝ որմէ մինչև այդ թուականը քանի մը ցան ու ցիր գործեր տպուած էին միայն - Սարթրի Երկու վէպ, Տիւրայէն Երեք, Քայրօլէն Հինգ, Սիմօնէն Երեք, Պէքէթէն չորս ու Ռոպ-Կրիշէն՝ մէկ: Այս երկու ընդհանուր բարեխառնութիւնը կը նախագծէ գալիք շարժումին նկարագիրը:

Սակայն բուն թափը 1954-էն վերջ ծաւալ ու ծանրութիւն ստացաւ (8):

6) Մ. Պիւթօր փիլիսոփայութեամ փրօֆէսօր է, Ա. Ռօպ-Կրիշէն՝ Էմիլիէտօ-սիթօսօ է, Ն. Սարթր կամալսարանական է, Ս. Պէքէթ Անգլիքանի դասախօս է, Մ. Տիւրաւ ուսուցաբան, ընկ. գիտութիւններու եւ իրաւաբանօրեան մագիստրոս է, Ք. Սիմօն արքայազն է, Ֆ. Սօլլերօ՝ տնտեսագետ է Եւայլն:

7) Պետար Բեմիլայ յօդ. Մօլլոյ Արէ տիգ Ան տպ. Լէ Քակ Սօսէրն, Յունաստ, 1963:

8) Նայ Մ. Պիւթօրի Բաստօ տը Միլան, Ն. Սարթրի Մարթրօ, Ք. Սիմօնի Լը Ասքրը տը Բրէնթան ու Ֆ. Քայրօլի Էսթառ տիւն Նուի Վեպերը, չուլքմ ալ հրատարակուած 1954-ին: 1955-ին տպուեցան Ա. Ռօպ-Կրիշէնի Լը Չուայէտօ, Մ. Տիւրայի Լը Սքուար վեպերը ու Ք. Սիմօնի Լը Քասալօր Անտրէքէ բաստիսալալը: 1956-ին Մ. Պիւթօրի Լամբրոտտա Ռու. Քան, Ն. Սարթրի Բօրթրէ տեռ Էնտիւ (Բ. հրատ.), Ֆ. Քայրօլի Լը Տէմօնէման վեպերը: 1957-ին հրատարակուեցան Մ. Պիւթօրի Լա Մամֆիլաօօօն, Ա. Ռօպ-Կրիշէնի Լա Փալուպի, Ն. Սարթրի Թրօփօզ (Բ. հրատ.), Ք. Սիմօնի Լը Վան, Ռ. Բեմիլայի Լը Տրասալ Տիլիպիւսթ, Ֆ. Քայրօլի Լա Կաֆ ու Ք. Սիմօնի Ենճա վեպերը: 1958-ին հրատարակուեցան Մ. Տիւրայի Մատրօսօ Քանթապիլէ, Ք. Սիլիէի Լա Միգ ան Սէն ու Ֆ. Սօլլերօի Ին Քիւրիէտը Սօլթիլա վեպեր:

Տաւր տարուայ մէջ կրցաւ ինքզինք պարտադրել, ոչ թէ իբր գրական գրչոց մը այլ որպէս գեղապատական նոյն տեսութեան մը ստեղծումին ու կիրարկումին լծուած փնտոողներու շարժում մը: Արզարեւ, Հակայ տարբերութիւններ կը զատեն Պիւթօր մը Պէքէթէ մը, Ռօպ-կիրէյէ մը Սարրոթէ մը, սակայն բոլոր տարբերութիւններուն ընդմէջէն կը տեսնուի Հասարակաց առանցք մը, միութեան մակարդակ մը - բոլորն ալ նոյն ըմբռնումը ունին թէ ինչ է իրենց պաշտօնը, իրենց Փօնօսիօնը իբր արուեստագետ: Մինչ Սարթը կը Հասարար թէ գրականութեամբ կրնար փոխել ընկերային կարգերն ու իրականութիւնը, Նոր Վէպի Հեղինակները չեն Հասարար թէ իրենց ընկերային որեւէ օգտակարութիւն ունին, թէ կրնան փոխել իրականութիւնը: Իրենց կարելին ոչ թէ բացատրելն է այլ նկարագրելը: «Վիպասանին թէքիքը միշտ մէքափիզիքն էր մը պայմանատր է», ըսած է Սարթը տեղ մը ու ներկայ սերունդը տարբեր չի մը տածեր, Հակառակ որ կը մերժէ որեւէ փիլիսոփայական իմաստ Հազցնել աշխարհին կամ անոր նկարագրութեան: Նոր Վէպը՝ Նոր Իրապաշտութիւն մըն է:

Փրանսական ժամանակակից վէպի շարժումը նկատելու է նախ որպէս վերանորոգումի ճիգ մը, առնուազն յարաճուելի ձեւափոխութեան մը մէկ Հանդրոունը: Արզարեւ, Էրեսնական թուականներէն ի վեր Փրանսական վէպը երկու Հիմնական փոփոխութիւններ կրած է, ինչպէս գիտել կու տար անգլիացի քննադատ մը (9): Առաջինը՝ նիւթի, բո-

վանդակութեան տեսակետէն, երկրորդը՝ կառոյցի, ոճի: Անորէ Մայրօ, Ժան Փոլ Սարթը, Ալպէս Քամիւ ու Սիմոն տը Պօփուար բնագանցական, քաղաքական, բարոյական ու իմաստասիրական Հարցեր մտցուցին վէպին մէջ: Ինչպէս Մայրօ կ'ըսէր. «Վէպը վերածուեցաւ մարդ էակին ողբերգութիւնը արտայայտելու մասնայատուկ եղանակի մը»: Այս անկաժէ գրողներուն յաջորդեց Էրկրորդ տիբը, կազմուած Մորիս Պանշօ, Սամուէլ Պէքէթ, Ալէն Ռօպ-կիրէյէ, Քլոս Սիմոն, Միշէլ Պիւթօր ու այլ գրողներէ՝ վէպէն մտքին ինչ որ գեռ կը յաճենար 19-րդ դարու ըմբռնումն - ալ սինքն Էնթրիկ ու տաղնայ, նկարագրի վերաբերում, իրականութեան նկարագրութիւն, միջավայր ու վիպային Հետաքրքրականութիւն: Նոր մարդուն պէտք էր Նոր Վէպ մը: Գիտական մարդի մէջ իրադրծուող յանդուքն ու անկաշկանդ փնտոողներուն զրգահեռ՝ կարելի չէ՞ր զարգացնել դրական ալ Հետախուզութիւնը, նոյնքան յանդուքն ու անկաշկանդ: «Ռոմանի դարձիք մը, միջոց ու նպատակ նոյն ատեն (10), ինչպէս կը սահմանէ Ռօպ-կիրէյէ որ ճանչցուած է որպէս իմբակին դեկավորը: «Ոմբակ» բառը, մեր օրերուն, զաւազրական ու քաղաքական գունաւորում մը ստացած է, բայց ներկայ պարագային, կը նշանակէ իմբաւորում մը ուղեկիցներու որոնք բոլորն ալ դրական անունալին մէկ Հանգանակի շուրջ Համաձայն են - ազատագրուիլ պայղաքեան, աւանդական վէպի օրէնքներէն, սրբութիւն դարձած աւանդութիւններէն որովհետեւ ատոնք այլեւս չեն Համապատասխաներ մեր օրերու դրողին խոսնըւածքին, աշխարհին ու պահանջին: Որոնգիրը ըսելիք մը ունենալն է, ու մնացեալը - վէպի սահմանում, վիպասանի տարապ, սրունատի չափանիշ - այնքան

9) 1959-ին լոյս տեսաւ Ք. Մորիսի Լը Տիւէ ան Վիլ ու Ն. Սարրոթի Լը Բլանթեթարիում վէպերը: 1960ին Մ. Տիւրպի Տիգ էօր է Տրմի ուր: Սուր ան էքէ, Ք. Սլմօնի Լա Ռուս Են Փըլանարը ու Մ. Պիւթօրի Տըկրէ վէպերը: 1961-ին Լ. Թօմայի Լը Բրօսօթուար, Փ. Սօլերի Լը Փարք Եւայն վէպերը:

9) Քրուէշեմէ, ձօժ, Տը Նօվէլիսթ էք Ծիւրօֆօրը, Լանտօ, 1962:

10) Ալէն Ռօպ-կիրէյէ, յօդ. Նուվոյ Թօման, Օմ Նուվոյ տպ. Լա Բըզիւ տը Փարի, Սեպտ. 1961, էջ 116:

ալ կարեւոր չին: ՎՄԵՆՔ չենք գիտեր թէ ինչ պիտի ըլլայ վէպ կոչուածը: մենք գիտենք միայն թէ այսօրուայ վէպը պիտի ըլլայ այն զոր մենք գրողներս պիտի կերտենք, եւ թէ մենք ստիպուած չենք երէկուայ վէպի նմանողութեամբ ստեղծելու զայն, այլ ասկէ անդին սեցնելու (11): Երկրորդ հանգանակ մըն ալ կայ - չփորձել կեանքը ասլէն, դատուորել, որնազօրսիկ ճիշտի մը իմաստաւորել այլ տալ իրականութիւնը՝ իբր անձնական գիտակցութեան մը ողբերգութեան ցոյցացումը: Այս մերժումը իրականութիւնը կապելու կամ սարքելու՝ ճիշտ արարք մը չէ: Առանձին մարդեր ենք, գիտենք, ու կեանքը ամէն օր հիւսուող ու գիշերը քակուող անկապ, անհերոսական ձեռագործ մըն է որուն կեղծ վերարտադրութիւնը Թրուստի մէջ փոխանակ զայն, կեանքը, իմաստաւորելու կամ գեղեցկացնելու՝ ակելի եւս պիտի չեշտէ անոր անհեթեթ, եղբրական հիւսքը, քառապոյական Փիլիի մը նման: Կը մնայ մէկ բան, որ հերոսական կամ աստուածային ոչինչ ունի - գիտել իրականութիւնը ու գիտելով՝ գիտուել անկէ...

Այս արտաքին, թէքիք սահմանումին առաջին խորիխը կը կառչի կեանքի ամէնէն խորունկ իրականութեան, հոն ուր անհատը չկայ այլեւս, այլ կայ լոկ անձին սկզբունքը կամ էութիւնը, մերկ ու դեռ չմկրտուած գիտակցութիւնը, սիրտը հանուած բաւերը, ապաքարոյ ենթակայութիւնը: Եւ որովհետեւ վէպին մէջ մտադրութիւնն է, բովանդակութիւնն է որ ձեւին մասնալուծութիւնը կ'որոշէ՝ ուրեմն այս նախնական, անկաշկանդ գիտակցութեան գլխաւոր գործիքը պիտի ըլլան զգայարտնքները: Ու քանակորդ զարու գերիշխան զգայարտնքը՝ աչքն է, իր երկու աշխարհներով՝ ներքին կամ գիտակցական, ու արտաքին՝ այսինքն իրականութեան (որոնք սակայն կարելի չէ իրարմէ անջատել):

11) Նոյն տեղը, էջ 137:

Անմիջական հետեւանքը այն է որ վէպը պիտի ըլլայ այն՝ զոր աչքը պիտի բռնէ գուրսի աշխարհէն. մինչ աչքը, իր կարգին, պիտի ըլլայ այն որ տեղի կ'ունենայ՝ երբ գուրսի աշխարհը ներս խուժէ ու լեցնէ գիտակցութեան անպանծոյն, քնական բեմը՝ շուարումի ու անորոշութեան մշուշով մը: Ու սա չփոթանքին մէջէն, սլաքները հեղինակի զգացական վիճակներուն, վրձինի արագ հարուածները հոգեբանական կազութիւններու, գիտակցական ժայթքերու շարանը՝ պիտի նետուին թուղթին վրայ իբր ա՛յդ, ինչպէս Չաղաքի ազօրեղներ որոնք կը դառնան ու իրենք զիրենք ազալէ գաս պաշտօն չունին: Այսպէս է որ վէպը, իբր նիւթ ինքզինքը լոկ ունի, կամ իր նիւթի փնտառուէն գաս ուրիշ նիւթ, նպատակ չունի: Մէկ հերոս կայ, հեղինակը՝ զոր պետք է տեսնել, որուն Եսը այնքան տարտամ է որ կը լուծուի իրերու լոյս պարագիծերուն մէջ: Գրողն ու ընթերցողը պատմութեան մէջն են միասին, ոչ թէ անկէ դուրս. մէջն են մասնաւանդ հերոսի տիպարին եւ ուրեմն անկարելի կը դառնայ հերոսը ամբողջութեամբ տեսնել: Չենք կրնար ոչ իսկ վատահ ըլլալ թէ հերոսին պատմածը ճշմարտութիւնն է - քանի որ չկայ առարկայական ճշմարտութիւն - ոչ ալ գիտնալ երբ կը դադրի իրողութիւնը եւ երբ կը սկսի երեւակայութիւնը:

Այս ամբողջը, սակայն, հարցին մակերեսն է որ կու տայ: Տարբեր անկիւնէ գիտուած, Նոր վէպը արդի փիլիսոփայական շարժումներու մէկ ճիւղաւորումն է գրականութեան մարզին մէջ - Փէնսմէնսիօթիմ, (որպէս բացարձակ ժխտում Բանքեմ իտլալիզմի) - երբ կը կեդրոնանայ երեւոյթներու նկարագրութեան սահմաններուն վրայ: Սարթրեան էկզիսթանսիզմի զարգացուցած ակնարկի ամբողջ բարդ ու խորունկ տեսութիւնը, Հիւսթըլեան գիտակցութեան սահմանումը որպէս դուս քրամսամսամս ու գայն կանխող ռէպիւսիոն Փէնսմէնսիօթիք-նոյնիսկ Մարքսեան որոշ արժեւորում առարկայականին ու նիւթին (այն չափով

որ ենթակայականին արժեզրկում մը կ'արտայայտէ)՝ մինչև իսկ Ճրոյտեան մերժումը մարդկային բնութեան ու օնթօլօթի-ին. Գաֆթալի գործէն շողարձակող սպախարար, մտասեւեռումը՝ այն շարժում որ տարեկա կրնայ մտածումի հոսանք մը նկատուիլ - այս բարբ արդեցութիւնները, իրերով ու զործիքներով ու մեքենաներով խճողուած մեր դարուն բնգծէջէն, երեւան հաննդին, յանկարծ, բարտոսիկ արժէքը բանի մը որ ցարդ իբր միջոց գործածած էին վրայասանները - առարկան :

Առարկան՝ մեր դարու մեծագոյն գիւտերէն մին: Արգարեւ, առարկային մտասեւեռումը իբր գիտակցութեան թէ՛ ձևը եւ թէ՛ ալ բովանդակութիւնը՝ արտայայտութեան պիտաւոր միջոցը դարձած է ոչ միայն վէպին այլ միւս արուեստներուն ալ - քանդակագործութիւն, նկարչութիւն, նոյնիսկ նրաժըշտութիւն: Երթա՞նք - ետ գէպի մանկութեան աշխարհը ուր առարկաները ա'յնքան հմայուած կեանք մը ունին՝ որքան մարդիկ, ետ գէպի նահնական մարդը ու իր հողեմիճակը, ուր առարկաները ծածուկ, մողական ներկայութիւն մըն էին, ետ գէպի բուն, խորհրդաւոր ակը լեզուին, անխաթար ծայթքումին, այն որ կրչա ու վճիտ քառն էր, կեանքի բացարձակ արժեզրկումը ու հետեւաբար բացարձակ ազատութիւնը մահուան սարսափին ու հրայրքին մէջ բռնուած, նախամարգու չհաւատացող ակնարկին առջին, տակաւին շայտտեղած ատուծոյ ու բանականութեան միջամտութեամբ, վայելք մը զուտ ձեւի ու գոյնի, Հասարակածային անտառէն՝ պէթօնէ մայրաքաղաքը՝ ի՞նչ վրոխուած է որ - սա միայն թէ գիտենք որ քառս մը կայ (բայց ո՞րք է, ի՞նչ է ան...) ու գիտենք թէ՛ մարդ ենք:

Այս մարդուն է որ կրկին կը յանգի իմաստասիրական հոսանքի մէկ ուրիշ ճիւղը, մարդուն՝ որ բացարձակ առարկայ մըն է, սա առարկանութեամբ որ էթրը մը տանի, աշխարհի մէջ ըլլալ մը սենի, էութիւն

մը ունի: Ու այս էութիւնն է որ սիրտ ու հոգի կոչուած խնդրական ու հինգած յղացքին տեղը կ'առնէ: Հիմա, գրողը առարկան նկարագրելով իր էութիւնն ալ կը յայտնէ, էութիւն մը որ այլևս ենթակայական ու զգացական չէ: Այս իրապաշտութիւնը այնքան ծայրայեղ է որ անձնական դերանուն, եզակի, առաջին գէմքի վրայ ալ վստահութիւն չունի ու զայն վերածած է աչքի մը, երրորդ գէմքի մը որու համար առարկան թէ՛ առարկայ է թէ՛ ալ հայելին ուր գիտակցութիւնը թէ ինքզինքը կ'իրագործէ եւ թէ՛ ալ ինքզինքը կը վերուճէ: Աչք-գիտակցութիւն գոյգին հետախուզութիւնը՝ տարածութիւն ու տեւողութիւն կոչուած փիլիսոփայական երկու յղացքներով է որ կը զարգանայ: Արգարեւ աչքաառարկան տարածութեան մէջ կ'երկնահայ, մինչ գիտակցութիւնը պէրկսօսեան տեւողութեան մէջ միայն կրնայ գոյութիւն ունենալ:

Իրականութեան մէջ, նոր վէպի էութիւնը ու մէքսփիլիքը ահհամեմատօրէն աւելի բարդ են քան մեր ներկայացուցած քանի մը պարզ գիծերը: Յետոյ, ընդհանուր քանի մը յատկանիշներէ անդին՝ իւրաքանչիւր հեղինակ գրելու, ըստ տեղծելու իւրայատուկ եղանակը ունի: Ու ոչ իսկ վէպերու նիւթերու ներկայացումը կը յոտակացնէ կացութիւնը, պարզապէս որովհետեւ չկայ նիւթ... (12): Այնպէս որ սխալ է սպասել գործողութեան մը, հերոսի մը, տաղնապի մը կամ

12) Տաճկ սակայն իսկ մը Յաճախար վէպերու միւրը: Ահաւասիկ *Հա Մտիֆիլիսօփի* (Միշէր Պիքթը 1937) միւրը: Առետրական մը յոսանքի փարիզէն շոգեկառնով Հոսի կը ճամբարգէ ուր թարմ, գեղացիւմ հոմանակի մը ունի: Վէպի սկիզբը առետրականը արշած է լինի իր կիսը ու հոմանակի փարիզ փոխադրել: Սակայն մինչև Հոսի հոմանակը միտքը կը փոխէ, հոմագուած թէ Միշի, հոմանակի, միայն Հոսի մէջ է որ իր մասնաւոր հմայքը կրնայ պահել իր թէ փարիզի մէջ իր ու Միշիի յարաբերութիւնը կեղծիքէ ու ժամանայթ գտաւ ուրիշ բան չի կերտար ըլլալ: Ու կ'որոշէ մնալ կնկան հետ. սուրբազ հսկայ վէպը կը մերկայացնէ թէ ինչպէս

միջավայրի մը ներկայութեան, ինչպէս վարժուած ենք տեսնել ատոնք աւանդական վէպին մէջ: Հոս կայ նուազագոյնը, այնչափը որ կը ընցնէ օրուայ մը սահմանները, ապիակ տարածութեան մը վրայ: Հերոսը վերածուած է ձայնի մը, ետ-ի ու ան-ի խառնուրդ: «Վէպին մէջ մարդուն ներկայութիւնը չի յայտնաբերուիր, մենք զայն տրամաբանօրէն կը հետեցնենք առարկաներու ներկայութեանէն... այս վէպերը սպասուած վէպեր են ու կը յիշուին թէ մարդկանութիւն մը (իւմանիզմ) անկարելի դարձած է ներկայիս: Ատոնք բացակայ մարդուն մասին վէպեր են ու մեր բացակայութիւնն է որ կը զօղադերձեն, զայն կ'ընդունին:

Մերժելէ վերջ մարդկային այլասերումի (ալիէնասիօն) կացութիւն մը, այս իրապաշտութիւնը մեր անիրականութիւնն է որ երեւան կը հանէ» դիտել կու տար քննադատ մը քանի մը տարի առաջ (13):

Այսպէս է որ փիլիսոփայութիւնն ու արուեստը կը միանան մարդ էակին նոր իմաստ մը տալու համար որ ամբողջական հակասութիւնն իսկ է մեր ընդունած սահմանումին:

Ճնոր մտայնութիւնը բոլորովին կ'արժեպահէ մարդ էակը, կը մերժէ ընդունիլ մարդկային բնութիւն մը, գիտակցութեան ու տեսողութեան մտերիմ կեանքը կը վերածէ անանձնական փորձառութեան մը, խօսքը ու բուրբ՝ չէզոք, անձն անկախ իրողութիւններու» (14):

Գիտակցական այդ մտփոփոխութիւնը կը կատարուի վակոօնի մէջ, ինչպէս փոխուող տեսարաններում, վակոօնի մէջի ճամբորդներում, աւարկանքում ու ժամանակի ընթացքին հետ իր գիտակցութիւնն ալ կը փոխուի ու կը յամգի եզրակացութեան:

Նոյն հեղինակին կայ նաեւ *Արդուա Տիւ Քան* (1958) վէպը: Ֆրանսոցի մը, ժամ իրվէր, Անգլիայ մէջ Պիտքան քաղաքը կ'այցելէ: Մէկ տարուայ կիսմէք հոն զինք կը ծանօթացնէ քանի մը անձերու ու մտաւանդ կը յօսեցնէ ռոբային ցաղտնիքի մը որ սեղի ունեցած է հոն եւ որու մասին ամատարացիք զիրք մը կը գտնէ օր մը. Յակաւ, մարդիկ, առարկաներ ու ռոբային պատմութիւն իրար մէջ կը ձուլուին: Մինչև հասակայն դիտել է ու պատրուակ: Վէպը՝ ժամանակ ու տեսողութիւն ապրումներու մասին է: Արդարեւ, օրագրի ձեւով գրուած այս գիրքը չորս տարբեր ժամանակներու մակարդակներու վրայ կը զարգանայ, արդիներու տեմ անգամ որ պատահար մը արձանագրել՝ նախորդ օրուայ գրաթը կը կարգայ ու նոր եղանակներու, նոր գիտակցութեան մը յոյսին տակ կը վերամշակէ Յալարգ օրուայ գրութիւնը: Անգղայը տեսարար կը վերամշակուի, կը փոխուի ներկայի ազդեցութեան տակ որ ինքնին թէ՛ յարափոփոխ է՝ եւ թէ ալ այդ փոխուող անցնայի փոփոխութիւններէն կ'ազդուի:

Ռոպ-կրիյէի *Ճարտքի* վէպին մէջ (1967) նայն զիտողի մը, Յիպոպոզոզի մը այնք է որ կը պատի սասած իրականութեան վրայ ու գոյն կը կենցաղանցնէ: Յայտարարութեան մէջ, հեղինակը ինք կը բացատրէ - շայն հերոսը ոչ ամուսնուի, ոչ գիմարի: Աշխարհի օրտին գեանդուած պարագութիւն մըն է ան, աւարկանքէ շինուած միջավայրի մը մէջ պարզայ փառ մը միայն:

Բայց արդիներու քայքայ քեծքը իրմէ կը մեկնի ու իրեն կը յանգնի, այդ պարագայ մի, ի վերջոյ կ'ըլլայ այնքան շօշափելի ու լեցում, եթէ ոչ աւելի՝ որքան են առարկաները: Ափրիկեան ցաղքավայր մը, մօզի բուսութեան մը որու մէջտեղը՝ պոնտիւն օր կը ընկնի Տիւ Ա... ու իր անտեսներ: Քառարգ ժամ անգին՝ ուրիշ բանութեան ու գոյգ՝ նոյնպէս Եւրոպացի, Ֆրանսէն ու Քրիստիան: Ֆրանսէն յամայն այցի կու գայ Տիւ Ա...ին, նաչի վար կը մնայ կամ երեք մէկ պատշաճը կը նստին ու կը խօսին: Ճշարտանի պատիմ՝ մեքսական քառուկանակի մը կեանք, եկուտ՝ գործարարներ քանի կատար մը կը նորոգեն: Արեւուն շուք: Զայնք. Ասուս մը, Տիւ Ա... ու Ֆրանսէն նուանակիտ կ'երթան, առաջինը գնումն ու երկրորդը՝ գործող: Պիչերը վերադարձին օրու ծափ կը բարձրի ու կ'այրին: Ան ճիւղք: Նկարագրող՝ անտեսանի ամուսինն է, լուսանկարչական գործիքի մը այլին շափ ներկայ-բացակայ. սա տարբերութեամբ որ այս աչքը ընտրութիւն մը կը կատարէ: Այնպէս որ աչքը, կամ նախան ամուսինը կը պարզին ամէ ըլլալու ու կը վերածուին ճանաչման որ թէ կ'իմաստաւոր տարկանքը, որոնց մաս կը կազմեն ժողովն ալ. եւ թէ ալ այդ իմաստաւորումով գոյութիւն կու տայ ինքզինքն:

13) Օլիվիէ ար Մանի, յոգ. *Քանդամա ար լու Եւրէլէ Լիթէ-Քիւր Քանտիւք*, ալ. *Կորբէ*, Յուլիո-Օգոստոս 1956, էջ 16:

14) Գը սիրեմ սինմամ: Գը կուտամ սինմարգրութիւն երկին այն շափով որ կը կուտամ գրական երկին: Ան ալ կարող է շտաղքը:

Այսպէս կը բարոյախօսէր Փրանսացի քննադատը շորտ արի առաջ, հարցին քաջով զուտ իմաստասիրական նկարագիր մը: Բայց այդ չէ կարենալը:

Կարենալը այն է որ Նոր Վէպը պարտադրած է ինքզինք, հակառակ բոլոր մարդարէ-քննադատներուն, սկեպտիկներուն աւ հեղինակներուն: Երբ Ռօպ-Կըրրիյէի - Ժալուզիմ լոյս տեսաւ վեց տարի առաջ, մարդիկ ըսին որ հեղինակը փախուկին մէկն է: Այսօր տասէն աւելի լեզուներու թարգմանուած է ու Միացեալ Նահանգներու մէջ զայն իր ֆրանսերէնի դասագիրք կը դործածեն (որ պրակտիկ աւելի լեզուական արժանիքի մասին վկայութիւն մըն է): Ձեռագիր համարարանի դասախօսներէն մին իր պրակտիկութեան վրայ զիրք մը գրած է արդէն: Գիրք գրուած է Պիթօրի մասին, մինչ Պէթէթի երկին շուրջ քննական գրականութիւնը մատենադարան մը կը լեցնէ:

Կարենալը նաեւ այն է որ այս աչքի ու գիտակցութեան միպատանները գրականութեան պարտէզէն նետուած են արուեստի միւս հրապարակները: Այսինքն՝ ստակած են թատրոնի բեմին ու մանաւանդ սինեմայի պատաստին: Սինեմայով, որ գլխաւորաբար աչքի թիզերէ է (մարդ կը վարանի արուեստ կոչել, այնքան տարտամ են այլեւս սահմանները) նայուածքի վիպասանները կը յուսան արտայայտել այն աւելիմ գոր բառերով չկրնան: Ռօպ-Կըրրիյէ, որ հանրածանօթ է արդէն Լամոնէ Տեռնիէն ա Մարի-Կալոս Փիլիպ սեմարիօ-ով, այժմ Փիլիպ արտադրելու գործին լծուած է... (15): Պիւ-

թօրի վերջին դործերէն, Մօպիլ Պիլիպ-ը բեմադրուած է արդէն: Նոյն հեղինակը բազմաթիւ ռատիոյի ու քեյվիլիզներ սերիալներ հրատարակած է բազմաթիւ պարբերականներու մէջ, մանաւանդ Նուվել Նուվել Ռովի միւրսուտէր մէջ: Նոյնն է պատրաստ Բէնտէի: Հարկ կա՞յ խօսելու Պէթէթի մասին ու ապսիւրոսի թատրոնին մէջ անոր գրուած կեդրոնական դերին մասին: Մ. Տիւրան ալ թատրոնին դործած է ու ժօտերն իր թատերախաղերէն մին պիտի ներկայացուի Փարիզի մէջ: Նոյնն էր երեւոյթը միւս, աւանդական միպատաններուն պարագային - Քամի, Սարթը, Ժընէ, Քօթթօ, Էսայն: Այսպէս կը թուի թէ որքան աւելնայ բանականութեան կշիռը արուեստին մէջ, այնքան դիւրաւ կը ջնջուին սեռերու միջեւ գոյութիւն ունեցող սահմանները:

Նոր Վէպը ոչ առաջինն է ոչ ալ վերջինը գայթակղութիւններուն որոնք անցնող քառորդ դարու ընթացքին երջանիկ պոսթ-մոդէրնիզմի անուշ-լուրի ճաշակը առին ովկիանոսի փոթորիկին մէջ նետուցին: Մարդիկ հազիւ համակերպած էին Բիքստոյի նկարչական նորութիւններուն երբ վրայէ վրայ թափեցան՝ - գոյապաշտութիւնը, ապսիւրոսի թատրոնը, յետպատերազմեան ութօնալ ու սերիլի երաժշտութիւնը, միւզիք Բօնիֆիքը, գերբարոյալտ քանդակագործութիւնը, ֆունկսիոնի ու իօրիսի ճարտարագիտութիւնը, ասլաքի նկարչութիւնը: Պէրիմանի ու իտալական բեմադրիչներու նոր դրպորոցը...: Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի ցնդումներու այս շարանը, առանց որեւէ բան դատաւարու կամ հիմնաւորելու բացի սա տակաւ արմատացող համոզում մէն՝ թէ հիւլէական գիտութեան ու ոտամբի դարուն մէջ՝ ծիծաղելի ու սրտաճրմ-

գոտարեան կնիքով դարձնել համայն աշխարհը...: Պետք է ընդունել որ արուեստը կը ներգործէ զգայարաններու ճամբով և ոչ թէ իմացակամութեան ճամբով: Ա. Ռօպ-Կըրրիյէ - Ֆիլակո Լիթթէր, 23-2-63:

15) Յարգելի Պրո. Լ. Գարսէն, կրնա՞ք եւմախտ շքլլալ մեր գազափարձերուն, յապաղած ճարտասարտութեանը մկատել գառնի, շփաք ու միակողմանի: Այն անք աքաք իրաւունքն է: Բայց ինչ որ անք իրաւունքը չէ՝ այդ ալ խղճը:

լոյ առարկայ դարձնելն է թէ ուրիշ՝ կօ գառնոնք, Փարիզէ՛ն թէ Սամարգանտէն, Բայաթին ու ստացակա՞ն են թէ ոչ, տպաւորել աւ գարմացնի կը ձգտի՞ն թէ ոչ: Իրաւունք չունինք ընթերցողը մեր անձերով գրադիցնելու: Մեր քառին կշիռը ու մեր ոնը՝ արդէն մեր անձին արակը կը փոխադրեն:

լիկ յաւակնութիւն է իմաստ, օրէնք ու ապահովութիւն փնտռելը – ըլլայ Պոստ-մոսթեան մէջ՝ ըլլայ մանաւանդ արուեստին մէջ: Նրբը հրեւք արժէքաւոր հարցում մը չէ եղած: Յանուն արուեստի՝ բայց արուեստի դէմ եղած այս յիզարկութիւնը, այս պետական հարուածներու համաճարակը՝ անշուշտ վերջ մը կ'ունենայ, ինչպէս բոլոր յեղափոխութիւնները, եւ կամ ալ քայքայումը կը շարունակուի, բարոյական ու ընկերային այլ արժէքներու քայքայումին զուգահէտ: Ու շատ ալ կարելոր չէ դիտարկել, ո՞ւր կրնայ յանգիլ այս ամբողջը: Կարելորը՝ մտնական դեպի Հայերու համար, գիտակցելն է հիմակուրնէ թէ հին, անուշ օրերը ալ ետ չեն դարձ Գիտնալն է, առաւելարար, թէ ոստիկաններու եւ զբամասէրերու միացեալ ուժին տակ զանդազօրէն ստրկացող, առարկայացող մարդերութեան համար՝ արուեստի ճամբան դեռ բաց կը մնայ անոնց համար՝ որոնք իրենց ազատութիւնը ապրիլը, յայտնելը ու տիեզերքը իրենց հասկացածին պէս դատելու իրաւունքը աւելի բարձր կը դասեն քան որեւէ համակերպում՝ որքան ալ անխուսափելի կամ հրջանկացեող ըլլայ այդ համակերպումը: Ինչպէք որ այս դաստարումը չենք դասեր: Ոչ լաւ է ոչ ալ վատ: Պարզապէս կը մասնանջենք ու կ'անցնինք:

Ի՞նչ կը մնայ Փրանսական գրական կեանքին մէջ Նոր Վէպէն դուրս: Բայց հակայական ճիւղը հարիւրաւոր վիտաւաններու, սկսեալ Հանրի Թրուտյայի վէպերու հզօր հեղեղէն՝ մինչեւ Մականի փախու, կոկիկ ու հաճելի գիրքերը, մինչեւ Մարք Մաբորթայի Փոմբոզիանն Նիւլիքո Էօն արտակարգ գիրքը ուր վէպին էջերը, խաղի թուղթի նման՝ կարելի է խոստնել՝ ու ամէն անդամուն՝ սաստիկ տարբեր վէպ մը նոյն հատուկէն... Իրականութեան մէջ, անոնք են որ կը կազմեն Փրանսական ազգային գրականութիւնը ու կը զոհացնեն ժողովուրդին գրական տխրութիւնը: Տարեկերջերու գրական մեծ մրցանակները դեռ աւանդական վէպերու կը տրուին ու փան

Քօ, Ռօթէ Պոսթի, Աննա Լանկֆուս, Իվ Պէնթէ, վերջերս մեռած Ռօթէ Նիմիէ Լալլան պարզ անուններ չեն այսօր այլ մարդիկ՝ որոնք վէպը նորոգելու, դարուն նոր տաղանայներուն զայն յարմարեցնելու անկեղծ ճիգին լծուած են, հաշտութեամբ նուազ յեղափոխական ձեւով քան Նոր Վէպի մարդիկը, բայց անկասկած ոչ նուազ տաղանդով ու յամառութեամբ: Այս յօդուածին մէջ չենք կրնար զանոնք մանրամասն ներկայացնել որովհետեւ իրենց փնտառուքը՝ աւելի դանդաղ ըլլալով՝ ցայտուն արդիւնք չէ տուած տակաւին:

Եւրոպական գրական անդամանին ամբողջական վերլուծումը կը պահանջէ որ խօսէինք Թորհրդային, Իտալական, Յունական, Եսպանական եւ այլ երկրներու գրողներու մասին: Թորհրդային գրականութեան մասին պիտի շարտայախտուինք, ծանօթութեան ամբաստարութեան պատճառով: Իտալականը, եթէ նուազ զգայացունց քան Տրանսականը՝ նուազ լահեկան չէ, անկասկած: Այլ առթիւ կը ներկայացնենք այդ երկրի տաղանդաւոր գրողները – Ալպիէթօ Մօրուփիս, Վալթօ Բրաթօլինի, Էլիօ Վիթթօրինի, Իթալիո Քալպիսօ, Քազիմօսօ Եւալին: Յունաստանի Քաղանցաբէն ու Եսպանական իվօ Անարիլը առանձին ուսումնասիրութիւններու նիւթեր են: Այս յօդուածաւարքին մէջ տեղ շտուինք արդի բանաստեղծութեան, քննադատութեան, հրատարակչութեան ու իմաստասիրութեան՝ պարզապէս ուսումնասիրութեան միութիւնը պահելու համար: Այս բոլոր զանցառումներուն համար մեր ընթերցողներուն ներողամտութիւնը կը հայցենք:

Փակելէ առաջ այս հակիրճ ուսումնասիրութիւնը, անհրաժեշտ կը նկատենք որոշ ճշգումներ ընել: Գրական կեանքը ներկայացնելու հիմնական երկու կերպ կայ – գրել՝ նկատի ունենալով մեր ընթերցող հասարակութեան միջինը, այսինքն ներկայագնել գրական իրականութիւնը, զայն ծանօթացնել բոլորովին առարկայական ձեւով: Գամ ալ՝ Կեալի

ունենալ մտաւորական ընտրանին եւ ուրեմն զրական իրականութիւնը արդէն ծանօթ համարելով՝ յուսելիալ շահեկանութիւն մը տալ նիւթին զայն զրգոելով, մեկնարանելով՝ ենթակայական մերձեցումով մը: Մենք փորձեցինք երկուքը միասին ընել, յուսալով զոչնչոնել երկու խաւերն ալ:

Հետեւանքներէն մին Էզաւ Պրն. Լ. Գարոնէնի յօդուածը (Բազին թիւ 9): Աւելի յարմար առիթի ձգելով այդ յօդուածին առաջին մասին մէջ յայտնուած գաղափարներու քննութիւնը, կը փութանք լուսարանել յարդելի յօդուածագրին մասնանշած 7 կէտերը որոնք կապուածին մեր յառաջարանին հետ:

1. Պատերու մէջ գոցուելու, թաղուելու վախ մը զգալի է Արեւմտեան մարդու հողերանութեան մէջ: Հսկայ պատուհանով տուներ, թուրիսթական չըջապատյոներ, որհարանային կեանք ստեղծ փախուստ են մասամբ:

2. Նախամարդն ալ կը փախէր քարանձաւներէն՝ հաւանաբար նոյն նախազգացումէն ժողուած: Աթոմական բռնակցումով սպառնալիքը շատ ալ տարբեր է նախապատմական ճիւղներու տարածած սարսափէն:

3-5. Գրողին համար մարդ էակին ոչ թէ ոչինչ) զրազէտը կը լծէ իր մանրամասնութիւնները այնքան կարեւոր են որքան իր իմացական, զգացական ու ընկերային կողմերը ու բարին, զեղեցիկը՝ նայողին աչքին մէջն են եւ ոչ թէ նայուածքին մէջ: Այնպէս որ զրազէտը մեռած մարդերով կրնայ միայն զբաղել, պնդոնք առարկայի վերածուած տեսնել: Այսինքն մնալ անկողմնակալ թուրիսթ մը, որպէսզի կարենայ հասնիլ մարդ էակին անորակիլի որբերգութեան:

6. Հողին եւ Աստուած Պապան՝ (եւ ոչ թէ ոչինչ) զրազէտը կը լծէ իր մանկութեան պարտէզին մէջ, ուրիշ կոտորած խաղալիքներու հետ: Մենք Հայերս դեռ չենք համակերպած ասոր ու զրականութենէն մինչեւ քաղաքականութիւն՝ Հա-

յու Հողին իր կարծիքը կը յայտնէ:

7. Այս կացութեան առջեւ, զրողը իրականութեան սարքուած պատրանքը չի կրնար տալ (իրականութենէն փախուստը դասալքութեան համազօր է) այլ ստիպուած՝ կը զգայ տալ շուարած, հակասութիւններով վիրաւոր, ողորմելի ու հոյակապ մարդ էակին քրամիւր:

Այս է մեր օրքիւր: Հանգստակ մը, տեսութիւն մը չէ ան այլ արդի հարցերու մտտնալու անձնական ձեւ մը, ժամանակակից զգայութիւնը բռնելու փորձ մը: Անցեալի ուրացում չկայ այլ ներկայի շեշտում միայն: Գրականութիւնը մարդոց նման յարափոփոխ երեւոյթ մը ըլլալով, վերջնական արժեւորումի չենթարկուիր: Հաւանաբար ասկէ տասնեակ մը տարի վերջ սխալ իսկ ըլլայ երկիրներու անունով խօսել ու շատ աւելի ուշ՝ աշխարհամասերու անունով, մէջն առնելով, վստահօրէն, ամբողջական զրականութիւն մըն ալ:

Այնպէս որ զրականութեան ընդմէջէն նոր մարդն է որ շահեկան է: Կը հաւատանք որ նոր մարդու մը տիպարն է որ մեւ կ'առնէ մեր ժամանակներուն: Այդ նոր մարդը զրազէտն է որ պիտի բանասէսէ, ինք ըլլալով անոր նախատիպարը: Մէկը ըսած է որ զայսօրը վաղուրէն է կը սկսի: Լաւ է որ մենք Հայերս շտուանք այս իրողութիւնը: Ու եթէ Հայ մարդը դեռ 19-րդ դարու հոգեբանութեամբ կ'ապրի (որոշ տեսակէտէ շատ լաւ բան է այդ) Հայ գրողը պէտք է արդէն 21-րդը ապրի...: Անշուշտ դեռ չենք հասած այդ գիտակցութեան, սակայն այդ չէ կարեւորը: Կարեւորը այն է որ գիտնանք թէ ինչ տեսակ աշխարհի մէջ կ'ապրինք ու կը ստեղծենք, գիտնանք թէ մարդկային մտքի շարժումին մաս կը կազմենք, եթէ ոչ յառաջապահ՝ գոնէ կեդրոնապահ շիրքերով: Գիտնալ թէ նախ մարդ ենք, Հայ ըլլալէ առաջ:

(Վերջ) Գ. Օ.

Ստորև կը ներկայացնենք երկու կարեւոր դրութիւններ ուր Վէպը շարժումին գլխաւոր երկու ներկայացուցիչները, Միշէլ Պիւթօր ու Ալէն Ռօպօ-Կրիլլէ կը բացատրեն քանի մը հիմնական սկզբունքները որոնք կերպով մը «տեսութիւնը» կը կազմեն շարժումին: Առաջինը քաղուած է «Վէպը իբր փնտռուած» յօդուածէն զոր Միշէլ Պիւթօր հրատարակած է Փայլէ տիւ Սիւտի 1946-ի Ապրիլի թիւին մէջ:

Վ. Օ.

«...Մինչ վաւերական պատմումը կը կրթնի արտաքին փաստին՝ վէպը պէտք է ի վիճակի ըլլայ ինք ստեղծելու մեր մտքին մէջ այն՝ որու մասին մեզի կը խօսի: Ատոր համար է որ վէպին կալուածը բուն ֆիլոսօֆիոսօփի կալուածն է, առանձնաչնորհալ վայրը՝ ուր պիտի կարենանք ուսումնասիրել հղանակը որով իրականութիւնը մեզի կ'երեւայ կամ կ'ընայ երեւալ: Ուստի, վէպը պատմութի աշխատանոցն է:

«...Վիպական տարբեր անւորոն (*) փնտռուածը երեւան կը բերէ մեր կողմէ ընդունուած ձեւին ինքնական նկարագրիչը, զայն կը զիմպերծէ, մեզ կը ձերբազատէ անկէ ու մեզ կ'արտօնէ, այդ սառած պատմութեն անդին գտնել այն ամէն ինչը որ քողարկուած է, որու մասին լուռ է պատմումը. մէկ խօսքով, կը յայտնարերէ այն բուն, հիմնական պատմումը որուն անմիջական ներկայութեան մէջէն կ'ընթանայ մեր կեանքը:

Միւս կողմէ, բացայայտ է որ վէպին ձեւը ընտրութեան հարց մը ըլլալով... նոր ձեւերը իրականութեան մէջէն նոր աւարկաներ ու նոր կապակցութիւններ երեւան պիտի բերեն:

Հակադիր եղանակով մը, տարբեր ի-

րականութիւններու կը համապատասխանեն պատմութի տարբեր ձեւեր: Արդ, կառկածէ դուրս է որ ներկայ աշխարհը մեծ արագութեամբ փոխուելու վրայ է: Պատմութի աւանդական թէքիքները անկարող են իւրացնել եւ արտայայտել նոր ստեղծուող կապակցութիւններ:

Միզ շրջապատող իրականութեան ու վէպին կողմէ պատմուած իրականութեան այս ընդհանուր յարաբերութիւնն է անկապած որ կ'որոշէ ինչ որ սովորաբար կը կոչենք վէպին քլաման կամ նիւթը: Այս թէման կը թուի, ուրմն, ըլլալ տեսակ մը պատասխանը գիտակցութեան որոշ մէկ կացութեան: Բայց այս թէման, ...կարելի չէ անջատել իր ներկայացուցիչը եղանակէն, ձեւէն: Նոր կացութեան մը, վէպի նոր գիտակցութեան մը ու այդ վէպի գիտակցութեան ու իրականութեան հետ յարաբերութեան՝ կը համապատասխանեն նոր նիւթեր, նոր ձեւեր, այսինքն նոր ոճ, լեզու եւ թէքիք, նոր կարոյց: Հակադիր կողմէն գիտուած, նոր ձեւերու փնտռուածը որ երեւան կը հանէ նոր նիւթեր՝ կը յայտնարերէ նոր յարաբերութիւններ:

«...Այս ամբողջին կը հետեւի թէ վիպական ձեւի որեւէ ճշմարիտ կերպարանափոխութիւն ու այդ կալուածին մէջ որեւէ փնտռուած՝ պէտք է տեղի ունենայ վէպի յղացքի սահմաններուն մէջ իսկ...»

ՄԻՇԵԼ ՊԻՒԹՕՐ

Հետեւեալ դրութիւնը քաղուած է «Ապագայի Վէպին Ուղիներէն Մէկը» ուսումնասիրութենէն, գրուած Ալէն Ռօպօ-Կրիլլէի կողմէ ու հրատարակուած նոր Նուվել Ռեվիւ Ֆրանսէզի 1956-ի Յուլիս ամսու թիւին մէջ:

Վ. Օ.

«...Աշխարհը ոչ իմաստալից է ոչ ալ անիմաստ, (ապսիւրա): Աշխարհը պարզապէս է, կայ: Ամէն պարագայի, այդ

(*) Ձեւ բառը կը գործածուի, այս գրութիւններում մէջ, իր գեղագիտական իմաստով, այսինքն՝ իբր հակադրութիւն խորք ու բովանդակութեան յղացման (քարքա):

է իր ամէնէն ուշադրաւ յատկանիւր: Յանկարծ, այս փաստը մեզ կը հարուածէ այնպիսի անդիմադրելի ուժով որ մէկ անգամէն կը փլի իրականութեան ամբողջ հրաշալի կառոյցը զոր շինած էինք: Երբ աչքերնիս յանպատրաստից բանանք, կը զգանք այդ հարուածը, հարուածը յամառ իրականութեան մը զոր նուաճած ըլլալ կը կարծէինք: Հակառակ մեզ շրջապատող ընտելացած անձականներու վոհմակի սպառնալիքին, առարկաները պարզապէս հոն են: Յստակ ու ռահուճ է անոնց մակերեսը, անխաթար մանուկներ, առանց որեւէ կասկածելի որակի ու անթափանց: Մեր ամբողջ զարծնները ոչ իսկ ամենաչնչին անկիւնը յարողած են մեւափոխել կամ յետին կոթորակներն իսկ թուլցնել...:

Հոգեբանական, ընկերային ու գործօնային «նշանակութիւններով» լիցուն այս տիեզերքին փոխարէն, պէտք է փորձենք ուրեմն աւելի տոկուն, աւելի անմիջական աշխարհ մը կառուցանել: Պէտք է որ առարկաներն ու շարժմանները (մէտք) նախ իրենց մերկայութեամբ պարտադրեն իրենք զիրենք եւ պէտք է որ այդ ներկայութիւնը շարունակէ տեւել, մնալ գերազանց քան որեւէ բացատրողական տեսութիւն որ պիտի փորձէր զանոնք պարփակել իմացական, զգացական, բնագիտական, մտայնական ու այլ գորութեան մը մէջ:

Ապագայի այս վիպական տիեզերքին մէջ, շարժումներն ու առարկաները «հոն» պիտի ըլլան, «բան մը» ըլլալէ առաջ, ու պիտի շարունակեն հոն ըլլալ վերջն ալ, կարծր, անփոփոխելի ու մընայուն կերպով ներկայ, հեզնելով իրենց իմաստն իսկ, հեզնելով այն նշանակութիւնը որ կը ձգտի զիրենք խաբխուլ գործիքներու վերածել, այդպէս բռնը-

ւած անձեւ անցեալի մը անորոշուած ապագայի մը միջեւ:

Այսպէս, առարկաները տակաւ պիտի կորսնցնեն իրենց փոփոխականութիւնը, իրենց գաղտնիքները, պիտի հրաժարին իրենց կեղծ խորհրդականութենէն, այդ կասկածելի ներքին հոթնէն զոր Ռոլան Գարթ զիրերու ուսմանիքը սիրտը յորջորջած է: Ու պիտի դադրին այլեւս այդ իրերը, հերոսի տարտամ հոգիին տարտամ ցոլացումը ըլլալէ, անոր տանջանքներուն պատկերացումը ու անոր ցանկութիւններուն յենարանը ըլլալէ:

...Գալով վիպական հերոսներուն, անոնք բազմաթիւ մեկնաբանութիւններ պիտի կարենան պարունակել, իւրաքանչիւրը պիտի կարենայ, ըստ իր շահագրգռութեան, ամէն տեսակ հոգեբանական, հոգեբուժական, կրօնական ու քաղաքական բացատրութիւններու (ֆոմմալիթի) սուտ տալ: Անշուշտ անմիջապէս յայտնի պիտի ըլլայ թէ անոնք որքան անտարբեր են այդ ենթադրեալ բացատրութիւններու նկատմամբ: Այնպէս որ, մինչ աւանդական հերոսը տեսարար հայցուած, բռնազրուուած ու քայքայուած է այդ բացատրութիւններու ու մեկնաբանութիւններու կողմէ, զորս հեղինակը ինքն է որ կը յառաջադրէ, զայն շարժելով ամէն վայրկեան աննիւթական ու անկայուն այլուրի մը մէջ որ միշտ զայն կը հեռացնէ ու կը դարձնէ աւելի անյուտակ, ապագայ հերոսը, ընդհակառակը, պիտի մնայ իր տեղը, հոն...: Մտադու «բնութիւն» գաղափարը այլեւս տեղի տուած է մտադու «վիճակ»ի (ֆոմմալիթի) գաղափարին ու առարկաներու մակերեսը ա՛լ դադրած է մեզի համար անոնց որտե՛ն դիմակը ըլլալէ:

ԱԼԷՆ ՌՕՓ-ԿՐԻՅՅԷ

ԴԷՄՔԵՐ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

Մեր գրականութեան խելերէն խենթերէն: Նոր ժամանակներու առաջին մեծ խենթը՝ այս խելջիւղի ու խոր տըղան, խելջիւղի ու խաղաղ թուող ժողովուրդի մը մէջ, որուն հոգին անխաղաղ դար եղաւ, տառապանք ու վէրք:

Կարգ մը բաներու համար տեսա՛կ մը «այո» ըսողներէն, տեսա՛կ մը «ոչ» պոսացողներէն եղաւ հին ու յորդ դերդաստանի մը այս շառաւիղը: Եղաւ կեանքին մէջ մեծ բաներուն մեծ ճայնով պատասխանողներէն՝ բոլոր բացառիկներուն պէս: Սրտի հսկայական շէշտ զործածողներէն՝ հոգիի այն բոլոր աւատապետներուն նման, որոնց զգացական կալուածները սահման չունին որեւէ:

Մարդ մը՝ Չանդուի դժգոհ, այլ պայծառ ջուրերուն օրինակով ապրող այս շէտ դիտեր որքա՛ն տարօրինակ տըղան: Տարօրինակներուն թերեւս ամէնէ՛ն տարօրինակը: Տարօրինա՛կ մեծ մը, տարօրինակ շէտ մը: Կարծես նոր Մուսերու նոր լեզենդ՝ օրինակովը Սասնայ դեղեցկազոյն Մուսերուն, անոնց աշխարհէն այնքան հեռու այտուհանդերձ: Մուս՝ գիրի եւ խոհի նուիրեալ Քանաքեռ դիւզի սա երիտասարդը, իր Ոգրի հերոս Աղասին պէս, որուն հոգին ինչպէս եւ կեանքը զէջ շմանեցան Մորայ Մելիքին դէմ թուր բարձրացուցած Դաւիթի հոգիին ու կեանքին:

Իր դարուն հոյակապ մէկ գարտուղին՝ առակով, վէպով, խրատով ու «Պարապ վախաի խաղալիքներով աղգ կըրթող այս զաստիարակ պարզէտը, Հայոց



բոլորովին զարատւղի, բոլորովին ուրիշ աղգին մէջ:

Մեր դպրութեան զմայլելի գրիչներէն մէկը միշտ, այս անգամ փոխանակ Աստուծոյ, մարդ արարածներուն հետ սրտարժատ խօսք ու եռանդ առատաբերող ու առատօրէն վատնող գեղղկարարաւ նարեկացի մը գրեթէ, որ ցաւ է ու ցաւը բացատրող զարմանալի ասոյթ:

Տանըրիններորդ դարու իրականութենէն բխած առասպել մը հեղձեւտէլինք, իր դիրքը, իր տեսիլքի պէս բաները, իր մահը: Անցեալին ստորերկրեայ ուղիներէն, արեան խորհրդաւոր ու հեռու աւազաններէ եկած Արարատեան դաշտի հայ մը՝ խաներու եւ խուարի թշնամի: Մէկը՝ որ անցեալ կը ցանկներկային մէջ, ապագայի մը հետ խառն: Այսինքն քաջութիւն: Ու խելք ու խոյանք: Կ'ապրի հինին ու զալիքին երկու հօր լուսարձակներուն տակ: Դրած է հոգին անոնց շողարձակումին ներքեւ: Ու

նաեւ՝ իր ժամանակի Հայութեան :
 Այո, շեղ, ծուռ, կարծես լեզենդ :
 Ժողովուրդի մը պատմութիւնն ու
 անհուն ծարաւը շարկած անձ մը կը թուի
 էջմիածնայ այս սարկաւազը՝ իր օրերու
 բոլորովին հին, բոլորովին ծեր կարգու-
 սարքին հակառակ ուղղութիւնը ընտ-
 րած : Յեղափոխութիւն թխտող պաշտելի
 ներհակ մը՝ բոլոր յեղափոխութիւնները
 բոլորովին մոռցած, իմացական բոլոր
 լոյսերէն կարծես բոլորովին հրաժա-
 րած Հայերու երկրին մէջ : Ի տես երկրի
 աւերակի, մտքի աւերակի եւ այլեւայլ
 այնքան աւերակներու՝ ընդդիմադիր մը
 այլեւս : Եւ որքան ընդդիմադիր...



Հերոս մը, խեղճ մը իսկապէս,
 է՛նչ մը՝ Քանաքեռի բարի Արովին սա
 թողը :

Հայոց ազատագրական զարթոնքին
 վեհօրէն գունատ, վեհօրէն գեղեցիկ,
 վեհօրէն բազմատանջ ժամուրն է Քանա-
 քեռցիներուն մեծ տեղեր այցելած, մեծ
 բաներ սորված այս ուշիմ տղան, ճակա-
 տազբին կողմէ բացարձակ վէրջ մը կրե-
 լու զրկուած, ապազայ դարձազին իրո-
 վութիւններ զանգաւարելու գործին փու-
 թացուած :

Հերոսակերտ մը, խենթակերտ մը,
 սրբատեղծ մը : Բնազդ ու բնազդազէ՛տ
 բան մը՝ Արարատ բարձրացած սա Խա-
 յատուրը, որ կործեն Իորպատի համա-
 լաբանը քաւարտելէ առաջ, ժողովուրդի
 մը բոլոր յայտ ու ծածուկ վերհերուն եւ
 մեծնայու նոյնքան յայտ ու ծածուկ ծա-
 բաններուն դասընթացըը աւարտած ու
 վերսկսած է շարունակ, արեւան ու
 նեարդներու անդու սերտութեան մը
 մէջ :

Կարդալէ ետք Արովեանի «Վէրջ...»ը,
 մարդ կը գիտարանայ հաւատալ, թէ
 պատանութենէն ասդին կրնայ քնացած
 ըլլալ որեւէ պիւր ու թիրեւս որեւէ
 ժամ, հայոց լեզուին, վշտին ու քաջա-

գործութեան այս անդուպ գուսանը, այս
 կարծես խելատ այլ գեղեցիկ պատմիչը :

Յեղափոխական շքեղ խոյանքներու
 տեսիլքը սրբակերտող հեղինակ մը իս-
 կապէս, զիւրի մը պարզուկ բարբաւը
 դրական լեզուի մը հիմնաքարերէն մին
 դարձնող անձ մը՝ Աղասինն սրտակեղէք
 աշուղը : Տանթէի մը խմորը եւ Տանթի
 մը բախտը կ'ունենայ արեւելահայ լեզ-
 ուին կապակցութեամբ, ուսում ու հե-
 բոսութիւն քարոզող մեր աշխարհաբար
 գրականութեան այս հսկայ մէկ արարու-
 ղապետը : Իր երկրին արեւնափառ անց-
 նալին մէջ նետած ինքզինք, անոր ներ-
 կային «մուտ» ու «մուշ» հորիզոններուն
 ստջեւ կեցած հայ գրականութեան կար-
 միր ջահակիրը, ասկէ դար մը ու աւելի
 առաջ ժամանակի մը մէջ, պիտի պտտի
 շարունակ, պիտի երգէ միշտ, պիտի
 սորվի՛ անընդհատ : Այս բոլորին հետ,
 պիտի արինի անվերջ եւ հուսկ ապա
 կիզիչ առեղծուած մը հիւսած : Իր վախ-
 ճանին շուրջ՝ պիտի փոխանցէ ու բաշխէ
 ինքզինք, տեղ մը Բաֆֆի անունով մար-
 դալե՛ս մէկու մը, տեղ մը փոթորիկ
 նայպանտեանի մը, տեղ մը Քամառ Քա-
 թիպա կոչուող համբոյրի եւ ապտակի
 պէս բանի մը : Աւելի ուշ՝ չէ՞ մասամբ
 Ահարոնեան մը : Չէ՞ Սիամանթօ մը, չէ՞
 Վարուժան մը : Չէ՞ խելայեղ թափով
 Չարենց մը :

Արովեանի եւ իրեն յաջորդող մեծե-
 բու պիտի մայնէն ետք, նոր գրականու-
 թիւն մը ճամբայ կ'ելլէ եւ անոր հետ՝
 պատմութիւնը Հայոց :



Ի՞նչ սեփական կեանքն ու սեփական
 տունը շուտով ու լիովին մոռցաւ կար-
 ծես : Այլ չկրցաւ երբեք մտահան ընել
 հանուր Հայութեան կեանքն ու տունը :
 Հայաստան աշխարհին նուիրական մտա-
 լընկումով ապրեցաւ Խաչատուր Աբովե-
 ան, ինչպէս աշխարհի սովորական մար-
 դիկ, ըմբռնելու համար, կ'ապրին հազով

ու շուրջով: Օգո՛վ: Այդ մտալիկումը էր թռեկուն թթուածին հայթայթող կեանարար ողին պէս եղաւ: Զկրցաւ բաժնուիլ անկէ՛ որչ Արարատի փէշերուն տակ, ոչ ալ հեռու հեւտի պողին մէջ: Զկրցաւ մաս մը, բուպէ՛ մը հեռու մնալ անկէ: Զկրցաւ՝ եւ օր մըն ալ վիհազրեց տարիներու այդ խոր մտալիկումը, անթիի մը հաց թխելուն պէս: Սովահարի մը արտակարգ փոյթով: Բարձրագո՛յն ախորժակով մը:

Ոտքէն մինչեւ կոկորդը, մինչեւ կրակ ժայթքող իր բերանը՝ արեւելք է ու Քանաքեռցին: Բնապդ, կիրք, երեւակայութիւն: Արեւելքին թանձր գոյներով խօսքն է, Ղլալին նախադատութիւնը, նետի պէս սլացող զգացումը:

Արեւադառը, Արովեանի մէջ, ուղեզի հէր մըն է աւելի քան տնեցի. ետքէն տեղաւորուած քանի մը շերտ լոյս է միայն, համալսարանական դասընթացք, դաստիարակութիւն, ազգային հարցի աւելի խորք ու լուսաբանութիւն ստացած խնդիր: Այս ուղղութեամբ, աստիճան մը աւելի ճանաչողութիւն եւ կարգ կանոն: Ներքը, հոգեկան կեդեին տակ թաւալող հեղուկներն ու հոսանուտները, ուրիշ միջօրէականէ, ուրիշ կլիմայէ, բոլորովին ուրիշ մշտութիւններէ կ'անեն կեանքի իրենց ջերմութիւնը, մարդկային մարմինն ու հոգի դարձնելու համար իրենց կաւը:

Միջին-արեւելքի միացած է միշտ, փրօֆէսէօր Պարբոտին ու անոր արիական Արեւմուտքին հանդիպած այս արիական Հայը, որոն մէջ Կովկաս կայ, Կասպիական ծովեզրք, Պարսից ծոց ու ու հեղկահան սահման, այս բոլորին խոր անցեալով, սեմական ցեղերու հետ շրփումով ու փոխազդեցութեամբ, բայց որուն հոգիին կեդրոնական կէտը Արմէններու երկիրն է շարունակ: Միջին-ասիացի մարդու իր հոգիի ու նկարագրի միջինը Հայ եւ Հայաստան անունը կը կրէ, տառապանքի սաստկազոյն առումի մը մէջ:



Արարատեան դաշտին մէջ նորութիւն սերմանող այս դերարարք առաջեալը խոսիքէ աւելի բան մը կը թուի ինծի: Կրակ մը՝ որ կը խօսի, չորհէ՛ մը՝ որ հայերէն սորված, կը պոռայ այդ հայերէնը, շնո զիտեր որքան դարերու օսուող հայեցնել ուղեղով ժողովուրդի սրտին մէջ: Իրենց հայութիւնն ու հայերէնը մոռցածներու բուք ու բորան ձրմեռուան մէջ ինկած կիզիչ ամառ մը ըլլար կարծե՛ս՝ այս համալսարանական դերացին, որ ըսելով, վիպելով, պայլար բանալով, հայածանքի տոկալով, տառապելով ու խորհրդաւոր անհետացումի մը զիմելով նոյնիսկ, պիտի հալեցնէ Հայութիւնն ու Հայաստան կոչուած ստրկութեան եւ տգիտութեան ասուար սառցակոյտը:

Եթէ դարեր առաջ Եդիշէն դրաբարի խարոյկ մըն էր մեր պատմութեան աւդին եւ իմաստը լուսաւորող, Փրօֆ. Պարբոտի ճանապարհորդութեան թարգմանը գեղջուկ հայերէնին խառնվել է դարեր հոգ, նոյն ոտիւնի գիմաց ճարձատող, նորէն ուղի եւ իմաստ լուսաւորողի դերով մը: Քանի՛ թարգմանելով ու քանի՛ մեծագործներու մէջ միաց մեր տառապանքը, բազմազգի ու բազմաշաժան բնակալիներու դէմ: Հայ մեծ պատմիչներն ու քերթողները լեզու ունենալու փոխարէն իրենց բերին մէջ, ունեցան կրակ, վիշտի եւ ըմբոստութեան հուր:

Կան մարդիկ այս աշխարհի վրայ, թիւով ի հարկէ շատ քիչ, որոնք կոտորակի մը պէս են միայն: Իրենց մէջ աշխատող աւելի մեծ բանի մը, շքեղ ու ճակատագրական ամբողջութեան մը հետ բազդատած: Զարհուրելիօրէն իրաւ ներկայութիւն մըն է ասիկա, որ կը ստիպէ անձին մնացեալ մասերուն բացակայիլ, այսօր, վաղը եւ մերթ ցմահ: Այդ խորունկ բանին զարհուրելի ներկայութեան, որ մէկու մը մէջ մեղքի դժոխք ու մաքրափայլ բացարձակութեան տեւական մղձաւանջ է, ուրիշի մը մէջ ճա-

ուսգայթող իմացականութեան լուսակոյտ, երբորդի մը քով հայրենական կամ մարդկային վէրքի անվերջ կոտորանք, չորրորդի մը առիթով նոր հորիզոններու անվերջ նուաճում կամ զօրեզօրէն ճնշող բոլորովին այլ բան՝ ի՞նչ են կեանքին միւս կոտորակները բացառիկ հոգիներուն, եթէ ոչ բացակայութեան հետ շփոթուող նուազագոյն ներկայութիւն մը հազիւ: Մեծ կանչերով մեծ բաներու կոչումները դժոխքի՝ մը պիտի յաղթեն: Պիտի այրի՞ն, կասկած մի՞ ունենաք, դի՞ր է յաւիտենական:

Իրենց սովորական ու սովական անձերէն աւելի մեծ ու վերջնական բան մը ունեցող տարբերներէն էր, քայլերուն առջև ու կուրծքին տակ քանի մը դըժոխք ունեցողներէն՝ «Վէրք Հայաստանի» երիտասարդ հեղինակը: Մէկ խեղճ կոտորակը չէ՞ր ինքն իր սրտին իրմէ վատ ուրիշ քանի՞ թաշտուրի շէր բաւեր այդ սիրտը: Հայ ողջ ընդհանրութեան հուսալից մէկ սիրտը չէ՞ր կարծես, եկած ամփոփուած պահ մը վտիտ անձի մը վտիտ կուրծքին տակ ապրելու, բարսիւնու, իր անպիտան անվերջ ալքոփով ծարաւի եւ ստեղծագործութեան մէջ պահելու համար պիտի կրող ի վերուստ նախասահմանեալը:

Արովեան կոտորակն է պարզապէս իր սրտին: Իսկ այս Արովեանէ մը աւելին բովանդակող Արովեանի սիրտը, իր կարգին, մէկ խեղճ կոտորակն է ինքն իր վէրքին, որ ինքզինք արդարօրէն կը կոչէ Վերջ Հայաստանի: Հասկնալի է անշուշտ որ նման վէրքեր, արուեստագէտներու սրտին ու հոգիներուն խորը տեղաւորուած, արտաքին ընդհանրական վէրքի մը անգրադարձ վէրքը կ'ըլլան, աւելի՛ աճած, աւելի՛ ներզօր, քանի որ անհամար սրտերու փոխարէն, մէկ սրտի մէջ են խտացած:

Եւ հիմա, հարկ է պատկերացնել ամբողջովին ջիղ ու ամբողջովին խոռվիք քառասուն տարեկանի շուրջ գունատ գըրադէս մը, իրմէ մեծ սրտի մը եւ անկէ

աւելի մեծ ու վիթխարի վէրքի մը կըրկնակ դժոխքի կշիռին ներքեւ: Այս մարդն է ահա, որ պիտի շուրջ, պիտի խօսի, պիտի պոռայ, պիտի պատահանի: Կրակէ հարցեր թափած են Հայութեան կեանքն ու պատմական հողը անոր հոգիին մէջ, արիւնին մէջ, բնազդին անզունդ աշխարհին մէջ: Կրնա՞յ միթէ, չրթները հրկիզելու դնով իսկ, չպատասխանել կրակէ հարցումին՝ կրակէ պատասխաններով: Ու չկա՞յ միթէ, ո՞վ չէ առած Արովեանի նախադասութենէն այրող միտի ծանր հոտ, հոգեկան ճնշման թանձր բոյր մը, այնքան եղերական, այնքան իրա՛ւ:

Մեծերուն առեղծուածային օրէնքներէն է, ըսինք վերը, ըլլալ պզտիկ, ըլլալ յաճախ շնչին, քան մէջը կոտորակ նկատուած մէկ բանը: Այդպէս էր ճիշդ, 19-րդ դարուն վեհափառական էջմիածնայ պարիսպներուն ետին ինքզինք դիւրութեամբ կրցող բովանդակող բայց իր մէկ կոտորակը (սիրտ, դժգոհութիւն, ձգտումներ, վէրք) երբեք չկրցող՝ Քանաքեոցի տարբեր տղան: Այսպէս, Ամենայն Հայոց վեհափառներու էջմիածինը կաթողիկոսներու համար ընդարձակ տեղ մը կրցաւ ըլլալ, բայց նեղ տեղ մը, սոսկալիտօրէն նեղ տեղ մը մնաց սարկաւազի մը համար: Անոր համար լայն տեղ՝ Եզնիկներն ու Եղիշէները պարփակող գրաբարն ալ չկրցաւ ըլլալ, այս անգամ գրականութեան էջմիածինը:

Իր պատկանած հաւաքակառուցութեան առաւելութիւնն ու թերութիւնները հաւասար ուժգնութեամբ և հաւասար ալքորութիւնով կեանքին մէջ պոռայու եկած այս տեսակ մը ձայնը Արովեան թաշտո՞ւր պէտք է կոչել հիմա, թէ Վերջ Հայաստանի:

Վէ՞րք մըն էր 1805-ին Քանաքեոհի մէջ Արովեանց յարկին տակ ծնածը, թէ մարդ մը: Մարդը 1848-ին անհետացաւ: Վէ՞րքը...

Միտո՞ց:

ԵՒ. ԳՅԱՆԱՅԱՆ

ԹԱՅՐՈՆ

ՕՍԳԱՐ

Համազգայինի «Փաստար Իփէկեան» թատերախումբը, Պէյրուսի Հայ Հասարակութեան կը ներկայանար 1963 Ապրիլի 25, 26, 27, 28-ին (ապա նաեւ երկրորդ շարժուայ մը ընթացքին, Մայիս 2-5) Գալուստ Կիւլպէնկեան թատերասրահին մէջ, Փրանս. դրականութենէն թարգմանուած (Թարգմանութիւն Ժ. Սարգիսեանի) երեք արարով կատակերգութեամբ մը, Քլոս Մանիէի Օսգարով:

Վտանգաւոր փորձ մըն էր որ կը կատարէին թատերախումբն ու ղեկավարը՝ Պր. Ժորժ Սարգիսեան, բեմ բարձրանալով շատ թեթեւ ու մակերեսային կատակերգութեամբ մը, աւելի յարմար՝ դիւրին ծիծաղ առաջացնելով տպաւորութիւն ձգել ուղղող դերակատարներու ու խումբերու, քան Փաստար Իփէկեան թատերախումբի անցեալը, համաւը, ժողովրդականութիւնն ու կոչումը ունեցող խումբի մը: Վտանգաւոր նաեւ անով, որ խումբին դիւաւոր ուժը, ինքը խմբավարը, Պ. Ժ. Սարգիսեան, այս անգամ եւս դէր չունէր ներկայացման մէջ:

Իսկոյն պէտք է ըսել, թէ այդ երկու խոչընդոտներն ալ յաղթահարեցին խումբն ու խմբավարը:

Փարիզի պուլվարներուն վրայ մինչեւ այսօր, հազար անգամ նոյն խկ ներկայացուելը, ինչպէս կը մատնանչէր Օսգարի ներկայացման յայտադիրը, չէ չէլացնէր մեզ. Ժողովրդականութիւնը թատերակի մը միշտ կամ անպայման փաստ չէ արժէքի. ինչուքը գրեթէ ամէնքը կը սիրեն, հաճելի է երեք ժամ զուարճանալ, ու Ժողովուրդը կրնայ նման կատակերգութիւններ ներկայացնող սրբահաններ լինել հազար անգամ, թատերակները ատով չեն դառնար արուեստի

զորձ, կամ իրաւ թատրոնի արժանի, բեմական արուեստի մտահոգութիւնը ունեցող խումբերու խաղացանկին արժանի գործ: Ընդգծելէ ետք այս իրողութիւնը, աւելցնենք սակայն, որ երբ կ'որոշուի նման թատերակ մը խաղալ, պէտք է դա՛յն խաղալ ա՛հա այսպէ՛ս, Համազգայինի թատերասէրներուն պէս:

Սումբը լիցուց բեմը, տիրապետեց անոր իր աշխուժութեամբ, արագութեամբ, տեղին ու բնական կապակցումներով, անցումներով, գրեթէ անսթեւելի շարժումներով, եւ մանաւանդ այնքան յաջող մարմնաւորումով դերերուն:

Գլխաւոր ծանրութիւնը, ճնշող ու դժուարին պարտականութիւնը անկասկած, կը ծանրանար Վարդէյս Վարդապետեանի ուսերուն, օճառի գործարաններու տէր Պէրնար Պարիսէի գերով. իր շուրջը պիտի դառնային միւսներն ու ղէպքերը, իրձէ կախում ունէին միւսներն ու ղէպքերը, եւ նաեւ անկասկած, անստմալիմ ձեռք բերելիք արդիւնքը: Պր. Վ. Վարդապետեան եղաւ պէտք եղած լարումին մէջ, պէտք եղած արտասայտութեամբը տիպարին: Տեւաբար եղաւ ան իր ուժերէն վեր ղէպքերու իրարու յաջորդող հարուածներուն տակ շըմած, դրամի կորուստէն ու փախուստէն շիմորած, կնկան, աղջկան, պաշտօնեային, հին ու նոր սպասուհիներուն միջեւ ձեռքէ ձեռք անցնող, դնդակի նման հոս ու հոն նետուող Պարիսէն. խորքին մէջ մանուկ մը մնացած, անզօր Պարիսէն, նոյն ատեն լարուած, ջղային մեքենայի վերածուած Պարիսէն: Առանցքն էր իր խաղը թատերակին, եւ ընթացաւ ան առանց տկարացումի: Քիչ մը աւելի պարիւնութիւն բեմին վրայ, աւելի դանդաղ ու զուսպ խաղարկութիւն մը կըրկնայի պիտի արժէքաւորեն Պր. Վ. Վարդապետեանի եւ բեմական ընդունակութիւնները, եւ թափած սպառելի աշխատանքը:

Ժիւլիէթ, Պարիսէի կինը, միշտ բացակայ, միշտ ներկայ, միշտ կարգադրութեանց վրայ, միշտ անտեղեակ սա-

կայն չորս կողմը անցած դարձածին, միշտ ալ աղղուելու, վիրաւորուելու պատրաստ, Տիկ. Ջ. Եանթի փորձառու խաղարկութեան, շեշտերու ու շարժումներու ճշգրտութեան, տպաւորիչ նրբերանգներու արտայայտութեան շնորհիւ, կը կրօնցնէր իր երկրորդականութիւնը եւ կը դառնար մէկ արժէքաւոր մասը թատերակին:

Աննա՞ն Հապա (Օր. Մարո Սարգիսեան), չփացած, միամիտ, կէս մը բութ աղջիկը Պարինէի... - Օր. Սարգիսեան, առաջին անգամ բեմ բարձրացողի մը համար (նկատի չենք առնել Կարապի Երզնի մէջ իր ասուպային երեւումը անչուշ) յաղթանակ մը կ'արձանագրէր իր այնքան բնական, ապրող խաղարկութեամբ. կը դառնար զերասանուհին ու սիպարը, որուն մուտքին կը սպասուէր, որուն խաղարկութիւնը կը փնտռուէր հասարակութեան կողմէ: Պիտի կարեւոր աղէտք այլ ձեւի, այլ տիպի դերերու մէջ եւս նոյն ընդունակութիւններն ու կարողութիւնները երեւան բերել, արժէքաւորել. ապագան պիտի ըսէ ասիկա. ներկան սակայն՝ միայն գնահատանքի արժանի է:

Նոյնպէս զնահատանքի արժանի էր Պր. Դաւիթ Պոյաճեան, մարձողի դերին մէջ (ի դէպ, երբ անգամ մը մարձող բառը զործածուած էր, անտեղի կը զըտնենք այլ տեղ, ու բազմիցս «չիտող» բառին գործածութիւնը. դիւրին է՞՞՞նէրէ պէտք է խուսափիլ միշտ, ասոր համար ալ պէտք չէ նաեւ զործածուելին «Ոսպախուլախ» կամ «Տիւղ տապան» արտայայտութիւնները. հարկ չկայ նման արտայայտութեանց, որոնք խորթ ալ կը հնչեն) իր յայտնարեւած պայաքին ու վիտակից, ըմբռնուած խաղարկութեան համար: Կէս մը սպուշ, կէս մը միամիտ ու բարի մարզիկի դերին իր մարմնաւորումը դիւաւոր համեմներէն մին եղաւ ներկայացումին:

Առաջին անգամ է որ բեմ կը բարձրանար նաեւ Օր. Արփի Ռաչատուրեան (Փազլին), որ առանց ճիշդ կրցաւ տա-

նիլ իր դերը՝ միակ լուրջ եւ առանց խարդախութեանց, կամ առանց չափազանցութեանց տիպարին:

Պր. Իւզմիկ Լիպարիտեան, Պարինէի պաշտօնեայ Միշէլի դժուարին դերը ունէր. դժուար՝ քանի որ թէ՛ խարդախող պէտք է ըլլար, թէ՛ մաքուր սրով տարուած մը: Խաղարկութեան քննկանութեան տեսանկիւնէն անկասկած որ յառաջդիմութիւն մը արձանագրած էր Պր. Լիպարիտեան. իր յաւելեալ ճիշդ պէտք է ըլլայ տեսական, շարունակական՝ մասնաւորաբար առողջանութեան, եւ բառերու, կամ նախադասութիւններու իմաստաւորում: շեշտաւորումին մէջ:

Տիկ. Նէլլի Մինասեան, սպասուհի կարճ, եւ ցարգ իր խաղցած դերերէն այնքան տարբեր դերով, վարժ ու կարող զերասանուհի մը խաղարկութեան ուժովը, բնականութիւն բերաւ այդ անբնական դրութեան (սպասուհի մը որ ետ կը վերադառնայ անոնց սուշը, ուր աշխատած է 20 տարի առաջ, ուր տան երիտասարդը, այն ժամանակ երիտասարդ, այժմ հասուն տարիքի տէր Պարինէն, իր սիրահարը եղած է, որմէ աղջիկ մըն ալ ունեցած է, որուն մասին լուր տուած չէ... եւ այլն, եւ այլն):

Սպասուհի (Սօֆի) դերին մէջ, Օր. Պոյաճեան առաջին մասին մէջ իր դերին կը բերէր արտայայտութեանց յաղող Էֆէններ. նուազ յաղող էր սակայն հոն ուր աւելի կարելիութիւններ կային իր արտաճառութեան տակ, երբ զէպօներու անբնական բերումով կոստի մը կէնը կը դառնար:

Պարինէի նախկին վարորդի, այժմ իր աղջկան Աննայի նշանածի, Օսպարի դերով, Պր. Փիրայր Ռաչեան, եւ կոմսի վարորդի դերով Պր. Վ. Դարբինեան կ'ամբողջացնէին խումբը:

Երեք արարուածներն ալ տեղի կ'ունենան նոյն տէքորներուն մէջ, շատ լուպատրաստուած, իրապաշտ, պատշաճ ու հարուստ տէքորները Պարինէի հիւրասրահին:

Նի՞ւթը թատերակին... կրնան հարցրել հետևոր ընթերցողներ, որոնք կարելիութիւնը լուսնէին ներկայ ըլլալու կատակերգութեան ներկայացման: Ի՞նչ նիւթ, ի՞նչ նիւթի մասին կրնայ հարց ըլլալ նման թեթեւ կատակերգութեան մը մասին խօսած ժամանակ, ուր տեղտեղ միայն երեւան կուզան նկարագրի ծաղր եզոզ քանի մը սրամիտ տողեր, իսկ անկէ դուրս՝ անրնական պատահմունքներու շարք մը «կրկնութիւններ», «քրիփօքօներ», կարծեցեալ անտեղեակութեան հետեւանքով, իբրև թէ լուսն ըլլալու պատճառով երկիմաստ արտասայտութիւններ... Առաջին արարուածը կը բերէր յոյսը (աւազ, միայն յոյսը...) իմաստի կատակերգութեան մը, երկրորդ և երրորդ արարուածները սակայն, իրենց անրնական կառուցով, պայուսակներու անվերջանալի ու անկարելի երթեկներով, անոնց տեսարար իրար խառնուիչներով, կարգ մը պայուսակներէ շարունակ դուրս թափող կանանց սուրբիցներով հետզհետէ կը դատարկուէին իմաստէ, վերածուելու համար

շինուութեամբ ամբողջացած կատակերգութեան մը, որուն ներկայացման ընթացքին կը խնդանք անշուշտ, անխուսափելի է ատիկա, սակայն խնդուքին քանակը չի կրնար փոստ դառնալ արժէքի, կամ մեր բեմերու վրայ ներկայացուելու իրաւունքի:

Այս առաջին է: Սակայն երբ հակառակ այս բոլորին, ձեռք դարձուի նման կատակերգութեան մը բեմադրութեան, անհրաժեշտ է երեւան բերել Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբի աշխոյժը, ճարտարութիւնը, խաղարկութեան, տիպարներու մարմնաւորումի կարողութիւնը՝ տանելի ու հասկնալի ըլլալու համար. որով անկախ թատերակի նիւթին անարժէք ըլլալէն, շնորհաւորութեան արժանի է խումբը, ու մանաւանդ խմբավարը՝ Պր. Ժ. Սարգսեան, որուն աշխատանքին ու խտտապահանջութեան արդիւնքն են անկասկած, ըլլայ հին ուժերուն, բայց մանաւանդ նորերուն բերած խաղը, ճկունութիւնը, ըմբռնումը զերերուն:

Ք Ն Ա Յ Ր Ձ Ի Կ Ը

1963 Ապրիլ 20-ին, Հայկ Ակումբը Գաղինո տեւ Լիպանի շքեղ թատերասրահին մէջ կը ներկայացնէր կատակերգութիւն մը՝ «Քնարը շիկը», դեկամբրութեամբ ու խաղարկութեամբ փորձառու դերասան Ե. Չափրաստի, և Հայկ Ակումբի անդամ սերողներու, որոնց մեծ մասը առաջին անգամն էր որ բեմ կը բարձրանային:

Ինչու՞ք առաջացնելու յաւակնութիւնը ունեցող տեսարաններով կառուցուած այս հնարոյր թատերակը հաւանաբար պէտք էր թողուլ որ մնայ փոշիներուն տակ:

Իսկ երբ որոշուած է անպայման նրման թեթեւ, ու ներկայիս ամբողջովին իր իմաստը կորսնցուցած, անկարելի

յաջողականութեամբ, անրնական պատահմունքներով կառուցուած թատերակ մը ներկայացնել, այդ պարագային առնուազն խաղարկութիւնը, բեմադրութիւնը պէտք է ծածկեն թատերակին բռնականութեան պակասները:

Աւագրու էր, ու գնահատանքի արժանի Տիկ. Ժ. Առլանեանի մարմնաւորումը, հովեր ունեցող, դուռը ու բանակալ Տիկ. Մանկատէնի: Մատներու մըրճահարումը, զլիւռ ու վզի բռնուածքը, խաղը, ըմբռնումը տիպարին, արժէքաւոր ուժ մը կը դարձնեն Տիկ. Առլանեանը հայ բեմին համար. լաւ պիտի ըլլար եթէ յանձն առնէր աւելի արժէք ներկայացընող, լուրջ ու պատասխանատու գերեր:

Պր. Ե. Չափրաստ կնոջ Հրամաններուն տակ ճգնուած ամուսնի՝ Պր. Մանկատէնի գերով կրցաւ յանախ խնդուք

պատճառել ներկաներուն, ու լաւագոյնս արտայայտել անգոր ամուսնի հոգեվիճակը:

Յաջող էին նաև տէքորներն ու Հազուտները:

Ձի բուեր այդքանը սակայն: Անփորձ ուժերը պատասխանատուութիւն չունին, անոնք բերած են իրենց սիրողի արածագրութիւնները, մնացեալը խճաւարին, բեժագրիչին, գերուսոյցին պարտականութիւնն է: Եւ երբ ամասնալը

տկար է, նման թատերակներ չեն կրնար ոտքի կանգնել:

Դերեր սասնանած էին՝ Օր. Մարի Տիտիզեան (Քլոտէթ), Օր. Այտա Թապուրեան (Լիւսիէն), Պր. Շ. Սողիկեան (Բոպէր), Պր. Ա. Չպլաքեան (Պէրնէրէ), Պր. Լ. Հրեշտակեան (Սովինիէ), Պր. Փ. Թաւան (Իրչար) եւ Պր. Յ. Ասլանեան ծառայի գերով:

Բ. Փ.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՎԱՃՈՅՔԻ ԹԱՏՐՈՆԸ

Վերնագիրը սխալ տպարարութիւն մը պիտի գործէ ամպայման. հարցը կը վերաբերի թատերասրահի մը, որ վերջերս կառուցուած է Ֆրանսայի փլեյզմէն գիւղին մէջ. Փարիզէն ճիւղ մը հետո:

Թատերասրահի փոքր է, պիտի ունենայ 178 աթոռ միայն: Սակայն երկու բաժնով գրաւած է մեր ուշագրաւութիւնը. մալս տէրը՝ Ժան-ժազ-Ալլանեան, ապա իր սաւստուղը, որ շարժական պիտի ըլլայ:

Կարելի է ըսել, թէ Ժան-ժազ-Ալլանեան, իր բարեկամներուն հետ, գրեթէ իրենց ճեպերով է որ կառուցած են սրահը: Լին սրահ մըն է, որ երկու տարուայ յարտուեալ աշխատանք է ետք, այսօր հասած է արդէն իր աւարտին. որպէս արդիական թատերասրահ մը: Բնիկ լայնքն է 6 մ. 30, խորութիւնը՝ 5 մ. 10, ազատ բարձրութիւնը՝ 6 մէթր:

Եկեղանակն սարքաւորուող կը պարունակէ 40 լուսաբանակներ, որոնք կը ղեկավարուին աստիճանակաւ ուժգնութեան յաւելման տաք մասնաւոր գործիքներով: Սրահին խորքը, բնիկ յառաջամասէն 14 մէթր անդին, սենեակ մը սարքաւորուած է, որ բեմը ղեկավարող սենեակը պիտի ըլլայ, կապուած բեմին մերձին հեռախօսներով: Այդ սենեակին մէջ են լուսարձակներու, ձայնարձակներու, եւ սինեմայի գործիքներու ղեկավարութեան յար կառուցանքը, ինչպէս նաև առատապէս շարժումները ղեկավարող գործիքը:

Առատապէս կարելի է ցածցնել վար բեմի, շեղակի վերածել, ամկուսուոր դիրք մը տալ իրեն, ըստ ցանկացուած ձայնակաւ տպարարութեանց, այդ ալ անշուշտ ըստ խաղացրէկիւթ թատերակի պահանջներուն:

Յիշատակենք նաև, թէ Փլեյզմէնի թատրոնը իր բացումը պիտի կատարէ ուրիշ հայազգի արուեստագետի մը թատերակաւ գործով, Վահէ Քաչայի «Լա Ֆրանս» (ժողովրդականութիւն) թատերակով, որուն բեմադրիչը պիտի ըլլայ մոյնիմէն Ժան-ժազ-Ալլանեան:

ՆՐՈՒԵՍՑ

*Արուեստի եւ գրականութեան մեծարժէք շարա-
թաթերթը՝ Առ, Հետեւեալ գնահատական տողերը նը-
ւիրած է Զ. Մուքաֆեանին, այս տարուայ 16-ի հա-
մարին մէջ։-*

Յաճախ դժուարին կեանքին հակառակ, որ դույս
հանեց զինք Հայաստանէն, ուր ծնաւ 15 Մարտ
1907-ին եւ տարտ Յունաստան, ապա Իտալիա, եռուկ
յետոյ Ֆրանսա՝ Մուքաֆեան գիացաւ պատրաստել
եւ պահպանել արուեստ մը, ուր վառվառն գոյնը,
անդորրութիւնը եւ ձեւերու ուժեղութիւնը կը տիրա-
պետեն:

Եւ իրօք՝ Մուքաֆեան *թուրքստ* մըն է, գունա-
զէտ մը, ամէն բանէ առաջ, որուն համար բնութիւ-
նը, որմէ բնաւ պէտք չէ հեռանալ՝ լուսնդէն մեքըն-
չումի լաւագոյն ազրիւն է: Այդ բնութիւնը ինք չ'ու-
զեր ձեւափոխել, առնուազն չ'ուզեր գայն յեղակարգել
եւ միկնարանել երանգներու հակադրութեամբ ընդգը-
ծելով անոր ընծայած ամբողջ այլազանութիւնը եւ ե-
րեւակայութեան բոլոր հնարաւորութիւնները: Այս ի-
րողութիւնը մզած է արուեստագէտը նուիրուելու գրի-
խաւորաբար տեսարանին, եւ իր հնարաւորութեանց
սահմանին մէջ՝ դիմանկարին (փաթթրէ), համարելով
այս երկու մարզերը իրրեւ լաւագոյն գետիներ, ուր
կրնայ արուեստագէտ մը ծագկեցնել իր տաղանդը:
Ասիկա կը բացատրէ իր պատասաններուն երեւութա-
կան ձեւադրոշմ (ֆիկիւրաթիֆ) պարզութիւնը, պար-
զութիւն, որ խորքին մէջ իրականութեան խորունկ
ըմբռնումին արդիւնքն է:

Երկար տարիներէ ի վեր իր նկարները չցուցա-
դրեց Եւրոպայի մէջ, բայց կը յիշուին տակաւին
1952-ին եւ 1957-ին Փարիզի Ռից եւ Գոարտ սրահներ-
ումն մէջ իր սարքած ցուցահանդէսները: Այս չի նը-
շանակեր որ անյայտացած էր հրապարակէն, քանի որ
1962-ի ամբողջ ընթացքին ցուցադրեց իր նկարները
Միացեալ Նահանգներում մէջ, ուր կարելի եղաւ դի-
տել իր գործերը Նիւ Եորքի *Արթիսթ-Նիթըն*, Շիքա-
կոյի *Մէյն Սթրիթ Կալէրի*, Լոս Անճելըսի *Սէնթըր*
Կալէրի ցուցահանդէսներում մէջ, եւ այլուր:

Ներկայիս կը յուսայ շրջագտոյտ մը կատարել
Հարաւային Ամերիկայի մէջ:

Զ. ՄՈՒԹԱՅԵԱՆ

Իր նամբարչութիւնները կրցա՞ծ են գոնէ փոխել
նկարելու իր եղանակը: Այստեղ արարձակե՞լ: Հաւանո-
րէն գինձ անի զօտեղնա՞ծ են շարունակելու գործ
մը, որ կ'ուզէ անգիտամալ գեղագիտական մորաճեւու-
թիւնները, մնալու համար ամենաբնական մը լէշ, որ
չի նանկար յեղակարծ փոփոխութիւնները, այլ կը
հաւատայ բնապաշտ իրականութեան եւ բնկալուած
ձեւերու համադրոյթիմ միջեւ գոյութիւն ունեցող մեր-
դաշնակ հաւասարակշռութեան, որով նկարիչը կ'ա-
ռաջնորդէ դիտողը հասկնալու բնութիւնը առանց գայն
ձեւափոխելու, բայց նաեւ առանց գայն գուր տեղը
կոզգոյտելու:

ՄԱՆՐԱՎԵՊ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ԵՐԲ ԳԼԽԱՐԿԻՆ ՅՈՒՇԵՆԼՈՒՆ ԿԸ ՎՍՏԱՀԻՆ

Յ. Ժէմիեր (1869-1933) փրանսական բեմի ծանօթ դերասաններէն էր:
Բազմազարդ, բեռնաւորուած յայտագրերով, երբեմն ժամանակ չէր ունե-
նար դերը սարկելու: Կը վստահէր իր հնարամտութեան ու համարակ' բեմ
կ'ելէր:

Գորէն Պրամոնի *Փրոֆէսէօր Քլէնտլի* ներկայացման, Ժէմիեր կը
խաղար երկրորդական դեր մը, հօրը դերը, տանըմարքացի դերասան Փոլ
Ռէօմէրի կողմէն, որ կէս մը կայր, ապա ամբողջովիմ կուրցած փրօփէտօյ
Քլէմովի դերը կը խաղար:

Ժէմիեր ժամանակ չէր ունեցած դերը ամբողջովիմ սորվելու, իսկ
իր բաժինը, հակառակ կարն ըլլալուն, կ'ենակամ էր: Ընդօրինակել տը-
ւած էր մաս մը իր դերէն, կը պատմէ իր աշակերտը Աուի Սէնիէր, յնա-
նաւոր մեծութեամբ թուղթերու վրայ, որոնք կարելի էր պահել գլխարկիմ
մէջ: Գլխարկը ձեռքը բռնած պիտի ըլլար բեմիմ վրայ:

Տեսարանի ընթացքիմ, նստած գլխաւոր դերասանիմ կողմէն, Ժէմիեր
կը *կարգար* իր դերը ու ձեռնածուի մը արագաշարժութեամբ ու նարպիկու-
թեամբ կ'աննետացնէր էջերը իրար ծուռէ, վերարկուիմ գրգամը կոխելով
գանձմէ, առանց զգացնելու հանդիսատեսներուն: Օր մըն ալ սակայն, չար
բախտէն, գլխարկը կ'իյնայ ձեռքէն ու թուղթերը կը թափիմ գետիմ: Ժէ-
միեր առանց յագուելու, առանց իրար անցնելու կը սկսի հաւաքիլ թերթե-
րը, պատահարիմ յարմար նախադասութիւններ հնարելով տեղւոյն վրայ:
Կանակը ժողովուրդիմ դարձնելով, թուղթերը կրկիմ կը տեղաւարէ գլխար-
կիմ մէջ, ու տեսարանը կը շարունակուի բնականա՞ն ձեւով, առանց որ սը-
րահէն անբնականութիւն մը նշմարած ըլլան:

Ռէօմէր, ապշահար, տեղէն չի շարժիր, բնականաբար՝ քանի որ կայ-
րի մը դերը կը խաղար այդ բապէիմ:



The Watermelon And My Notorious Grandpa

ԵՂԻԱ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Բանաստեղծութեանց եւ պատմա-
ւածքներու պատիկ վրձնիկ մը՝ որ իր
տարօրինակ խորագրով իսկ կը բնորոշէ
արդէն անոր երիտասարդ հեղինակին,
Եղիա Նազդաշեանի ինքնատպութիւնն ու
գրելակերպին կլանող հաղորդականու-
թիւնը:

Ինքնատպութիւնը գրողի մը ար-
ուեստը չնշաւորող եւ ինքնուրուիւնը
հաստատող երեւոյթ մըն է, պայմանա-
ւորուած սակայն տաղանդով: Առանց
տաղանդի ինքնատպութիւնը, ինչպէս
գրական այլ առաջինութիւններ. — լեզու,
ոճ, հմտութիւն, պատմութիւն —, կը
մնան սահմանուած անցաւորի շրջագծին
մէջ եւ ժամանակակար հետաքրքրութիւն:
Նոյնիսկ համբաւ ստեղծելէ հոտք՝ կ'ան-
հետին, ձգելով իրենց ետին տմոյն եւ
անահուս անուն մը միայն:

Նազդաշեանի գործը վերծ է այս մը-
տահողութենէն: Անոր ինքնատպութիւնը
իր խառնուածքէն բխող շեշտ մըն է եւ
արտայայտիչը անոր դրողի տաղանդին:
Հակառակ անոր, որ իր գործը գնահատու-
ելով հրատարակուեցաւ Անգլիոյ Վոլ-
թրըս հրատարակչական տան կողմէ,
սակայն ըստ իս, այդ գնահատանքը չէ

որ պիտի սահմանէ Նազդաշեանի արժե-
քը, որովհետեւ նախ քան Անգլիա դիմե-
լը, Նազդաշեան արդէն կազմուած գրող
մըն էր: Անոր կազմութեան առաւելա-
բար նպաստեց Պոսթընի Արմենիքա Ռը-
վիւն, ուր անցնող հնգամեակին զառ-
նալով անոր մնայուն աշխատակիցը, ան
աստիճանաբար եւ բծախնդիր ինքնա-
սլբրադրութեամբ լոյսին բերաւ իր լա-
ւագոյն էջերը՝ Եղիա-Պաղտատ գրչա-
նունին տակ:

Նազդաշեան անգլիագիր մեր այն
դրողներէն է, որոնք կու գան Արեւելքէն:
Սերած է Ուրֆուացի ծնողքէ մը: Ծնած
եւ մեծցած Պաղտատի մէջ: Չէ տեսած
Արեւմուտքը: Անոր անմիջական միջա-
կայրը եղած է նախ իր ծնողքը — հայր,
մայր, մեծ հայր եւ բազմաթիւ զարմիկ-
ներ —, ապա Միջազգային մայրաքաղա-
քը, իր ամբողջ գիշերներով, սլացիկ ար-
մաւենիներով, հանդարտ ու խորունկ
դետով եւ դարբերու ընթացքին այդ մըլ-
տահոս գետին հանդարտութիւնն ու պար-
բերական կատարութիւնները իւրացու-
ցած ճակատադրապաշտ մարդերով: Այս
միջնորդարին մէջ սակայն, իմացական
տարօրինակ հակադրութեամբ մը, Նազ-
դաշեան իր գրականութեամբ կը յայտ-
նարերէ արեւմտեան տարկայապաշտու-
թիւն մը եւ կեանքն ու երեւոյթները վե-
րէն դիտելու կամ դատելու հոգեվիճակ
մը:

Այս տարկայապաշտութենէն կ'անց-
նի նաեւ Նազդաշեանի հայրութիւնը: Ա-
նոր համար հայրենիքի ըմբռնումը կը
մեւաւորուէ այն քաղաքով, ուր ծնած են
իր ծնողքները, իսկ հայոց պատմութիւնն

ու անոր հերոսական մարտնչումներուն հպարտանքը ոչ թէ ճակատամարտերով կամ յաղթանակներով եւ կամ գերմարդկային արարքներով կը տարազուին, այլ այն դիմադրական ոգիով, թէ ի՞նչպէս իր հայրը կամ մեծ հայրը կրցած են ապրիլ, սերնդագործել: Ամերուկ ուտել եւ քաղաքակրթութիւն ու մշակոյթ ըստեղծել, գազաններով եւ բորենիներով տիրապետուած երկրի մը մէջ:

Նազազանի քերթուածները դուրս կը մնան ընկալեալ տաղաչափական կանոններէ — առաւելարար բառերով եւ պատկերներով կ'ընդգրկէ նիւթը, միշտ պատմումի տարադին տակ՝ թաթաւուն նուրբ հիւմիւրով մը: — Այստեղ նկատուի է յաճախ բառերուն ծանրութիւնը, որուն տակ երբեմն խեղճմահ կը դառնայ քերթուածին նիւթը կամ պատմումը: Անոնցմէ շեմ, որոնք քերթուածի մը կատարելութիւնը կը պայմանաւորեն Տէր-Լանական կամ Վերլենեան երաժշտութեամբ, սակայն քերթուած մը ըլլալ արդիական կամ ոչ արդիական՝ կը պայմանաւորուի իր կառոյցին ներքին ընթացքով, պարզ բացատրութեամբ մեր մէջ

Չարենցը, մեզմէ դուրս մութմանը: Նազազանի քերթուածները, իրենց ծանր բառաթերքին հետեւանքովն իսկ զուրկ են ներքին կառոյցին ընթացքով կամ երաժշտութենէն, սակայն իր արձակը հակադիր կզրով մը կը մօտենայ կատարելութեան սահմանին:

Նազազանի իր արձակով ստեղծած է արդէն իր ոճը՝ անսթեւեթ եւ կլանող: Անոր արձակին մէջ զգալի է անմիջական հարազատութիւնն ու բնականութիւնը իր անձին՝ եւ խառնուածքին: Ըլլալով պատմումը իր արուեստին արտայայտիչ միջոցը, կը կարծեմ, թէ իր անկաշկանդ քաղուածքին կալուածը ոչ թէ բանաստեղծութիւնն է այլ արձակը: Կը մնայ, որ այդ արձակը դուրս դայ մանրապատումներու սահմանէն եւ ընդգրկէ աւելի ծաւալուն, աւելի երկարաշունչ գործեր:

Նազազանի իր ինքնատուութեամբ եւ գրողի շնչուած խառնուածքով մաս կը կազմէ արդէն մեր անվիւղիւր գրողներու լաւագոյն հոյիւն:



ԼԵՋՈՒՄԿԱՆ ԵՇՄՈՐ

ԹԻՒՐՆ ՈՒ ԹԵՐԻՆ

Գրեց Բ. ԹԱՇՆԱՆ

Որոշ թերթերու մէջ յաճախ կը կարդամ. «Հոս կեանքը սուղ է»: Եթէ «հոս» սուղ է՝ կը մտածեմ, ուրիշ տեղ մըն ալ կրնայ աժան ըլլալ: Այս ձեռով կ'ուսնենանք կրկու անհեթեթութիւն. սուղ կեանք եւ անհեթեթութիւն, իմ դիտցածս այն է, որ սուղ եւ աժան կեանքեր չկան, այլ կան սուղ եւ աժան սպորուստներ:

Այո՛, արդարեւ. կեանքը չէ որ սուղ է կամ աժան է, սպորուստն է սուղը կամ աժանը: Ուստի՛ պէտք է ըսել ու գրել. «Հոս սպորուստը սուղ է» կամ «աժան է»: Այս պարագային՝ խօսքը կը դադարի անհեթեթ ըլլալէ եւ կը դառնայ տրամաբանական:

Իրենց սխալին վրայ յամառողները կրնան առարկել, թէ Փրանսերէն ՎՅՁ բառը կը նշանակէ նաեւ սպորուստ: Բայց բառը կը նշանակէ նաեւ սպորուստ: Բայց մենք Փրանսերէն չենք գրեր, հայերէն կը գրենք. իսկ հայերէնի մէջ ուրիշ բան է կեանքը, ուրիշ բան է սպորուստը: Կըրնա՞նք ըսել. «Մարդ իր սպորուստը վրայ տուաւ»: Ո՛չ, չենք կրնար, բայց կրնանք ըսել ու գրել. «Մարդ իր կեանքը վրայ տուաւ»: Կը տեսնէք, որ նոյն բանը չեն այս երկու բառերը եւ իրարու տեղ չեն կրնար դարձածուիլ:

Այս նշումը կարգացողները հաւանաբար պիտի շարունակեն գրել. «Հոս կեանքը սուղ է»: Մտքի ծուլութեան վարժուած մարդոց համար սխալ մը ուղղելը յաճախ նոյնքան դժուար է, որքան նկարագիր փոխելը: Հինգ-վեց տարիէ ի վեր ես բուն պայքար կը մղեմ «ներս» բառին անտեղի գործածութեան դէմ, յիշատակներէն ներս, գրականութենէն ներս, արուեստէն ներս, կեանքէն ներս: Ը. սակայն այս բարբարոսութիւնը հետզհետէ աւելի կը տարածուի եւ հետզհետէ աւելի կ'արմատանայ մեր լեզուէն... ներս:

✽

Տեսած եմ, որ երբեմն իրարու տեղ կը գործածուին սա՛՛ երկու բառերը, սակաւապետ եւ սակաւապէտ: Այս բառերը նոյն իմաստը չունին սակայն: Առաջինը՝ սակաւապետ՝ կազմուած է սակաւ եւ պետ արմատներէն եւ բառ առ բառ կը նշանակէ զիչ պետ: Սակաւապետութիւն ըսելով՝ կը հասկնանք երկիր մը կամ իրաւակորդ մը, ուր զիչ թիւով պետեր կ'իջին (Փրանսերէն՝ օլիկարշի): Ըստ նոր Հայկազեան բառգիրքին՝ սակաւապետութիւն «է պետութիւն կամ էլխանութիւն սակաւաթիւ էլխանաց»:

Տարբեր իմաստ ունի սակաւապետ բառը (զիչ բանի պէտք ունեցող, զիչով գոհացող): Մէկուրեւ համար կրնանք ըսել. «Այս մարդը սակաւապէտ է», այսինքն՝ զիչ բանի պէտք ունի, զիչով կը գոհանայ: Այս բարդութեան երկրորդ արմատն է պէտ(ք). եւ որովհետեւ ք գիրը արմատական չէ, բարդումի կամ ածանցումի ատեն ԲԵՑ կը ընջուի: Նոր Հայկազեան բառգիրքին մէջ կը կարդանք. «Սակաւապէտ, որ սակաւ իրաց պէտս կամ կարիս ունի. սակաւակիր, ժուճկու, պահացող»: Նոյն բառգիրքին համաձայն՝ սակաւապետութիւն կամ սակաւապէտութիւն կը նշանակէ «սակաւուք շատանայն, շափաւորութիւն, պարկեշտութիւն կերակրոց եւ ըմպելիաց»:

Քիչ պետերով կառավարուող երկիր մը «սակաւապետ» է, բայց չի կրնար նաեւ «սակաւապէտ» ըլլալ անպատճառ...:

Կրցա՞յ հասկցնել:

✽

Կան որ կը գրեն «մինչեւ ցժա՛հ» կամ «մինչեւ ցարդ»: Սխալ մըն ալ այս է: Ծ կը նշանակէ մինչեւ. օրինակ՝ ցնոր

անօրինութիւն, այսինքն՝ մինչեւ որ նոր անօրինութիւն մը կատարուի: Յարդ կը նշանակէ մինչեւ հիմա, ինչպէս ցմահ կը նշանակէ մինչեւ մահ: Երկուքէն մէկը աւելորդ է. կա՛մ մինչեւ մահ եւ կամ ցմահ: Կա՛մ մինչեւ հիմա (արդ) եւ կամ ցարդ:

Եթէ նախընտրենք զբարբառ ձեւը, կրնանք գրել ցմահ, իսկ եթէ նախընտրութիւնը տանք աշխարհարարին, պէտք է գրենք մինչեւ մահ:

Որոշ աստութիւններ կը գրուին զբարբառ ձեւով. օրինակ՝ ցտեղութիւն, ցկատարածն աշխարհի: Մեզի խորթ կը թուի ըսել մինչեւ (նոր) աստութիւն, մինչեւ աշխարհի կատարածը (վերջը):

Ճ

Հայերէնի մէջ բառ մը կայ, զոր ես չեմ սիրեր, իմ ճաշակին յարմար չէ. այդ բառն է ձերբազատուիլ: Եստ շատեր կը գործածեն այս բառը. ես չեմ գործածեր: Պիտի ըսէք, թէ իմ չգործածելս պատճառ մըն է, որ ուրիշներ ալ չգործածեն: Այս պարագային՝ «բէ՛Քը պիտէ, ալուստ», պիտի ըսեմ ու անցնիմ:

Ձերք՝ կը նշանակէ ձեռքով (զբարբառի մէջ ձերք՝ ձեռք բառին գործիական հոլովն է). ձերբազատուիլ՝ պէտք է նշանակէ ուրեմն ձեռքով ազատիլ կամ ձեռքը ազատ: Ունինք ձերբակալել բայը (ձեռքով բռնել). ձերբազատուիլը նոյն ընտանիքին կը պատկանի:

Սակայն բայը ազատիլ է եւ ո՛չ թէ ազատուիլ, ներգործականը՝ ազատել: Սխալ է այս բային կրաւորակերպը – ազատուիլ: Կ'ըսենք փրկել – փրկուիլ, տեսնել – տեսնուիլ, չափել – չափուիլ, բայք չենք ըսեր եւ պէտք չէ ըսենք ազատուիլ: Ասանկ բայ չկայ մեր լեզուին մէջ, եթէ չեմ սխալի: Ծիլը տեղն է դիտել տալ. կրնա՞նք ըսել սխալուիլ. ո՛չ: Նոյնպէս չենք կրնար ըսել ու գրել ազատուիլ, որ կը յիշեցնէ զբազուիլ սըխալ դրեւածներ:

Պէտք կա՞յ կրկնելու. զբազուիլ, սը-

խալուիլ, ազատուիլ ձեւով չէզոք բայեր չկան մեր լեզուին մէջ. կան զբազուիլ, սխալիլ, ազատիլ:

Նոր Հայկազգեանք ունի ձերբազատ բառը, իրրեւ չչափահաս ժառանգ ոք ազատ ի ձեռանէ զաստիարակի. ինքնացեալ իշխան ընչից Հայրենեաց:

Այս բառը՝ ձերբազատուած (Քրանսերէն՝ էման սիվասիոն) «ի հնումն» կը գործածուէր ստրուկներու ազատագրութիւն իմաստով:

Վերջապէս, պազ-զաւսոկ բառ մըն է ձերբազատուիլը: Եւ միայն պազ-զաւսոկները կրնան գործածել դայն...

Սխալ բա՞ն մը ըսած եղայ նորէն:

Ճ

Թերթի մը մէջ կարդացի, «...ստրկա շնորհքի Հարուածը եղաւ իրեն Համար»:

Ի՞նչ ըսել է շնորհքի հարուած-պարզ է, Քրանսերէն քու տը կրաս-ին բառական թարգմանութիւնն է, որ իմաստ չունի Հայերէնի մէջ: Նորէն լաւ է, որ «լայնելութեան Հարուած» չէ թարգմանուած: Գու տը կրաս՝ կը նշանակէ վերջին ու վճռական Հարուած:

Օտար լեզուներու սօճերն ու յատկաբանութիւնները չկարելի չէ բառ առ բառ թարգմանել: Օրինակ մը միայն տանք. Պրանսացիները կ'ըսեն. «Բամս՞ վու լիտթէ վու». բառական թարգմանութեամբ՝ «ի՞նչպէս կը կրէք դուք ձեզ», Հայերէնը՝ «ի՞նչպէս էք»:

Ասոր պէս բան մըն է շնորհքի հարուածն ալ:

Պրանսերէնի մէջ բառեր կան, որոնք երկու իմաստ ունին. օրինակ՝ փոխան թէ՛ ներկայ կը նշանակէ եւ թէ՛ նուէր: Պիէռ միտամանակ կը նշանակէ զարեջուր եւ զազադ:

Տարիներ առաջ, մէկը թարգմանած էր. «Դիակը դրին զարեջուրի մէջ»:

Ո՞վ պիտի ուզէ, որ իր դիակը... զարեջուրի մէջ դնեն:

Բ. Թ.

«ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Պր. Սուրեն Խանամիրեան (Պէյրուս) Ս. Նշան Աղզ. վարժարանին, Ս. Յակոբ Աղզ. վարժարանին, Արամեան Աղզ. վարժարանին, Ահարամեան Աղզ. վարժարանին, Գարանթինայի Օլն. Խաչի սկումբին, Պուրճ Համուտի «Համալսարանի» մասնաճիւղին, Թրոտի սկումբին, Հայկազեան Գոլէճին, Նուպարեան Մատենադարանին (Փորթլի) եւ Սուրբ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանին (Ճրանտա) :

● Պր. Պալքեւ Կիրեղեան (Թեհրան) Մարիամեան Օրիորդաց դպրոցին (Թեհրան) :

● Տէր եւ Տիկ. Սարգիս Պալիկեան (Դամասկոս) Տէր եւ Տիկ. Սուրէն Ճիլհանէսեանի (Պէյրուս) :

● Պր. Մարտիրոս Գասպարեան (Մ. Նահանգներ) Աղբալեան վարժարանին (Շթորո) :

● Բարեկամ մը (Պէյրուս) Պր. Վահան Գուլումեանի (Շթորո-կարո) :

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք.—

Տամար Տարագրի.— (Պատմուածքներ) Եզ. Պոյաճեան, Պէյրուս, 1963:
The Watermelon and My Notorious Grandpa.—
Եղիա Նազգաշեան:

Ձեր տպագրական ամէն տեսակ գործերուն համար դիմեցէ՛ք

ՏՊԱՐԱՆ ԱՏՂԱՍ

որ սարքաւորուած է արդիական մեքենաներով եւ զոյգ տաղաշարներով :

Մասնաւորաբար կը ստանձնէ զիրքերու տպագրութիւն՝ լիբրանցի քէ արտասահմանի համար :

Մահուր եւ անթերի տպագրութիւն
հղմամբս գործ

Հասցէ.—

ՏՊԱՐԱՆ ԱՏՂԱՍ
Հեռ. 245402
Նաւակատուփ՝ 2745
Իրի տը Ծրանս
Պէյրուս - Լիբանան

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՒՆԵՂԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՄԱՀՄԱՆ 7 ՏՈՒԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌԻ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ —

DIKRAN KOUYOUMDJIAN

P. B. 587, Beyrouth — Liban